Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

«ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻՎ 1

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆ
(Ն. ՀԱՆԳՈՒՅՑ)

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հրատարակություն ՀՅԴ Բյուրոյի
երիտասարդական գրասենյակի

Երեւան 2005

ՆՎԻՐՎՈՒՄ Է
ՀՅԴ 115 ԱՄՅԱԿԻՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ
ԱՅՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

ՀՅԴ Բյուրոյի Երիտասարդական գրասենյակը սույն հրատարակությամբ հիմք է դնում «Երիտասարդական գրադարան» մատենաշարի:

Մատենաշարի նպատակն է դաշնակցական ուսանողությանն ու երիտասարդությանը զինել քաղաքական եւ կազմակերպական գիտելիքներով, նրանց ծանոթացնել դաշնակցական գաղափարական մտքին, հայացքներին ու դիրքորոշումներին եւ արդի քաղաքական աշխարհում առկա հարցերին:

Այլ խոսքով՝ սատարել դաշնակցական ուսանողության եւ երիտասարդության գաղափարաբանական ու քաղաքական մտքի բյուրեղացմանը, որպեսզի քաղաքական աշխարհի վայրիվերումների մեջ կարողանան անվարան կերպով կողմնորոշվել ու ցուցաբերել հստակ, սկզբունքային ու դաշնակցականավայել կեցվածք:

Նկատի ունենալով, որ դաշնակցական երիտասարդ մտավորականությունն է կուսակցության գաղափարական շարունակականության երաշխավորը, հույժ կարեւոր է երիտասարդների ու ուսանողների ծանոթությունը կուսակցական ավանդին:

Ահա այդտեղից է ծագում մեծանուն մտավորական Նիկոլ Աղբալյանի «Մտածումներ Հ.Յ.Դաշնակցության մասին» աշխատությունը վերահրատարակելու միտքը: Ի՞նչ է Դաշնակցությունը: Ո՞վ է դաշնակցականը: Ի՞նչ պարտականություններ ունի նա:

«...Բայց ո՞րն է Դաշնակցությունը. ոչ թե կուսակցությունը, այլ Դաշնակցությունն իր էության մէջ: Բոլոր հին ու նոր ընկերները, բոլոր հին ու նոր մարմիններն իրենց գործերով միասին կազմում են մեր կուսակցությունը: Եւ նրանք, որ նահատակված ու մեռած են վաղուց,

եւ նրանք, որ բանտ ու աքսորի մէջ են այսօր կամ ազատ գործում են աշխարհի հեռավոր կողմերում. եւ այն գործերը, որ ծրագրված են. եւ այն ձեռնարկները, որ կան, եւ այն կուսակցական կյանքը, որ եռում է ամենուր - այս ամենը մեր կուսակցությունն են կազմում...»:

Գրում է մեծ տեսաբանը:

«...Դաշնակցությունը համամիտ մարդկանց մի պատահական խմբակցություն չէ, այլ մի կազմակերպություն է. այսինքն մի մնայուն մարմին է, որ ամեն օր եւ ամեն ժամ իր գործն ունի եւ հետապնդում է իր ծրագիրը...»:

Դաշնակցությունն ունի իր գործը եւ հետապնդում է իր ծրագիրը, ուստի եւ անհրաժեշտ է, որ դաշնակցական գործը առաջ տանող երիտասարդությունը՝ Դաշնակցության վաղվա ղեկավարությունը քաջածանոթ լինի այն հիմնարար սկզբունքներին ու արժեքներին, որոնց վրա կառուցվել ու գոյատեւել է Դաշնակցությունը, որպեսզի կարողանա քաղաքական այս խայտաբղետ աշխարհում ճիշտ կողմնորոշվել:

Սույն հրատարակությունն ընդգրկում է Նիկոլ Աղբալյանի «Մտածումներ Հ.Յ.Դաշնակցության մասին»՝ (1929-1930 թ.թ)., «Մեր կանոնագիրը»՝ (1937 թ.) եւ «Կրկին մեր կանոնագիրը»՝ (1937 թ.) աշխատությունները: Նշենք, որ Աղբալյանն իր աշխատություններն ստորագրել է Ն.Հանգույց անունով:

Այս նախաձեռնությունը փորձ է՝ մեր երիտասարդությանը մատուցելու հիմնական գիտելիքներ Հ.Յ.Դաշնակցության մասին:

Պիտի փորձենք շարունակել այս աշխատանքը՝ պարբերաբար հրատարակելով ճանաչողական արժեք ներկայացնող կամ այժմեական նյութերի առնչությամբ գրքեր:

Հուսանք՝ այն կծառայի նպատակին:

ՀՅԴ Բյուրոյի
Երիտասարդական գրասենյակ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԸ

Շատ անգամ առիթ եմ ունեցած մտածելու մեր Կանոնագրին առաջին երկու կետերի մասին, որ ասումն են. «Հ. Յ. Դաշնակցության անդամ կրնա ըլլալ ամեն քաղաքացի, որ կընդունի կուսակցության ծրագիրն ու գործելակերպը, կենթարկվի անոր կանոնագրին եւ որոշումներուն եւ ամեն ջանք կթափե իրականացնելու դանոնք»: - «Յուրաքանչյուր դաշնակցական պարտավոր է մտնելով խմբի մը մեջ՝ վճարել կուսակցական տուրք Շրջանային Ժողովի որոշած սակի համաձայն»: Որքան խորամուխ եմ լինում այս հոդվածների ներքին իմաստին, այնքան ավելի համոզվում եմ, որ նրանց կանոնագրական չոր ու ցամաք խոսքերի մեջ լիովին ուրվագծված է կենդանի դաշնակցականի գաղափարական տիպարը: Շատ հրահանգիչ դաս կլիներ հետնորդների համար, եթե մեկն առներ եւ ուսումնասիրեր մեր Կանոնագրի փոփոխությունները՝ ժամանակի ընթացքին: Դա կլիներ Հ. Յ. Դաշնակցության պատմության հետաքրքրական գլուխներից մեկը, ուր պարզ կերեւար դաշնակցական ուերունդների ըմբռնումն իրենց գործի կազմակերպության եւ գործոն դաշնակցականի մասին: Ես նպատակ չունեմ այդ պատմությունն անելու: Ես կուզեի այդ հոդվածների թելադրանքները ձեւակերպել եւ դաշնակցականի գաղափարական տիպարն ուրվագծել ավելի պարզ ու մեկին, քան կարելի է տեսնել վերը բերած հոդվածների հարեւանցի ծանոթությունից, ուրիշ խոսքով՝ ես կուզեի մեկնել այդ հոդվածները, լուծել ու մանրել նրանց խտացած իմաստը:

Այսպես ուրեմն, Կանոնագիրը հինգ պահանջ է դնում ամեն մի քաղաքացու առջեւ, որ ցանկանում է անդամ դառնալ Հ. Յ. Դաշնակցության. ա) ընդունել Դաշնակցության ծրագիրն ու գործելակերպը. բ) ենթարկվել կուսակցության կանոնագրին ու որոշումներին. գ) ամեն ջանք թափել իրականացնելու «զանոնք», այսինքն կուսակցության ծրագիրը, Կանոնագիրն ու որոշումները՝ կուսակցական գործելակերպով. դ) որեւէ դաշնակցական խմբի անդամ դառնալ եւ ե) դրամական տուրք հատուցանել՝ Շրջանային Ժողովի որոշած սակի համաձայն:

Կարելի՞ է այս հինգ պահանջներից որեւէ **մեկը** կատարել եւ «դաշնակցական» համարվել. կամ կարելի՞ է նրանցից **մի քանիսը** ընդունել եւ «դաշնակցական» նկատվել: Կանոնագրի **տառն** ասում է «ո՛չ». նա հինգ պահանջ է դնում եւ հինգին եւս գոհացում պարտադրում: Իսկ ես ասում եմ. ոչ միայն Կանոնագրի տառը, այլ, մանավանդ, **ոգին** պահանջում է, որ այդ **բոլոր** պայմանները լրացվին՝ «դաշնակցական» նկատվելու համար. եւ լրացվեն ոչ թե աստիճանաբար, այսօր մեկը, վաղը մյուսը, հետեւյալ օրը մնացածը, այլ բոլորը **միաժամանակ**: Եթե մերձուստ քննության առնենք իրական կյանքի պայմանները եւ կուսակցականի կոչումն ու դերը, մենք կտեսնենք, որ ուրիշ կերպ կարելի չէ. որ ուրիշ «կերպերը» մեզ կտան թերի դաշնակցականներ, մեր շուրջը կհամախմբեն համակիրներ, գործակիցներ, օժանդակներ, բայց բնավ «դաշնակցականներ» բառի բուն իմաստով եւ կանոնագրական առումով:

Առնենք, օրինակ, առաջին պահանջը, որ ասում է ընդունել կուսակցության «ծրագիրն ու գործելակերպը»: Նախ՝ ի՞նչ է «ծրագիր» ասածը: «Ծրագիրը» մի քաղաքական-տնտեսական բնույթ ունեցող մտահղացում է, որ ունի իմացական հիմնավորում: «Ծրագիրը» նախ պատճառաբանում է, հետո այդ հիման վրա կառուցանում մի քաղաքական եւ տնտեսական կենցաղի ուրվագիծ, որի իրագործումը համարում է ցանկալի եւ հնարավոր: «Ծրագիրն», ուրեմն, մի ցնորք չէ կամ երազանք, այլ մի իրագործելի հնարավորություն: Նա արդյունք է որոշ մտածման եւ որոշ տեսչերի: Նա ենթադրում է, թե հնարավոր է հեղաշրջել տիրող քաղաքական եւ տնտեսական կացությունը եւ տեսչալի է համարում այդ հեղաշրջումը: Նա կարծում է, որ մարդկային անջատ ճիգերը կարելի է համադրել եւ այդ համադիր ճիգերով հեղաշրջում առաջ բերել տիրող կացության մեջ: Նա մի որոշ կարծիք ունի հանրային ուժերի բնական ընթացքի մասին, ինչպես նաեւ անհատական եւ խմբական կամեցողության դերի մասին: Նա կարծում է, որ հանրային կյանքի «բնական» համարված ընթացքը կարելի է շեղել եւ կազմակերպված զանգվածների գրոհի տակ՝ նոր հունով վարել. եւ այլն, եւ այլն: Մի խոսքով, նա ոչ միայն որոշ պահանջների հայտագիր է, այլեւ որոշ մտածումի հայտարար:

Արդ՝ երբ Կանոնագիրը պահանջում է ընդունել «ծրագիրը» (թողնենք առժամապես «գործելակերպը»), նա պահանջում է ոչ միայն հարել որոշ քաղաքական եւ տնտեսական պահանջների, այլ եւ որոշ մտածման: Այս հանգամանքը լավապես կպարզվի, եթե այստեղ ուրվագծենք ենթադրական թեկնածուների մի քանի տիպարներ:

«Ծրագիրն ու գործելակերպն ընդունելու» պահանջի հանդեպ կարող է երկու վերաբերում լինել. մեկը կարող է ընդունել «ծրագիրը», բայց չընդունել «գործելակերպը». եւ հակառակը — ընդունել ու հավանել «գործելակերպը», բայց մերժել «ծրագիրը»:

Իսկ «ծրագիրն» ընդունելու պահանջի հանդեպ նույնպես երկու վերաբերում կարելի է ենթադրել, մեկը, որ ընդունում է «ծրագիրն» իբր կառուցում, բայց մերժում է «մտածումը», որի արդյունքն է այդ ծրագիրը. եւ մյուսը, որ համամիտ է մտածման եղանակին եւ ընթացքին, բայց մերժում է «ծրագիրն» իբր հղացում: Այս չորս տիպարի «քաղաքացիները», որ «ընդունում են» մեր Կանոնագրի առաջին պահանջը մասամբ կամ լիովին, բայց չեն ենթարկվում կանոնագրին ու որոշումներին, անդամ չեն որեւէ խմբի, կուսակցական տուրք չեն վճարում եւ ջանք չեն թափում մեր ծրագրի, կանոնագրի եւ որոշումների յուրացման համար՝ - կարելի՞ է սրանց «դաշնակցական» համարել:

Ենթադրածս չորս տիպարները մտացածին չեն. սրանք գոյություն ունեն կյանքի մեջ եւ շատ անգամ իրենց «դաշնակցական» են ծախում: Նրանցից ա՛յն մեկը, որ ընդունում է «ծրագիրն» առանց որդեգրելու դաշնակցական մտածումը՝ իր քաղաքական — ընկերային տեսչերով մեզ հետ է, առանց մեր մտածումն ունենալու: Նա նույն կարծիքին է հայության ապագա բարեկեցության մասին, բայց նույն համոզումը չունի հանրային ուժերի զարգացման, նրանց հոսանքի շեղման, նրանց կառուցողական կարողության եւ այլ խնդիրների մասին: Նա կարող է այն հավատավոր միամիտներից մեկը լինել, որ կարծում են, թե ամեն ինչ ընթանում է ճիշտ այն ուղղությամբ, որ պետք է. եւ որ հանրային ուժերի զարգացումը ինքնաբերաբար եւ բնական ընթացքով տանում է դեպի «ծրագրի» իրացումը եւ, ուրեմն, մեր «ծրագիրը» նրա համար մի

ճշմարիտ գուշակություն է գալոց օրերի, մի նախատեսություն այն վախճանի մասին, ուր պիտի հանգի ընկերային ուժերի «բնական» խաղը: Մեր «ծրագրով» նա լուսաբանված է համարում ընկերային շարժումների ներկան եւ նրանց արդյունքի ապագան եւ, ուրեմն, որեւէ կազմակերպության եւ հավաքական ճիգի կարիքը չի տեսնում: Սա մի լավատես, երազող է: Մեր «ծրագիրը» ուրվագծում է նրա երազը միայն, առանց խթանելու նրա կամքը եւ գործի մղելու: Ամենաչասը նա կարող է համաձայնել, որ «ծրագիրը» լայնորեն քարոզվի, որպեսզի լայն զանգվածներ հույսով սպասեն... Կանոնագիրը այս տիպարնելին «դաշնակցական» չի ճանաչում եւ իրավունք ունի: Դաշնակցությունը լավատես երազողների խմբակցություն չէ, այլ հանրային պայքարի կազմակերպություն: Նա ճիգի եւ աշխատանքի կուսակցություն է, որ կարծում է, թե համադիր ճիգով ու աշխատանքով հնարավոր է կյանքի կերպարանքը փոխել՝ «ծրագրի» իրացման ճամփով: Նրա համար «ծրագիրը» մտամարզանք չէ, կամ մարգարեացում գալիք օրերի, այլ ցանկալի ապագայի հորինվածք եւ պայքարի ուղեցույց: Նա չի վստահում իրերի «բնական» ընթացքին. իր վճիռն ու կամքը նա համարում է պատմակերտ մի ազդակ, որ կարող է այդ ընթացքը փոխել:

Կամ այն մյուսը, որ համամիտ է մեզ, բայց մերժում է մեր ծրագիրը: Սա հավատում է անհատի դերին եւ զանգվածների կազմակերպած ուժին: Փոփոխելի է համարում հանրային զարգացման հունը՝ գիտակից ճիգերի ազդեցության տակ: Պատմական շարժումների հանդիսատես չէ միայն, այլ հետամուտ է իր դերը խաղալու այնտեղ եւ իր դրոշմը դնելու նրանց վրա՝ անձամբ կամ համակիր ու համամիտ ընկերների գործակցությամբ: Բայց հայության ապագան նա այլ կերպ է հորինում իր մտածման մեջ եւ այլ տենչերի իրացման է ձգտում իր ճիգով: Նա մեզ նման է իբր մտածող եւ գործող, բայց ծրագրում է ուրիշ նպատակ ու գործ: Իբր տիպար նույնանում է մեզ, իբր ազդակ զարկվում է ուրիշ ուղղությամբ: Նա կարո՞ղ է «դաշնակցական» համարվել: «Ո՛չ», ասում է Կանոնագիրը, ով չէ ընդունում Դաշնակցության ծրագիրը նա «դաշնակցական» լինել չի կարող, թեկուզ եւ մտածե իբր «դաշնակցական» եւ իբր գործող տիպար նման լինի մեզ: «Ո՛չ», ասում

եմ ես. ոչ թե «դաշնակցական», այլ հակառակորդ միայն կարող է լինել այդպիսի մեկը, որ մտքի նույն ուժով եւ մտածման նույն ուղղությամբ, կամքի նույն վճռականությամբ կոչված է հետ մղելու ինձ իբր խոչընդոտ, երբ պայքարի ճամփին հանդիպենք իրար. որովհետեւ մենք նույն տիպարներն ենք իբր մտային եւ բարոյական կառուցվածք, բայց գնում ենք դեպի տարբեր նպատակներ: Այն ուժերը, որ հենարան են ինձ՝ խոչընդոտ են նրա համար, որովհետեւ տարբեր «ծրագիրներ» հետապնդելով, մենք տարբեր գնահատություն ենք տալիս եղած ազդակներին՝ մեր «ծրագրի» իրականացման տեսակետով: Ինչ որ կարծում եմ թե պետք է պահել իբր դրական արժեք **իմ** «ծրագրի» համար, նա կարծում է, որ պետք է խորտակել իբր արգելիչ ուժ, որ խանգարում է **իր** «ծրագրի» իրացման: Մտածումի եւ տիպարի նույնությունն այսպիսով բավական չէ «դաշնակցական» լինելու համար. պետք է նաեւ «ծրագրի» նույնություն: Մի «ծրագիր» «հնարավոր» նկատել եւ «իրագործելի»՝ դեռ չի նշանակում «ցանկալի» համարել. լինել տիպար հանրային գործիչ, դեռ չի նշանակում համամիտ լինել: Հակառակորդները կարող են նույնարժեք լինել իբր բարոյական եւ մտային կառուցվածքներ, բայց դրանով չեն դադարի հակառակորդ լինելուց: Տարբեր «ծրագիրները» այդ տեսակ մարդկանց կարող են դարձնել ազնիվ եւ անողոք թշնամի, իսկ միեւնույն «ծրագիրը» - անձնվեր ընկեր:

Իսկ այն երրորդը, որ ընդունում է մեր «ծրագիրն» ամբողջովին, բայց մերժում է «գործելակերպը». այսինքն իր մտածումը նման է մերինին, ընկերային շարժումների մասին նույն կարծիքն ունի, պատմական անցյալին նույն գնահատությունն է տալիս եւ ապագայի հանդեպ նույն տենչերն է սնուցանում իր հոգում, բայց չի կարծում, որ հնարավոր է այդ ցանկալի «ծրագիրն» իրացնել մեր ընտրած ճամփով: Որովհետեւ ի՞նչ է «գործելակերպը», եթե ոչ գործելու այն եղանակները, որ տանում են դեպի որեւէ նպատակի իրացում: Դաշնակցական թեկնածության այս տիպարը համամիտ է մեզ եւ համատենչ: Նա կարող է պաշտպանել մեր տեսակետները եւ ապագայի մեր կառուցումը իբր տեսական խնդիրներ, բայց դժգոհ կմնա մեր գործի հանդեպ: Նրա բանաձեւն է. «պետք է ձգտել

«ծրագրին», անշուշտ այդ «ծրագիրն» ամենից ավելի լավ է լուծում Հայության կյանքի բոլոր հիմնական հարցերը, բայց այդ կարգի գործերով չէ, որ կարելի է հասնել «մեր նպատակին»: - Ուրիշ խոսքով նա ինձ հետ է, քանի դեռ գնահատում եմ ներկան եւ հորինում ապագան իբր մտահղացում, բայց թողնում է ինձ մենակ, երբ ես ծրագրից ու խոսքից անցնում եմ գործի: Նա երազող մեկը չէ, եւ ոչ անտարբեր է հանրության բախտին, բայց նա ինձ հետ չէ պայքարի ճամփին: Նա կարող է շատ օգտակար գործեր կատարել, որ նպաստավոր դառնան **իմ** աշխատանքին, բայց նա իմ գործը չէ, որ կատարում է: Լավագույն դեպքում նա գործնապես դեմ չէ ինձ. դուցե դեմ լիներ, եթե կարենար, համարելով իմ գործը չարիք: Բայց նա զատ է ինձանից. իմ ընկերը չէ: Նա կարող է լավ հայ լինել եւ ընկերավար մտածում ու տենչեր ունենալ, բայց կարծել, որ ընկերվար ծրագրի հասնել կարելի է ոչ հեղափոխական գործելակերպով: Նա կարող է կողմնակից լինել «Միացյալ եւ անկախ ընկերվար Հայաստանի» ստեղծումին, բայց մտածել, որ դա հնարավոր է միմիայն «դիվանագիտական» ճամփով կամ որեւէ ուրիշ եղանակով, սակայն, բնավ դաշնակցական գործելակերպով: Կարելի՞ է այս տեսակ մեկին «դաշնակցական» համարել: Կանոնագիրն ասում է. «ո՛չ»: Նա, որ մտածում է ինձ նման, ծրագրում է ապագան ինձ պես, ընդունում է անհատի եւ զանգվածների ազդեցությունը պատմական իրադարձությանց ընթացքի վրա, բայց կուսակից է հոլովութական գործունեության եւ հակառակ հեղաշրջական գործելակերպի, նա կարող էր դուցե լավագույն անդամներից մեկը լինել՝ Հայ Դաշնակցության, բայց բնավ անդամ Հայ **Յեղափոխական** Դաշնակցության: Ամենաշատը նա կարող է մեր գաղափարական համակիրների շարքում տեղ բռնել, բայց մեր բուն գործին մասնակից լինել չի կարող: Մինչդեռ Կանոնագիրը «դաշնակցական» է ճանաչում այն մարդուն, որ ոչ միայն նույն մտածումն ու ծրագիրն ունի, այլեւ նույն գործելակերպը: Դեռ չեմ ասում, որ այդքանն իսկ բավական չէ նկատում «դաշնակցական» կոչումը մեկին տալու համար. դեռ պետք է ենթարկվել Կանոնագրին ու որոշումներին, կուսակցական տուրք վճարել եւ այլն: Պետք է այսպիսով «համամիտը» տարբերել «անդամից»: Համամիտը գործակից եւ ընկեր չէ. նա պարզապես համամիտ է: Նա

քեզ հետ չէ պայքարի ծանր օրերին եւ պատասխանատվության բաժին չունի քո գործում: Նա մտածում ու ծրագրում է քեզ նման, բայց իր գործով զատ է քեզանից:

Վերջին թեկնածուն այն մեկն է, որ ընդունում է «գործելակերպը», բայց մերժում է «ծրագիրը»: «Ընդունել» բառն երկու միտք ունի. կարելի է գործելակերպը ընդունել տեսապես, իբր մի խնդրի լուծում , եւ գործնապես՝ իբր հարկադրանք: Մշակվում է մի «ծրագիր». ենթադրվում է, որ այդ ծրագիրն իրագործելի է: Հարց է դրվում.- ի՞նչ ճամփով կարելի է իրացնել այս գործադրելի ծրագիրը: Մեկը կարող է այս հարցը լուծել իբր տեսական խնդիր. ուշադրության առնել հանրային գործունեության արտաքին պայմանները, ճանաչել ու գնահատել գործոն ուժերի չափն ու կշիռը եւ գալ այն եզրակացության, որ մշակած ծրագիրը կարելի է իրացնել հեղափոխական գործելակերպով: Կարող է այսպես լուծել խնդիրը եւ ... տեղը նստել: Սա նույնպես գործելակերպ «ընդունել» կնշանակե. այսինքն համամիտ լինել, որ այո՛, այս ինչ նպաստակին **կարելի է** հասնել այս ինչ ձեւի գործելակերպով: Հասկանալի է, որ Կանոնագիրն այս տեսակ «ընդունողներին» «դաշնակցական» ճանաչել չի կարող: Նա պահանջում է ոչ միայն ընդունել մեր ծրագիրն ու գործելակերպը, այլ եւ «ամեն ջանք թափել իրականացնելու զանոնք»: Ուրեմն, Կանոնագիրը ոչ թե որոնում է տեսական լուծումների ընդունակ անդամներ, այլ գործնական ուղիներով աշխատող ընկերներ: Այս տիպարի թեկնածուն նման է «համամիտ» դաշնակցական թեկնածուներին այն տարբերությամբ, որ նրանք «ընդունում են» «ծրագիրը», իսկ սրանք «գործելակերպը»: Բայց նրանք այն առավելությունն ունեն, որ աշխատում են նույն «ծրագրի» օրտին թեեւ տարբեր գործելակերպով, մինչդեռ սրանք միայն վկայում են մեր որդեգրած գործելակերպի ճշմարտությունը, առանց մտահոգ լինելու ոչ «ծրագրով», ոչ նրա իրացման ճակատագրով: Սրանք «կարծիք» ունեն, առանց «գործ» ունենալու: Սրանք կարող են մեզ գնահատել, համարելով հանրային «ծրագրի» իրացման տանող չիտակ ուղիները գծողներ, առանց, սակայն, ներքուստ ապրելու մեր պայքարի տառապանքն ու վայելքը եւ առանց մասնակցելու մեր գործին ու պատասխանատվության:

Բայց կան ուրիշ տիպարներ, որ ընդունում են «գործելակերպը» ոչ իբր հանրային գործունեության տեսական լուծում, այլ իբր գործնական պարտադրանք. այսինքն ոչ միայն գործելու մեր կերպը համարում են շիտակ ու նպատակահարմար, այլ եւ պարտադիր իրենց համար: Այս տիպարները երկու տեսակ են. մեկն այն է, որ մեր «ծրագիրը» թեեւ չի ընդունում լիովին, բայց տենչացող է այնպիսի կարգերի, որ մեր «ծրագրի» մի մասն են կազմում: Կուզեր օրինակ, Միացյալ Հայաստան, բայց ոչ անկախ, համարելով անկախությունն անհնարին կամ անցանկալի. կամ կողմնակից է Միացյալ եւ Անկախ Հայաստանի, բայց դեմ է ընկերվար կարգերին. կամ գոհ կլիներ լայն ռամկավար կարգերի՝ առանց անկախության ու միացման, եւ այլն: Միաժամանակ, «գործելակերպի» վերաբերմամբ նա մեր տեսակետն ունի, այսինքն կարծում է, որ այդ ամենին կարելի է հասնել հեղափոխական ճանապարհով: Ուրեմն, նա հեղափոխական է իր գործով եւ հետամուտ է հեղաշրջական նպատակների, բայց դեմ է մեր ծրագրի ամբողջության: Կարո՞ղ է այսպիսի մեկը դաշնակցական համարվել: Կանոնագրի տառին նայելով պետք է ասենք՝- «ո՛չ»: Նաեւ ոգին ժխտական պատասխան է տալիս: Իսկ եթե նա կազմակերպության անդամ է, տուրք է վճարում եւ ենթարկվում է կանոնագրին. այսքանը բա՞վ է, որ նա ճանաչվի «դաշնակցական».- «Ո՛չ», ասում է Կանոնագիրը. նա պետք է ենթարկվի նաեւ կուսակցության որոշումներին, եւ «ամեն կերպ աշխատե իրականացնել զանոնք»: Իսկ այդ որոշումները կարող են վերաբերել «ծրագրի» ա՛յն կետերին, որ ինքը չի ընդունում եւ, ուրեմն, նրանց իրացման համար «ամեն ջանք թափել» չի կարող: Ստեղծվում է մի կեղծ կացություն: Մենք ստանում ենք ոչ թե կարգապահ ընկեր, այլ անհնազանդ մի դաշնակցական: Այսպիսի մեկը կարող է ուղեկից լինել մեզ եւ գործակցել մինչեւ մի որոշ տեղ եւ մինչեւ մի որոշ ժամանակ: Նա կարող է մեզ սրտանց համակիր լինել եւ օժանդակ, քանի դեռ պայքարում ենք մեր ծրագրի իր ընդունած կետերի համար: Բայց կյանքի մեջ հաճախ են պատահում առիթներ, երբ հետապնդում ենք նույն ծրագրի ուրիշ կետերը. այն ժամանակ նա դադարում է ներքուստ մեզ հետ լինելուց: Նրա համար Դաշնակցությունը մի կազմակերպություն է, որին

մասնակցելով կարող է ծառայել **իր** գաղափարներին: Այսպիսով նա գատում է իրեն կուսակցությունից եւ հարում է նրան **իր** գործի համար: Դաշնակցության գործերի տեսակից է կախված նրա գործակցությունը: Նա ոչ թե տան անդամ է համարում իրեն, այլ հյուր մի տեսակ: Նա ոչ թե իր անձն ու կորովը տրամադրում է Դաշնակցության, այլ օգտագործում է Դաշնակցությունը իր հանրային նպատակներին հասնելու համար: Նա շատ բանի մեջ համամիտ է մեզ, բայց ոչ մեր բոլոր որոշումները համարում է պարտադիր. եւ այնքան ժամանակ գործակից է մեզ, որքան ժամանակ համամիտ է մեզ: Շատ կլիներ ասել թե նա մեր դաշնակիցն է. եւ այնքան վստահելի, որքան **իր** հավանած գործն ենք կատարում եւ այնքան անտարբեր, չասենք հակառակ, որքան հետամուտ ենք մեր ծրագրի **իր** չհավանած կետերին:

Սրանց համակրանքն ու աջակցությունը ընտրանքով է, ոչ անվերապահ: Սրանց չի կարելի վստահել կուսակցությունը. որովհետեւ նրանք զոդված չեն «ծրագրի» նույնությամբ, այլ կապված են այս կամ այն «գործով»: Այդ «գործն» իր կատարման համար կարող է տարիներ պահանջել, եւ սրանք մեզ հետ կլինեն տարիներ շարունակ ու մեր կողքին կկատարեն իրենց պարտականությունը կուսակցության հանդեպ, որ հնար ունենան նրա միջոցով ծառայելու **իրենց** նախընտրած եւ դերադասած խնդիրների լուծման: Այդ «գործը», սակայն կարող է մի հերթական խնդիր լինել, մի «Հայ – թաթարական ընդհարում», մի եկեղեցական կալվածների գրավում, որ կարող է տեւել համեմատաբար կարճ ժամանակ: Այս կարգի տիպարներն այդ օրերին դունդադունդ մտնում են կազմակերպության մեջ. քանի որ համամիտ են կուսակցության եւ՛ գործին եւ՛ գործելակերպին: Կանոնագիրն իմաստությամբ նախատեսած է այս ամենը եւ՝ նա զլանում է «դաշնակցականի» կոչումը այս կարգի մարդկանց, որոնք ոչ թե անդամ են դաշնակցական մեծ ընտանիքի, այլ հյուրեր են նրա կոչունքին: Վերջանում է գինարբուքը, մարում են ջահերը, եւ նրանք քաշվում են իրենց տները, բոլոր թրմացքն ու մնացորդները թողնելով տան տերերին մաքրելու... Սրանք հուշակ ու փառք են ստեղծում Դաշնակցության եւ իրենց համար, բայց Դաշնակցության պահանջները չեն եւ լինել չեն

կարող. որովհետեւ կուսակցությունը ոչ թե նրանց տունն է, այլ նրանց գործ հայթայթողը: Նրանք «ծրագրով» չեն կապված, այլ գործելակերպով կամ «մի քանի» գործերով: Նրանք լավագույնն են համակիրներից, որովհետեւ ոչ թե խոսքով, այլ գործով են համակիր. բայց նրանք կուսակցական չեն բառի կանոնագրական առումով: Լիովին ընդունելով «գործելակերպը», նրանք մասամբ միայն ընդունում են «ծրագիրը». իսկ Կանոնագիրն ասում է. դաշնակցական կարող է լինել նա, որ ընդունում է կուսակցության ծրագիրն ու գործելակերպը ոչ թե ընտրանոք, այլ լիովին:

Գործելակերպն ընդունողների մյուս տիպարը շատ ուշադիր չէ «ծրագրին». մինչեւ իսկ բնավ մտահոգ չէ այն մասին թե կա՞ «ծրագիր»: Նա ընդունում է գործելակերպը ոչ թե նրա համար, որ նա տանում է դեպի մի որոշ ծրագրի գործադրություն, այլ որովհետեւ գործելու այդ կերպը դյուր է իր սրտին: Նրա համար «ծրագիրը» անարժեք է կամ սակավարժեք, գործն է նրան գրավում եւ գործելու եղանակը: «Դաշնակցական» գործը նա համարում է եռանդի սպառման մի միջոց, իսկ գործելու կերպը հարմար իր խառնվածքին: Նա ոչ թե հեղափոխական նպատակներ ունի, այլ հեղափոխական խառնվածք: Եթե «հեղափոխական» գործեր կատարելու համար թատերական տոմսի հետ անհրաժեշտ է, որը մեկը ծրագիր ընդունի, կանոնագրի որոշումների ենթարկվի եւ մինչեւ իսկ տուրք վճարե – նա պատրաստ է սիրով. բայց այդ ամենը անկարեւոր են նրա համար. կարեւորը «գործն» է եւ գործելու եղանակը – մի ահաբեկում, մի արշավանք, ծպտված փախուստներ ոստիկանական հետապնդումից, ազատ կյանք լեռների վրա՝ արկածավոր եւ վտանգալից – սրա՛նք են նրան գրավում: Այս «գործերն» անելու համար, ա՛յս կյանքն ապրելու համար արժե, որ մարդ «դաշնակցական» գրվի եւ «ծրագիր», Կանոնագիր ու որոշումներ ընդունի: Սա մի ուրույն տիպար է. մի մարզական, որ վտանգի եւ արկածի ճաշակն ունի եւ հաճույք է զգում կյանքի հետ խաղալով: Սովորաբար սրանք խիզախ ռազմիկներ են, համարձակ ահաբեկիչներ, հավատարիմ ընկերներ եւ կարգապահ զինվորներ, պատրաստակամ՝ վտանգավոր գործերի համար: Ակնածում են կուսակցական մարմիններից ու ղեկավարներից, բայց սիրում են իրենց ընկերներին. իրենց մտքի մեջ նրա՛նք են «իսկական դաշնակցականները». մյուսներն՝ ա՛յնպես... Կարելի՞ է սրանց «դաշնակցական» համարել: Լեզուս չի դառնում, որ ասեմ թէ՝ - «ո՛չ»: Բայց Կանոնագիրը ասում է համարձակ, «ո՛չ»: Եվ իրավունք ունի, եթե լավ մտածենք: Սրանք «գործ» են որոնում եւ թալկանում են առանց «գործերի»: «Անգործության» շրջաններում նրանց թվում է, որ Դաշնակցությունը մեռավ. քաշվում են մի կողմ, քրթմնջում են շարունակ եւ խոսում են կուսակցական կյանքի չքացման մասին: Կամ դառնում են արկածախնդիր, ստեղծում են «գործեր», այս անգամ ոչ կուսակցական: Որովհետեւ նրանք կապված էին «գործով» եւ ոչ «ծրագրով», այսինքն ոչ իրենց մտածումով ու հեռավոր նպատակներով: Դադրում է «գործը», դադրում են եւ կուսակցական կապերը. մնում է միայն ընկերների սերն ու հիշատակը: Պետք է մի կուսակցություն լինի, «գործեր» ձեռնարկե, որ նրանք հանդես գան: Պետք է մեկը նպաստավոր ծրագիրներ մշակե՝ նրանց գործոն խառնվածքին կեր տալու համար: Նրանք կուսակցական չեն բառի բուն առումով, բայց կուսակցության լավագույն աջակիցն են ու գործակիցը: Այս կարգի տիպարները չեն որ կուսակցություն են ստեղծում ու պահում, բայց նրանց գործակցությամբ է, որ կուսակցությունը դեր է խաղում եւ մեծանում: Սրանք «դաշնակցական» չեն հարատեւության տեսակետով, բայց «դաշնակցականն» իր գործի մեջ պետք է սրանց նման լինի, սրանց պես խիզախ, համարձակ, ընկերասեր, անձնվեր:

Թե նրանք, որ «ծրագիրը» մասամբ են ընդունում, բայց լիովին հարում են գործելակերպին եւ թե նրանք, որ «ծրագրին» կարեւորություն չեն տալիս, այլ միայն «գործելակերպն» են որդեգրում՝ - որոշ տեսակետով նման են իրար՝ Դաշնակցության հանդեպ ունեցած վերաբերումով: Մեկն ուզում է «դաշնակցական» դառնալ, կազմակերպության ուժին կոթնած՝ իր հանրային նպատակներին ծառայելու համար, մյուսն ուզում է «դաշնակցական» համարվել իր հեղափոխական խառնվածքին ճարակ գտնելու համար: Ոչ մեկը եւ ոչ մյուսը «դաշնակցական» չեն դառնում կուսակցության «ծրագրի» համար, բայց երկուսն էլ կողմնակից են միայն «գործելակերպին եւ որոշ «գործերին»: Ոչ թե գալիս են ամեն ինչ զոհե-

լու կուսակցության նպատակներին, այլ ամեն ինչ առնելու իրենց նպատակների համար – մեկը՝ հանրային, մյուսը՝ ղեկացական: Այն ուրիշ խնդիր է, որ թե մեկի եւ թե մյուսի «գործերից» շահում է կուսակցությունը, ծավալում է կազմակերպությունը, մեծանում է ազդեցությունը, բայց սրանք չեն եկած այդ արդյունքին հասնելու համար: Եթե գոնվի մի ուրիշ զորավոր կազմակերպություն, որ նույն կարգի «գործեր» ձեռնարկե՝ նրանք **կարող** են թողնել Դաշնակցությունը եւ հարել նոր խմբակցության. որովհետեւ նրանց որոշ նպատակներ եւ որոշ գործեր են հետաքրքրում եւ որոշ գործելակերպ. եւ ոչ թե կուսակցության «ծրագիրն» ամբողջովին կամ կուսակցության դերը մեր կյանքում: Նրանք կարող են լինել եռանդուն եւ անձնվեր գործիչներ, կազմակերպության կարգապահ անդամներ, հոչակ վաստակել անձամբ եւ փառք բերել կուսակցության, բայց մինչեւ այն ժամանակ քանի դեռ մեզ հետ են. քանի դեռ մենք **իրենց** հավանած նպատակներին ենք հետամուտ եւ **իրենց** նախասիրած «գործերն» ենք անում: Բայց երբ հետապնդվում են նպատակներ, որ ծրագրային են, բայց իրենցը չեն, կամ կատարվում են «գործեր, որ անհրաժեշտ են, բայց դյուր չեն իրենց խառնվածքին՝ վերաբերումը փոխվում է. որովհետեւ նրանց համար «ծրագիրն» իր ամբողջությամբ եւ «գործերն» իրենց բոլոր տեսակներով պարտադիր չեն: Ինչպես տեսնում եք. չկա «դաշնակցական» առանց **ամբողջական** «ծրագրի». կան եւ կարող են լինել Դաշնակցության աջակիցներ:

Իսկ նրանք, որ «ծրագիր» են ընդունում առանց «գործելակերպի», կամ «գործելակերպ» են ընդունում առանց պարտադրանքի – նրանք նույնպես որոշ տեսակետով նման են իրար: Նրանք տեսական համակրանք ունեն, առանց գործնական աջակցության: Նրանց գոհացնում է մեր «ծրագիրը» իբր որոշ տենչերի ձեւակերպություն եւ մեր «գործելակերպը» իբր որոշ նպատակների հասցնող, բայց իրա՛նք են որ չեն գոհացնում մեր Կանոնագրի պահանջները: Որովհետեւ կուսակցությունը տեսական մտածումի մարզավայր չէ, այլ հանրային գործերի աշխատանոց. «ծրագիրն» ու «գործելակերպը» մտային վայելքի առարկաներ չեն՝ իբր հորինվածք ու խնդրի լուծում, այլ գործնական կյանքի պարտադրանք

են՝ իբր նպատակ եւ վարմունքի կանոն: Բավական չէ մտովին համամիտ լինել «ծրագրին» ու «գործելակերպին», որ մարդ համարվի «դաշնակցական». պետք է նաեւ գործնապես աշխատել այդ «ծրագրի» իրացման համար, եւ «դաշնակցական գործելակերպով»: Ինչպես տեսնում եք, չկա «դաշնակցական» **միմիայն** «ծրագրով» ու տեսական «գործելակերպով». կան եւ կարող են լինել Դաշնակցության ծրագրին ու գործելակերպին համակիր մարդիկ:

Այսպես՝ քննելով դաշնակցական թեկնածուների այլազան տիպարներ, որ ընդունում են մեր Կանոնագրի առաջին պահանջը - «ծրագիրն ու գործելակերպը», մենք տեսնում ենք, որ միմիայն **մի** պահանջին գոհացում տալով որեւէ քաղաքացի «դաշնակցական» դառնալ չի կարող: «Գործը» պետք է, որոշ «ծրագրի» հասնելու համար. «ծրագիրը» պետք է գործերին իմաստ տալու համար: «Գործեր» կատարել, առանց «ծրագիր» հետապնդելու եւ «ծրագիր» դավանել, առանց «գործերով» իրացնելու՝ երկուսն եւս «դաշնակցական» վերաբերում չէ կյանքին: Հեղափոխական նպատակներ ունենալ առանց հեղափոխական գործելակերպի. կամ դաշնակցական գործելակերպ որդեգրել առանց դաշնակցական ծրագրի՝ նույնպես «դաշնակցական» վերաբերում չեն կյանքին: Նա որ կամենում է դաշնակցական լինել՝ անխուսափորեն պետք է դաշնակցական ծրագիր եւ գործելակերպ որդեգրե՝ անվերապահ եւ լիովին: Ու պետք է նաեւ, որ դաշնակցական մտայնություն ունենա, քանի որ՝ թեեւ տարամիտ մարդիկ կարող են միատեսակ նպատակներ ու գործ ունենալ, բայց ոչ միշտ նույն նպատակներն ու միշտ նույն գործը: Նրանք կարող են մինչեւ մի որոշ տեղ եւ մինչեւ որոշ ժամանակ իրար հետ գնալ, բայց այնուհետեւ անխուսափորեն պիտի շեղեն իրենց ուղին, քանի որ նրանց առաջնորդում է ո՛չ նույն մտածումը: Մի քանի գործեր միայն բերում են նրանց իրար մոտ: Եթե կուսակցության մեջ զորավոր տարր չկազմեն այն անդամները, որ կապված են իրար միեւնույն «ծրագրով» եւ որդեգրած են միեւնույն «գործելակերպը» - որ ասել է թե նույն մտայնությունն ունին – Դաշնակցությունը կդառնա տարբեր դավանանք ունեցող մարդկանց մի խմբակցություն, որ չունենալով գործունեության միեւնույն տենչերը՝ շուտով կշեղի իր ճամփան եւ դյուրավ կերթա

դեպի քայքայում: Այստեղ օգնել չի կարող մինչեւ իսկ այն պարագան, եթե բոլոր տարամիտ անդամները ենթարկվեն կուսակցության միեւնույն կանոնագրին ու որոշումներին: Որովհետեւ Դաշնակցության կանոնագրին ու որոշումներին ենթարկվել՝ դեռ չի նշանակում «դաշնակցական» լինել: Կանոնագիր ու որոշում արդյունք են մի որոշ մտայնության: Կանոնագիրը կազմվում է որոշ «ծրագիր» հետապնդելու համար եւ որոշումներ կայացվում են նույն նպատակով: Բավական չէ դաշնակցական Կանոնագրի ենթարկվիլ եւ դաշնակցական որոշումներ իրագործել, պետք է կարողանալ դաշնակցական Կանոնագիր մշակել եւ դաշնակցական որոշումներ կայացնել, իսկ սրա համար պետք է դաշնակցական մտայնություն ունենալ եւ Դաշնակցության «ծրագիրն» ընդունել: Որ կողմ եւ դառնանք, մենք տեսնում ենք, որ «դաշնակցական» կոչվելու համար նախ անհրաժեշտ է ընդունել Դաշնակցության ծրագիրն ու գործելակերպը՝ անվերապահ եւ լիովին:

Ընդունենք հիմա, որ մեր թեկնածուն լիովին համամիտ է մեզ ու անվերապահ ընդունում է Դաշնակցության ծրագիրն ու գործելակերպը: Տեսանք, որ այսքանը բավական չէ «դաշնակցական» կոչվելու համար: Պետք է գոհացում տալ եւ մյուս պահանջին, որ ասում է. «ենթարկվիլ Կանոնագրին եւ որոշումներուն»: Ուրեմն, ոչ թե «ընդունել» տեսաբար, այլ ենթարկվիլ գործնապես. որովհետեւ Դաշնակցությունը գործի կազմակերպություն է. մի գործ, որ կատարվում է միասնական աշխատանքով. այսինքն զատ-զատ ճիգերի համադրությամբ եւ մի որոշ ուղղությամբ՝ մի որոշ նպատակի հասնելու համար: Արդ՝ ճիգերի այդ համադրությունը ենթադրում է կախումներ մարմինների եւ սոսկական անդամների միջեւ - թե՛ իրար հանդեպ եւ թե՛ իրար մեջ – ընկեր ընկերի եւ մարմին մարմնի հետ եւ ընկեր ու մարմին իրար հետ: Այդ կախումները բարոյական հանձնառություններ են, որ իրավական ուժ են ստանում գործի ընթացքին: Մյուս կողմից «գործերը» կատարվում են իրավասու մարմինների վճռով եւ ընկերների ձեռքով: Մարմինների որոշումները պարտադիր են ենթակա ընկերների համար: Չի կարող գոյություն պահել մի կազմակերպություն, ուր ամեն ոք ինքն է որոշում իր անելիքն ու իր կախումը: Սա կլիներ

անիշխանություն եւ անկարգություն. ամբոխ եւ ոչ թե կազմակերպություն. եւ այդ իսկ պատճառով ենթակա ամեն տեսակ քայքայման եւ անատակ որեւէ նպատակ հետապնդելու: Ընդունել ծրագիր ու գործելակերպ, բայց գործել ու որոշել անջատորեն իբր «ազատ» քաղաքացի, իբր «անկախ» միավոր – սա անարժեք է կուսակցական տեսակետից: Եվ «դաշնակցական» համարվել չի կարող մեկը, որ այս ըմբռնումն ունի հանրային գործերի մասին: Սրանք անձնապաստան մեծամիտներ են, որ հավակնություն ունին կուսակցական «ամբոխն» իրենց հետեւից քաշելու, կամ պատահական ուղեկիցներ են, որ խառնվում են գործակատար «ամբոխին»: Լավագույն դեպքում սրանք առժամյա գործակիցներ են, ինչպես անցորդը, որ օգնում է կառքը շրջած կառապանին: Բայց կառապանն իր ճամփան ունի եւ իր նպատակը, անցորդն՝ իր ճամփան: Այս տեսակ անկազմակերպ ուժերը, որքան եւ համակիր ու համամիտ լինեն մեզ, անարժեք են կուսակցական տեսակետով, եթե մինչեւ իսկ հազարների հասնեն: Դրանք չեն կարող կուսակցության հենարան լինել, քանի որ կապված չեն իրար կանոնագրապես եւ ենթակա չեն միեւնույն որոշումներին: Ինքնաբավ անհատներ են, ազատ ու անկախ, եւ այդ իսկ պատճառով իրարամերժ: Նրանք գերադասում են իրենց կարծիքը ընկերների որոշումներից եւ իրենց կամքը՝ որոշումների պարտադրանքից: Հնազանդիլը նրանց թվում է «ստրկություն» եւ կարգապահությունը՝ «տափակություն»: Ճկում են գլուխը գերազանց անհատական ուժի առջեւ, ծառանում են հավասարի դեմ՝ ստեղծելով կագ ու կռիվ, եւ բռնանում են թույլերի վրա եւ իրենց քմայքը օրենք հռչակում: Սրանք ըմբոստ անդամներն են կազմակերպության, եթե մտած են արդեն շարքերը եւ անխուսավելի տարերքն են մասնակի մարմինների քայքայման եւ ընդհանուր կուսակցության պառակտման: Եվ Կանոնագիրն իրավամբ պահանջում է – դեռեւս Դաշնակցության շեմքը չկոխած – որ թեկնածուն հանձնառու լինի ենթարկվելու կուսակցության «Կանոնագրին եւ որոշումներուն». այսինքն պատրաստ լինի հրաժարվելու իր «կարծիքից» ու «կամքից» ընկերների մշակած կարծիքն ու կամքը որդեգրելու համար. մեկը տարածելու եւ մյուսը՝ գործադրելու: Այլապես նա հրաժարվում է «դաշնակցական» կոչումը

տալ այդպիսի մեկին, թեկուզ եւ նա ընդունի մեր ծրագիրն ու գործելակերպը լիովին եւ նույն մտայնությունն ունենա ինչ որ մենք:

Սրանով, սակայն չի վերջանում Կանոնագրի պահանջը մեր թեկնածուներից: Բավական չէ նույն ծրագիրն ու գործելակերպն ունենալ եւ նույն Կանոնագրին ու որոշումներին ենթարկվել: Կանոնագիրը պահանջում է նաեւ «ամեն ջանք թափել իրականացնելու զանոնք»: Սա մի հիմնական պահանջ է: Կանոնագիրը գործոն անդամին է չնորհում «դաշնակցական» կոչումը եւ ոչ կրավորական ենթակային: Նա հնազանդություն է պահանջում Կանոնագրին եւ որոշումներին ոչ թե անդամների կորովը մեռցնելու համար, այլ նրանց աշխատանքը ընդհանուրի որոշած հունով վարելու համար: Որովհետեւ Դաշնակցությունը ոչ թե կրավոր անձերի խմբակցություն է՝ ենթակա զորավոր անհատների կամեցողության, այլ գործոն անդամների կազմակեպություն է՝ Կանոնագիր եւ որոշումներ «ընդունող»: Դաշնակցականը ոչ թե հլու հնազանդ է Կանոնագրի եւ որոշումների, այլ նա «ընդունում» է Կանոնագիր ու որոշում. այսինքն հնազանդում է գիտակցաբար եւ դարձնում է նրանց իր ներքին խթանը, որով իր «հնազանդությունը» դառնում է «համամտություն» եւ իր գործը «անձնական», «սեփական» կամքի գործադրություն: Նա դառնում է «համակամ» իր ընկերներին եւ ոչ թե «հնազանդ» սրան կամ նրան: Նա կատարում է որոշումները, որովհետեւ համոզումով հարում է նրանց ու հնազանդում է Կանոնագրին, որովհետեւ «համարում է» անհրաժեշտ: Այս պատճառով նրա հնազանդությունը ստրկամտություն չէ, այլ ինքնատիր պարտադրանք: Նա գիտակցաբար լուծ է դնում իր վզին, հանրային գործի սայլը քաշելու համար. եւ պիտի քաշե «ամեն ջանք թափելով», այլապես «դաշնակցական» կոչվելու արժանի չէ: Այդպես է հրամայում Կանոնագիրը եւ ա՛յդ հանձնառության հիման վրա նա թեկնածուին «դաշնակցական» անունն է տալիս:

Ավելորդ է խոսել այն տիպարների մասին, որ Կանոնագիր ու որոշումներ «ընդունում են» միայն տեսապես, առանց գործնական հարկադրանքի. որ այդ ամենը լավ են համարում եւ նպատակահարմար իբր գործնական խնդիրների տեսական լուծումներ, բայց ոչ

պարտադիր իրենց համար: Սրանք չեն կարող «դաշնակցական» նկատվիլ, որովհետեւ ընդունել Ծրագիր, Կանոնագիր ու որոշումներ եւ ջանք չթափել նրանց իրացման համար, դա մի մտամարզանք կլիներ, ոչինչ ավելի: Այս կարգի անդամներով կուսակցությունը կդառնար բարյացակամ երազողների մի խմբակցություն եւ ոչ թե քաղաքական մի ազդակ: Դա կլիներ դաշնակցական անպտուղ մի մտայնություն եւ ապարդյուն կազմակերպություն: Որովհետեւ Ծրագիր, Կանոնագիր, որոշումներ — այս ամե՛նը գործով են կենդանի եւ ա՛յնքան արժեք ունին, որքան գործի վարիչ ուժեր են: Թղթի վրա նրանք սակավարժեք են, ավելի շուտ՝ անարժեք: Նրանք կարող են բնորոշել մի որոշ ժամանակի մտայնությունը, ցուցադրել այդ շրջանի գաղափարներն ու տենչերը. բայց առանց գործ դառնալու՝ նրանք երազանքից տարբեր չեն: Որովհետեւ գործերն են կազմում պատմության բովանդակությունը եւ գործերով են հեղաշրջումներ կատարվում, թեեւ ամեն գործի նախորդում է մի ծրագիր ու մի որոշում եւ ամեն համադրական ճիգ կատարվում է մի ղրավոր կամ անգիր կանոնագրի համաձայն: Մինչեւ իսկ գաղափարները հեղաշրջելու համար պետք է որոշ գործ կատարվի, ուր մնաց գաղափարներն իրացնելու համար: Կուսակցությունը ծրագրում ու որոշում է՝ կենսական փաստեր ստեղծելու համար: Անշուշտ, ծրագիր ու որոշում նույնպես «փաստեր» են, բայց մտավորական պատմության փաստեր եւ ոչ թե քաղաքական եւ ընկերային պատմության: Կուսակցությունը, սակայն քաղաքական եւ ընկերային գաղափարներ հղացող ու հեղաշրջող կազմակերպություն չէ միայն, այլ, մանավանդ, քաղաքական եւ ընկերային կացություններ հեղաշրջող կազմակերպություն է, իսկ այդ պատմական աշխատանքը միմիայն գործով, քաղաքական եւ ընկերային ակտերով հնարավոր է կատարել: Այսպիսով բավական չէ ընդունել Ծրագիր, Կանոնագիր ու որոշումներ «դաշնակցական» դառնալու համար, պետք է, մանավանդ, «ամեն ջանք թափել իրականացնելու զանոնք»: Նա որ «ընդունում է» առանց գործադրելու՝ դաշնակցական լինել չի կարող. իսկ եթե սպրդում է կուսակցության մեջ՝ թերի դաշնակցական է: Ոչ միայն «ընդունել» այլեւ «ամեն ջանք թափել» իրացման համար — այս է Կանոնագրի պահանջը:

* * *

Ունենալ նույն մտայնությունն ու ծրագիրը, ենթարկվել նույն կանոնագրին ու որոշումներին եւ ամեն կերպ աշխատել նրանց իրացման համար արդեն բավական է, որ մարդ համարվի «դաշնակցական»: Բայց Կանոնագիրը երկրորդ հոդվածով դնում է լրացուցիչ երկու պահանջներ. նրանք եւս պետք է գոհացվին լրիվ դաշնակցական կոչվելու համար: Առաջինն ասում է, որ «յուրաքանչյուր դաշնակցական» (նկատեք, որ Կանոնագիրը երեք հիմնական պահանջներին գոհացում տվողին արդեն անվանում է «դաշնակցական») պարտավոր է անդամակցել որեւէ դաշնակցական խմբի: Հանձն առնելով «ենթարկվիլ» կանոնագրին եւ որոշումներին՝ դրանով իսկ թեկնածուն պարտադրաբար պետք է կատարե եւ ա՛յս պահանջը, քանի որ սա Կանոնագրի հոդված է եւ հետեւաբար՝ կուսակցական որոշում: Բայց այս պահանջը պետք է գոհացվի ո՛չ ձեւական պատճառով միայն: Այս պահանջին անհրաժեշտ է գոհացում տալ, որովհետեւ Դաշնակցությունը համամիտ մարդկանց մի պատահական խմբակցություն չէ, այլ մի **կազմակերպություն** է. այսինքն մի մնայուն մարմին է, որ ամեն օր եւ ամեն ժամ իր գործն ունի եւ հետապնդում է իր ծրագիրը: Նա չի գործում պոռթկումներով եւ ընդհատ, այլ հետեւողական ու շարունակ: Իր անդամները չեն հավաքվում երբեմն, որոշ գործի համար, իրար հետ խորհրդակցում, որոշում կայացնում գործի ձեռնարկում, հաջողում կամ ձախողում եւ ապա ցրվում մի ուրիշ անգամ, ուրիշ տեղ, ուրիշ առիթով նորից հավաքվելու եւ ուրիշ գործ կատարելու համար, այլ նրանք կապված են իրար որոշ կանոնագրով եւ հետապնդում են որոշ ծրագիր՝ շարունակ եւ հետեւողական: Դաշնակցականը մեկուսի ասպետ չէ պայքարի դաշտում, այլ ասպետական մի կարգի անդամ: Կանոնագիրը չի ճանաչում մեկուսի անհատներ, իրարից անկախ աշխատավորներ, որ մի օր միացած են ու գործակից, մյուս օրը բաժան եւ անձնընթաց: Նրանց աշխատանքը կազմակերպված է, ճիգերը համադրված են, պարտականությունները ճշտված են, իրավունքները որոշված են եւ ոչ թե մի օրվան ու մի գործի համար, այլ մի ծրագրի եւ ամեն օրվան համար: Դաշնակցականն անդամ է

մի «կուսակցության», այսինքն զինվոր է մի քաղաքական բանակի: Այս պատճառով Կանոնագիրը պահանջում է, որ ամեն մի դաշնակցական որեւէ խմբի անդամ լինի, անկախ իր դիրքից կուսակցության մեջ: Նա պահանջում է, որ ամեն անդամ կազմակերպորեն կապված լինի իր ընկերների հետ եւ ոչ թե մնա մեկուսի, որքան եւ չքեղ լինի այդ մեկուսացումը: Կուսակցության անդամները «ընկեր» են իրար ոչ միայն այն պատճառով, որ նույն Ծրագիրն ու Կանոնագիրն ունին, այլ որ նույն կազմակերպության անդամ են՝ որեւէ խմբի միջոցով: Նույն ծրագիրն ունենալ – նշանակում է համամիտ լինել եւ համախոհ. նույն կանոնագրին ու որոշումներին ենթարկվիլ – նշանակում է նույն իրավունքն ու պարտականությունն ունենալ. բայց նույն խմբին անդամակցիլ ու դրանով միեւնույն գործին սպասարկել – նշանակում է «ընկեր» լինել եւ նույն կազմակերպության իսկական անդամ: Կազմակերպության մեջ խմբից դուրս չկան ուրիշ «ընկեր» անող կազմություններ. մնացածները «մարմիններ» են գործեր վարելու համար եւ «ժողովներ»՝ որոշումներ հանելու համար: Խմբի անդամ լինելով է, որ մեկը դառնում է Դաշնակցության անդամ եւ «դաշնակցական»: Մարմնի անդամ լինելը առժամյա հանգամանք է. այսօր դո՛ւն ես վարիչը գործերի, վաղը կարող եմ ե՛ս լինել: Սա ոչ թե կոչման, այլ կարողության խնդիր է: «Դաշնակցական» կոչվելու համար հարկ չկա որ մեկը դաշնակցական մարմնի անդամ լինի, մինչդեռ անկարելի է իսկական դաշնակցական նկատել մեկին, որ խմբին անդամ չէ: Ինչպես հանրային առաքինությունները նախ ծլում ու զորանում են ընտանիքի մեջ, հետագային փարթամորեն աճելու համար հանրային կյանքի լայն դաշտում, այնպես էլ կուսակցական առաքինությունները ծլում ու զորանում են խմբերի օրրանում, հետագային աճելու համար գործի լայն ասպարեզում: Կուսակցության հիմունքը խմբերն են կազմում եւ նրա զորության գրավականը այն բարոյական շաղախն է, որով խմբի անդամները սերտորեն կապվում են իրար: Խմբերի շնորհիվ է, որ կուսակցությունը մնացած է եւ մնում է անխորտակելի, հակառակ ահավոր փորձությանց: Կայծակը կարող է զարկել հաստաբուն կաղնուն եւ խորտակել նրա կատարը կամ այս ու այն բազուկը, բայց նվազ կարող է ազդել նրա

արմատներին, որ թաղված են հողի տակ: Նրանք են, որ կենսատու հյութը դարձնում են անսպառ եւ համեստ ու հարատեւ աշխատանքով դարմանում են փոթորկի ավերը: Ահա թե ինչու Կանոնագիրը իմաստորեն պահանջ է դնում, որ «դաշնակցականը» որեւէ խմբի անդամ լինի եւ դրանով մաս կազմե հանուր կազմակերպության: Կանոնագրի տառն ու ոգին իսկական «դաշնակցական» չեն համարում այն մարդուն, որ դաշնակցական դավանանք ու գործելակերպ որդեգրելով՝ անդամ չի դառնում որեւէ խմբի եւ մնում է մեկուսի: Խմբից դուրս անդամը կարող է անհատապես մեծարժեք լինել ու երբեմն մեծ ծառայություն մատուցանել կուսակցության, բայց որեւէ խմբին չանդամակցելով՝ նա անհաղորդ է մնում սոսկական ընկերների առօրեական չար ու բարուն, որ կուսակցության ամենօրյա կյանքն է ու շնչառության տուր եւ առը, եւ դրանով մի տեսակ ուծացման է գնում՝ հանդիսավոր կամ վճռական օրերին միայն հրապարակ իջնելով: Խումբը կենդանի բջիջն է կենդանի կազմակերպության՝ նրան անդամակցել նշանակում է կուսակցության կենդանության մասնակցել, նրա կայունությանը զարկ տալ, նրա հյուսվածքները թարմ եւ առողջ պահել եւ դրանով ընդունակ՝ իր հանրային դերը խաղալու: Խմբերի մեջ է, որ անդամները «ընկեր» են դառնում եւ «ընկերների» միջավայրն է, որ հերոս ու նահատակ է սնուցանում:

* * *

Կանոնագիրը դնում է իր վերջին պահանջը - «կուսակցական տուրք վճարել Շրջանային Ժողովի որոշած սակի համաձայն»: Ինչպես որեւէ խմբի անդամակցելը, այնպես եւ ա՛յս պահանջը տուրքի վճարման, մի ստորադաս պահանջ է առաջին երեքի համեմատությամբ եւ բխում է երկրորդ հիմնական պահանջից, որ ասում է թե պետք է ենթարկվիլ Կանոնագրին եւ որոշումներին, ինչպես եւ չորրորդ պահանջից՝ «ամեն ջանք թափելու» մասին:

Կանոնագիրը որեւէ շրջանի գերագույն ժողով ճանաչում է այդ վայրի Շրջանային Ժողովը: Նրա որոշումները պարտադիր են շրջանի բոլոր ընկերների համար: «Դաշնակցականը» պարտավոր է

ենթարկվել իրավասու ժողովների որոշումներին: Այդ որոշումները վերաբերում են նաեւ սակին, որի համեմատ պետք է կուսակցական տուրք վճարել: Հետեւապես սակի մասին եղած որոշումները նույնպես պարտադիր են «դաշնակցական» մարդու համար: Եվ, ուրեմն, կուսակցական տուրք հատուցանել՝ նշանակում է դաշնակցական պարտականություն կատարել: Բայց տուրքի պահանջը, այս ձեւական կողմից չէ, որ արժանի է ուշադրության: Կանոնագիրը «ամեն ջանք թափել» պարտադրելով, կարող էր եւ տուրքի հատուցումը «ամեն ջանք»ի մեջ հասկանալ, բայց նա այդ մեկ «ջանքը» զատել է եւ կանոնագրական հատուկ կետի նյութ է դարձրել, հետեւապես հարկ է համարել հատուկ հիշատակելու:

Կանոնագիրն իրավունք ունի այս մասնավոր պահանջը առանձնապես շեշտելու, որովհետեւ տուրքի հատուցումը նյութականից ավելի բարոյական մեծ կշիռ ունի: Ոչ մեկ հանրային գործ կարելի է կազմակերպել ու վարել առանց նյութական միջոցների, իսկ մի լայն ու տեւական ազատարար շարժում՝ առավել եւս: Այսպես է նաեւ կուսակցությունն ու իր գործը: Դաշնակցության նպատակները համազգային են եւ համամարդկային: Ոչ ամենքը գիտակից են մեր կուսակցության բնույթին ու դերին: Դաշնակցականը, սակայն, պարտավոր է գիտենալ իր կուսակցության արժեքն ու դերը մեր եւ մարդկային կյանքում: Մենք կարող ենք ակնկալել, որ «ազգը» երբեւիցե կհասնի այն գիտակցության թե Դաշնակցությունը պատմական ազդակ է հայոց կյանքի մեջ եւ իր գիտակցության չափով՝ նյութապես կնպաստե նրա գոյության ու գործին. բայց մենք ոչ մեկ **պահանջ** կարող ենք ուղղել «ազգին», որքան եւ նա տիտղոսավոր եւ դրամատեր տարրեր ունենա: Դաշնակցականը, սակայն, որ գիտակից է իր կուսակցության արժեքին ու դերին մեր կյանքի մեջ, **պարտավոր** է այդ գիտակցության համեմատ նյութապես նեցուկ դառնալ իր կուսակցության: Այդ «գիտակցությունը», սակայն, անհատական չէ, այլ խմբական, ժողովական: Ոչ մեկ սահման կա նյութական զոհողության առջեւ դեպի վեր, բայց դեպի վար սահմանը գծում է Շրջանային Ժողովը: Նա որոշում է «նվազագույնը», որ պարտադիր է «դաշնակցական» մարդու համար եւ թողնում է «առավելագույնը» ամեն մի «դաշնակցականի» գիտակ-

ցության չափին: Այսպիսով նյութական զոհաբերության քանակը մի տեսակ չափանիշ է դառնում կուսակցական գիտակցության. ո՛չ միակ չափանիշը, բայց նիշերից մեկը եւ ամենից տարրականը: Այսպիսով Շրջանային եւ Ընդհանուր Ժողովների սահմանած սակերը հայտարար են ընկերների եւ շրջանների «դաշնակցական» գիտակցության աստիճանին, իսկ «ազգի» բերած կողմնակի «օժանդակությունը» հայտարար է նույն «ազգի» գիտակցության ու գնահատանքին՝ Դաշնակցության դերի եւ նրա կատարած գործի արժեքի մասին. ո՛չ թե բացարձակ առումով՝ իբր պատմական դեր ու գործ, այլ «ազգի» գիտակցության չափով:

Կուսակցական տուրքը նվազագույն պարտականությունն է, որ մի «դաշնակցական» պետք է կատարե իր կուսակցության հանդեպ: «Ամեն ջանք թափելու» հանձնառությամբ կուսակցության անդամակցողը ամենից առաջ «ջանքերի» այս նվազագույնը պարտավոր է կատարել: «Ամեն ջանք թափելու» գաղափարի մեջ շա՜տ ավելի ծանրկշիռ պարտականություններ են մտնում քան կուսակցական տուրքի հատուցումը. անտեսումն ընտանեկան եւ անձնական բարօրության, արհամարհանք դիրքի եւ ազդեցության, ժխտում ամեն բարեկեցության եւ ապահով կենցաղի, վերջապես գերագույնը — մահ՝ բոլորը մտնում են «ամեն ջանքի» մեջ: Սրանց համեմատությամբ կուսակցական տուրքը իրոք որ մի տարրական պարտականություն է: Սա առաջին դասն է նվիրումի, առաջին ցույցը համոզումի անկեղծության: Նա որ տուրքը տալիս է սրտանց՝ կարող է հետագային իր աշխատանքն ու ժամանակը զոհաբերել եւ այդ ճամփին առաջանալով՝ հասնել մինչեւ կյանքի զոհաբերության: Բայց նա, որ թերանում է այս տարրական պարտականության մեջ, հուսալի չէ, որ չթերանա երբ կուսակցությունը նրանից ավելին պահանջի քան տուրքի հատուցումն է: Ուստի Կանոնագիրը «ամեն ջանքերից» տարրականը — տուրքի հատուցումը — զատում ու դնում է իբր փորձաքար «դաշնակցական» մարդու որակը ճանաչելու: Նա, որ կատարում է Կանոնագրի մյուս պահանջները եւ թերանում է այս մեկի մեջ, նա չի կարող իրավամբ «դաշնակցական» նկատվել եւ դժվար է ընդունել, որ նա մյուս պահանջների հանդեպ նվազ թերացող լինի, քան այս մեկի դեմ:

Ավելի եւս «դաշնակցական» համարվել չի կարող այն մարդը, որ ինքն իր կամքով դրամական տուրք է սահմանում եւ պարբերաբար ու անթերի հատուցանում է կազմակերպության, առանց նրա մյուս պահանջները գոհացնելու: Որքան եւ մեծ լինի նրա տվածն իբր գումար նա համակրանքի նվեր է միայն, բայց ոչ կուսակցական տուրք: Նա մի «համակիր է», ոչ դաշնակցական: «Դաշնակցական» սասածը ուրույն տիպար է, որ ունի մտածման հատուկ եղանակ, ապագայի մասին հատուկ ծրագիր, գործի եւ վարմունքի հատուկ կերպեր, անդամ է որոշ կազմակերպության՝ խմբի միջոցով, ենթակա է որոշ կանոնագրի եւ հետամուտ ժողովական որոշումների իրագործման՝ իր անձնական մասնակցությամբ եւ բազմատեսակ զոհողությանց գնով, ուր դրամական տուրքը հետին տեղն է գրավում: Չկա «դաշնակցական» **առանց** տուրքի, բայց եւ չկա **միմիայն** տուրքով:

Ինչպես տեսնում եք, ընդունել ծրագիրն առանց մտայնության՝ նշանակում է տարամիտ լինել. ընդունել մտայնությունն առանց ծրագրի — նշանակում է հակամիտ լինել. ընդունել ծրագիր ու մտայնություն առանց գործելակերպի — նշանակում է միմիայն հակամիտ լինել. ընդունել գործելակերպն առանց ծրագրի նշանակում է արկածասեր լինել. ընդունել ծրագիր ու գործելակերպ, առանց Կանոնագիր ու որոշումներ պարտադիր համարելու՝ նշանակում է ուղեկից լինել եւ ոչ տեւաբար լծակից: Ծրագիր, գործելակերպ ու Կանոնագիր ընդունել առանց խմբի անդամ լինելու նշանակում է մեկուսանալ եւ ուծացման գնալ. կուսակցական տուրք չվճարել եւ կազմակերպության անդամ նկատվիլ — նշանակում է տարրական պարտականություն չկատարել, եւ ասպետական կարգի անդամ կարծել իրեն: Եվ միայն նա, որ Կանոնագրի **բոլոր** պահանջներին հանձնառու է գոհացում տալ անվերապահ ու լիովին՝ նա միայն իսկապես «դաշնակցական» է Կանոնագրի ոգուն ու տառին համաձայն:

Այսպիսով Կանոնագիրն իր չոր ու ցամաք երկու հոդվածով ուրվագծում է «դաշնակցական» մարդու գաղափարական տիպարը: Կարող եմ ասել, թե նա գծում է իսկական կուսակցական մարդու տիպարը՝ անկախ կուսակցության բնույթից: Տասնամյակների հա-

ռուստ փորձ է խտացած այդ երկու հոդվածների մեջ: Նրանք նախորոշած են բոլոր գալիք փորձությունները եւ հավասարակշռած են բոլոր հնարավոր հավակնությունները: Մտավորականին, որ ապաստանած է իր տեսական իմացության ուժին՝ Կանոնագիրը պարտադրում է հեռու մնալ մեկուսացումից, մտնել որեւէ խմբի մեջ իբր համեստ ու պարզ անդամ: Կանոնագիր, որոշում ու տուրք պարտադիր համարել նաեւ ի՛ր համար եւ «ընկերների» մշտական շփումով՝ կենդանի պահել դաշնակցական ոգին ու բարքն իր մեջ.- այլապես զլանում է նրան «դաշնակցական» կոչումը: Գործնական ուժերին պարտադրում է չապաստանել միմիայն գործին եւ դրանով արտոնված համարել իրենց՝ մյուս պահանջներն անտեսելու: «Գործն» այնքան արժեք ունի, որքան ծառայում է մի նպատակի: «Գործն» իր իմաստը ծրագրից է ստանում: «Գործը» մի մարզանք է, ոչինչ ավելի, եթե չի հետապնդում մի որոշ հանրային գաղափար: Գուցե ինքն է բուն իսկ վարիչն այդ գործի. գուցե հերոսը. բայց դա նրան մեկուսացման իրավունք չի տալիս: Կազմակերպությունն այն պատվանդանն է, ուր նա արձանանում է իբր հերոս ու վարիչ: Կուսակցության գոյությունն անհրաժեշտ պայման է իր հերոսության, նրա Կանոնագիրը՝ իր գործավարության եւ կուսակցությունն է, որ ստեղծում է վարիչ ու հերոս եւ ոչ հերոսն ու վարիչը՝ կուսակցություն: Ճիշտ է իր փառքը ճառագայթում է հեռուն ու նաեւ կուսակցության վրա, բայց կուսակցության բորբոք հնոցի մեջ է շիկանում փառքի մետաղը, ճառագայթելու համար հերոսի վրա եւ հեռուները: Կանոնագիրը սանձահարում է եւ այն մարդկանց, որ կարծում են թե այնքան ավելի երախտիք ունին կազմակերպության վրա, որքան ավելի նյութական մեծ զոհողություն են արած: Նրանց հիշեցնում է, որ համեստ խմբերի պարզ անդամները, որ տեւական տուրքերով եւ աշխատանքով կանգուն են պահում կազմակերպությունը՝ նվազ երախտավոր չեն քան ինքը, որ դրամ է վճարում, առանց մյուս հանձնառությանց: Կուսակցության Ծրագիրն ու Կանոնագիրն ընդունող եւ «ամեն կերպ» գործադրող պարզ ընկերը շատ ավելի մեծ արժեք ունի քան նա, որ կուսակցության ներսն է, բայց իր դերը տուրքով համարում է վերջացած. կամ դուրսն է եւ աջակցում է իբրեւ համակիր: Կանոնագիրը ներշնչում է նրանց, որ կուսակցության դերն ու բախտը ոչ թե նրա նյութական միջոցներից է կախված, այլ նրա կազմակերպական շաղախից եւ անդամների պատրաստակամ եւ համաղիր ճիգերից. որովհետեւ՝ ուր կա կուռ ու գործոն կազմակերպություն՝ այնտեղ միշտ հնարավոր է նյութական միջոցներ գտնել, բայց ուր կան նյութական միջոցներ՝ դեռ չի նշանակում, որ կարելի է գաղափարական կազմակերպություն ու մթնոլորտ ստեղծել: Կարելի է մի առժամյա շահախնդիր խմբակցություն առաջ բերել եղած դրամը վատնելու համար եւ դրամի վատնումով կվերանա նաեւ «կազմակերպությունը». որովհետեւ դրամը մեծարժեք է գաղափարներ հետապնդելու համար, բայց առանց գաղափարների եւ նվիրման կուսակցություն լինել չի կարող: Ծրագիրն ավելի հիմնական է քան դրամը: Ծրագիրը կարող է դրամ գտնել, բայց դրամը կուսակցական ծրագիր ստեղծել չի կարող: Վերջապես, այն մարդկանց համար, որ առանց մտայնության նույնության եւ ծրագրի միության, լոկ «գործերի» սիրուն սպրդած են կազմակերպության մեջ եւ կուսակցությունը համարում են մարզավայր՝ - Կանոնագրի հոդվածները տեւական եւ արթուն սպառնալիք են, որ հսկում են նրանց քայլերին: Թույլ տալով, որ մինչեւ մի որոշ ժամանակ իրենց գործակցությունը բերեն մեր կուսակցության, հաճախ հասցնելով նրանց կուսակցական, հանրային եւ պետական բարձր դիրքերի՝ Կանոնագիրն իր անողոք խստությամբ իջնում է նրանց համբավի վզին իբր պատուհասող սուր եւ որձկում է իբր անմարսելի կերակուր, երբ նրանք փորձ են անում իրենց ոչ կուսակցական մտայնությամբ, կուսակցության ճամփան թեքելու եւ ոչ կուսակցական բարքերի դրոշմը կուսակցության գործերի վրա դնելու:

Կանոնագրի երկու հիմնական հոդվածները ցուցափայտեր են, որ մատնանշում են «դաշնակցականի» ուղին. նրանք չեն փակում ճամփան, այլ ազդարարում են, որ չչեղվին: Նրանք հիշեցնում են շարունակ «դաշնակցականի» կոչումը եւ դրդում են շարունակ առաջ գնալ «ամեն ջանք թափելու» ճամփով: Նրանք արգելք չեն, որ մտավորականը միշտ ավելի խորանա տեսական խնդիրների քննության մեջ եւ միշտ ավելի լավ հիմունքներ ու ձեւակերպություն գտնե Ծրագրի եւ Կանոնագրի համար: Նրանք քաջալերում

են գործնական ուժերին միշտ ազդու եւ հարաճուն գործունեություն հանդես բերելու եւ որքան գործիչը հմտանում ու մտերմանում է իր գործին՝ այնքան ավելի դիրք է գրավում կուսակցության մեջ եւ ընկերների հարգանքը շահում: Կանոնագիրը դրդում ու քաջալերում է զոհողության ոգին եւ «դաշնակցականին» գնահատում է նրա զոհողության չափով: Կուսակցությունը չի ճանաչում ազդեցության որեւէ նյութական աղբյուր. «դաշնակցականը» հեղինակության հասնում է անվերապահ նվիրումով: Իսկ նրանք, որ զոհաբերում են մեծագույնը աշխարհում – իրենց կյանքը – կուսակցությունը դասում է նրանց իր նահատակների շարքը եւ պաշտամունք է ստեղծում նրանց անվան ու հիշատակի շուրջը:

Այսպիսով Կանոնագիրն անողոք ու խիստ է շեղընթացների հանդեպ եւ հովանավոր ու քաջալեր նրանց, որ ճգնում են ուղիղ ճամփան քայլելու: Նա գնահատում է սլացքը դեպի գաղափար եւ պատուհասում է շեղումը ծրագրի ճամփից եւ ընդհանրապես հանդուրժում է սիրով այն բոլոր անդամներին, որ շարունակ աշխատում են միշտ ավելի արդարացնել իրենց «դաշնակցական» բարձր կոչումը:

* * *

Տեսանք թե ինչպես «դաշնակցական» կոչվելու համար ամեն ոք պետք է գոհացում տա Կանոնագրի հինգ պահանջներին միաժամանակ: Ինքնին հարց է ծագում, թե ի՞նչպես կարող է մի նորեկ անդամ, այդքան պահանջների միանգամից գոհացում տալ: Եվ մի՞թե բոլոր դաշնակցական համարվածները գոհացո՞ւմ են տալիս այդ պահանջներին: Մի՞թե ամենքը, որ «դաշնակցական» անուն են կրում՝ գաղափարական տիպարներ են անթերի: Եթե ուշադիր քննենք Կանոնագրի հինգ պահանջները, կտեսնենք, որ նրանցից մեկն է միայն, որ անմիջապես պետք է գոհացվի. մնացածները հանձնառություն են եւ վստահացում: Թեկնածուն պետք է անպայման որեւէ խմբի անդամ արձանագրվի: Ա՛յսքան: Այնուհետեւ նա պետք է աշխատի իր հանձնառությունները կատարել եւ վստահացումն արդարացնել՝ կյանքի բերումին զուգահեռ: Թեկնածուները մուտքի ժամանակ հատուկ քննության բովից չեն անցնում. նրանք չունեն քաղաքական դասընթաց, որից պարտավոր լինեին քննություն տալու՝ նախքան ընդունվին կազմակերպության մեջ: Միշտ կարծել են որ դա անհրաժեշտ է. բայց կյանքը բերած է ուրիշ եզրակացության: «Դաշնակցություն» չնչելով, «Դաշնակցություն» անելով՝ թերավարժները դարձած են «դաշնակցական», ինչպես լողանալով է, որ մարդ լողորդ է դառնում:

Այս տեսակետից նայելով գործին՝ ընդհանուր կազմակերպություններից միայն մեկն է, որ լավագույն զուգահեռն է մեր կուսակցության.- եկեղեցին: Իբր կազմակերպություն՝ նրանք շատ նման են իրար: Երկուսն էլ «հավատացելոց» ժողով են, թեեւ հավատում են տարբեր բաների: Երկուսն էլ ունեն ծրագիր, գործելակերպ ու Կանոնագիր, թեեւ տարբեր բնույթի եւ բովանդակության: Երկուսն էլ նոր անդամներ ընդունում են առանց խորին քննության եւ գոհանում են պարզ հարցումով եւ հանձնառությամբ: Երեխային ուղղած հարցումին քավորն է պատասխանում թե՝ երեխան ուզում է. «հաւատ, յոյս, սէր եւ մկրտութիւն. սրբիլ ի մեղաց, ազատիլ ի դիւաց եւ ծառայել Աստուծոյ»: Քավորի դերը կուսակցության մեջ խումբն է կատարում, որ հանձնարարում է նոր անդամին եւ վստահեցնում, թե նա ուզում է ընդունել ծրագիրն ու գործելակերպը, ենթարկվել Կանոնագրին ու որոշումներին, ամեն ջանք թափել իրականացնելու «զանոնք», մտնել խմբի մեջ եւ կուսակցական տուրք վճարել: Ինչպես քավորը բարոյական հանձնառուն է իր սանիկի ուղիղ ընթացքի, այնպես էլ խումբը բարոյապես հանձնառու է իր առաջարկած անդամի համար: Եվ ինչպես քահանան քավորի հանձնառության վրա տալիս է մկրտություն, այնպես էլ մարմինը խումբի հանձնառության հիման վրա ընդունում է նոր անդամին: Քավորը սովորաբար բնավ չի հասկանում իր հանձնառության իմաստը, առավել եւս երեխան, որ արդեն անկարող է հասկանալ: Սա մի ծես է, որ կատարվում է: Մինչեւ իսկ եթե «երեխան» հասակավոր է, նա եւս հաճախ չի հասկանում թե ինչ – ինչոց է: Նույնը պատահում է եւ կուսակցության մեջ, ուր հանձնարարողն ու հանձնարարվածը լավ չեն հասկանում գործի էությունը: Արտասանելով երդման բանաձեւը, թեկնածուն շատ անգամ

լավ չի ըմբռնում թե ի՞նչ ծանր հանձնառության տակ է մտնում՝ կուսակցության անդամ դառնալով:

Բայց ինչպես հասակավոր «երախան» կամ կաթնակեր մանուկը մկրտությամբ դառնում են մի դարավոր հաստատության անդամ, այնպես էլ թեկնածուն երդման բանաձևն արտասանելով դառնում է մի պատկառելի կուսակցության անդամ: Եվ ինչպես եկեղեցու անդամության տեսակետով տարբերություն չունեն նորադարձն ու հին անդամը, այնպես էլ կուսակցության տեսակետով «Դաշնակցական» են թե՛ նա, որ երեկ մտավ կազմակերպության մեջ եւ թե՛ նա, որի մազն արդեն ճերմակած է: Երկուսն էլ լիազոր եւ նույնիրավ անդամ են հավաքական ընկերային կազմության. մեկն՝ իր եկեղեցու, մյուսն՝ իր կուսակցության: Նվաստ գյուղացին եւ գերագահ կաթողիկոսը երկուսն էլ անդամ են նույն եկեղեցու, թեկուզ մեկը գլուխն է եկեղեցական կազմակերպության, մյուսը հազիվ ոտքի եղունգը, բայց երկուսի միությամբ է, որ ստեղծվում է եկեղեցու միությունը: Այդպես է նաեւ կուսակցության մեջ. թեկուզ եւ մեկը վարիչ է բովանդակ շարժման, իսկ մյուսը պարզ մասնակիցը, բայց այդ երկուսի միացումով է կուսակցությունը ձեւ ու մարմին ստանում: Կարողության, երախտիքի, փորձառության ու զոհաբերության տեսակետով նրանց մեջ կարող է սար ու ձոր լինել, բայց կոչման տեսակետով նրանց մեջ տարբերություն չկա. երկուսն էլ կուսակցության անդամ են, երկուսն էլ «դաշնակցական» եւ «ընկեր»:

Եթե հիմա մտամուխ լինենք բուն գործի էության, կտեսնենք, որ եկեղեցու հասուն անդամները հազիվ գիտակցություն ունեն իրենց կոչման եւ պարտականության մասին: Այդ «կուսակցության» անդամները ընդունում են նրա «ծրագիրն ու գործելակերպը, ենթարկվում են նրա Կանոնագրին ու որոշումներին», բայց ընդհանրապես «ծրագրի» մասին գաղափար չունեն, այսինքն չգիտեն իրենց նպատակն ու դավանանքը, իրականի մեջ հետեւում են տարբեր գործելակերպի, քան հրահանգում է եկեղեցին, Կանոնագրին ենթարկվում են տհաճությամբ եւ որոշումները կատարում են տասից մեկ անգամ: Բայց եւ այնպես նրանք համարվում են եկեղեցու անդամ. նրանց համախումբ միությունն է, որ դարձնում է եկեղեցին մի ազդակ եւ հաճախ նրանք են, որ իրենց արյունով շա-

ղախում են եկեղեցու հիմունքները եւ դարձնում անսասան: Ոչ ոք կարող է պնդել, որ դրանք գաղափարական տիպարներ են եկեղեցու մեջ, բայց եւ ոչ ոք կարող է ասել, թե նրանք անդամ չեն եկեղեցու: Նրանք «ընդունում» են եկեղեցու պահանջները եւ կատարում են իրենց ըմբռնումի համեմատ: Հաճախ հոժարությունը չէ որ պակասում է, այլ ճիշտ ըմբռնումը: Իսկ եթե գիտակցում են իրենց թերին գաղափարական տիպարի համեմատությամբ՝ -ունեն մեղքի գիտակցությունը եւ զղջումի ապրումը: Այսպես է նաեւ կուսակցության մեջ: Կանոնագիրը գծում է դաշնակցականի գաղափարական տիպարը եւ թեկնածուն հանձնառու է լինում այդ տիպարին համապատասխան ընթացք ունենալ: Քանի դեռ ճանաչում է տիպարը պարտադիր, բայց իրեն թերացած՝ նա կուսակցության անդամ է իրոք, քանի դեռ ճգնում է միշտ ավելի մոտենալ «դաշնակցական» տիպարին, նա «դաշնակցական» է անառարկելի: Որովհետեւ հանձնառությունն է նրան «դաշնակցական» դարձնում եւ այդ հանձնառության կատարման ձգտելն է «դաշնակցական» պահում նրան: Այն օրը, որ գաղափարական տիպարը դադարեց հմայիչ լինել կամ այն օրը երբ նա դադարեց այդ տիպարին մոտենալու ճիգ անել — նա դադարում է «դաշնակցական» լինելուց, թեկուզ եւ մնա կազմակերպության մեջ: Նա մեռած անդամ է կենդանի կուսակցության, մի մեռած բջիջ կենդանի մարմնի:

Հանձնառությունն այն տոմսն է, որ իրավունք է տալիս Դաշնակցության շենքը մտնելու, բայց հանձնառության կատարման չափով թեկնածուն տեղ է գրավում կուսակցության մեջ եւ դառնում նրա հենարանը: Ամենքը կոչված են ձգտելու «դաշնակցականի» բարձր տիպարին եւ քանի դեռ գործով ձգտում են նրան՝ համարվում են հավատարիմ անդամ եւ ընկեր կուսակցության մեջ:

Կարեւորն այն չէ, որ մտած վայրկյանին դաշնակցական դավանանքի բոլոր ծալքերն իմանաս, նրա ծրագրի բոլոր կետերը խորապես ըմբռնես եւ նրա Կանոնագիրը գոց գիտենաս: Լավ է, որ այդպես լինի, բայց այդ չէ կարեւորը: Կարեւորը այն է, որ չիտակորեն հանձնառու լինես նրա ծրագիրն ըմբռնելու եւ գործադրելու, մտածումդ նրա աշխարհայացքին հարմարելու, նրա Կանոնագրին հնազանդելու եւ նրա որոշումները կատարելու. մի խոսքով մտածելու

եւ գործելու՝ կուսակցության մշակած հրահանգների համաձայն: Մտնելով կուսակցության մեջ ընկեր մարդկանց հորդորով կամ ինչ որ ներքին մթին մղումի անսալով՝ թեկնածուն ժամանակի ընթացքին, գործի եւ չփումների մեջ կարող է իր գիտակցությունը պայծառացնել եւ իր բարոյական աշխարհը վերակազմել՝ հետեւելով փորձառու ընկերների օրինակին կամ անձամբ հասու դառնալով Կանոնագրի պահանջներին: Կարեւորը շիտակ եւ անվերապահ հանձնառությունն է: Սա մի ուխտ է, որ անում է մարդ ընկերների առջեւ, ինչպես ամուսնացողը եկեղեցում: Փեսացուն չգիտե թե կյանքի մեջ ինչեր կարող են պատահել իրեն, բայց քահանայի հարցումին թե՝ «Տե՛ր ես» - պատասխանում է վստահ. «Տեր եմ». եւ դրանով հանձն է առնում հետագա բոլոր փորձանքների ժամանակ տեր կանգնել իր կնոջը, որ տալիս են նրան վկաների ներկայությամբ: Ու նաեւ կինը խոստանալով «Հնազանդիլ», չգիտե առաջուց թե իր կյանքում ինչ կացություններ կարող են պատահել, ուր նա պետք է արժեցնե իր հնազանդության խոստումը, բայց նա խոստանում է «Հնազանդիլ» վկաների ներկայությամբ եւ իր պարտականությունն է իր տված խոսքը պահել: Ճիշտ այսպես է կուսակցության թեկնածուն: Արտասանելով հանդիսավոր երդման բանաձեւը, նա դրանով խոստանում է Կանոնագրի հինգ պահանջներին գոհացում տալ եւ պարտավոր է հետագային կատարել իր տված խոստումը: Եվ նա՛ է «դաշնակցականը», որ փորձության օրերին հավատարիմ է մնում իր հանձնառության եւ կուսակցության մեջ մտած օրից անդադրում աշխատում է միշտ ավելի կատարյալ չափով գոհացում տալ Կանոնագրի պահանջներին:

Մենք տեսանք «դաշնակցականի» գաղափարական տիպարը, որ գծում է մեր Կանոնագիրն իր երկու հոդվածներով: Կուսակցության ծրագիրը եւ կանոնածիր կուսակցականը՝ գաղափարական կառուցումներ են: Բայց մինչդեռ տիպար կուսակցական դառնալու համար բավական է անձնական ճիգը, տիպար ծրագիր իրագործելու համար անհրաժեշտ է հազարավոր ճիգերի ներդաշնակ զուգորդություն եւ արտաքին նպաստավոր պայմաններ: Բայց ինչպես կուսակցությունն այնքան ժամանակ կենդանի է եւ ազդու, որքան հետամուտ է իր ծրագրի իրացման, այնպես եւ կուսակցականը այնքան ժամանակ «դաշնակցական» է, որքան հետամուտ է իր տիպարի լրացման, այսինքն Կանոնագրի հինգ պահանջի գոհացման:

Պետք չէ կարծել ուրեմն, որ «դաշնակցական» լինել նշանակում է ամսական տուրք վճարել եւ երբեմն ժողով դնալ: «Դաշնակցական» կոչումը շատ ավելի դժվարին ու բարդ գործ է, քան կարծում են շատերը: Գիտենք, որ դժվար է նաեւ քրիստոնեա լինել, բայց ամենքս «քրիստոնեա» ենք, փառք Աստուծո. բայց վա՜յ մեր քրիստոնեության: Պետք չէ այնպե՛ս կուսակցական լինել, որ ասվի. «վա՜յ մեր Դաշնակցության»... «Դաշնակցական» կոչումը մի հարազդու խթան է, որ առաջ է վարում մարդուն միշտ ավելի լավ ըմբռնելու իր ծրագիրը, միշտ ավելի ճիշտ գործադրելու իր Կանոնագիրն ու կուսակցության որոշումները, միշտ ավելի ուշադիր հետեւելու հանրային կյանքի ընթացքին եւ միշտ ավելի որոշ դիրք բռնելու հանրային խնդիրների հանդեպ՝ նվիրելով ավելի ժամանակ ու եռանդ եւ ցուցաղրելով ավելի մեծ զոհողություն:

* * *

Ես աշխատեցի պարզել «դաշնակցական» մարդու գաղափարական տիպարը: Ուշադրության արժանի է մի «դաշնակցական» մարդու մի տիպար միայն: Իր գաղափարական առումով Դաշնակցությունը համատեսակ տիպարների միություն է, որ նշանակում է, թե բոլոր դաշնակցականները ավելի կամ պակաս նույն կաղապարով ձուլված մարդիկ են: Այս հանգամանքը շատերն են նկատած եւ ամեն օր կարելի է ստուգել, բանալով աշխարհի հեռավոր վայրերում լույս տեսնող կուսակցական թերթերը եւ տեսնելով միօրինակ վերաբերում միեւնույն խնդիրների հանդեպ: Սա արտաքին հայտարարն է մտայնության նույնության: Թերթերը չեն գրում ամենօրյա հրահանգի համաձայն, խմբագիրնե՛րն են, որ մտածում են որոշ ուղղությամբ: Որոշ կաղապարով ձուլված մտայնության հետ է մեր գործը եւ ոչ թե որոշ կարգադրության հնազանդ մարդկանց: Եթե քննության առնենք «դաշնակցական» գործերը, ուր եւ կատարվեն, մենք կնկատենք նույն ընթացքը նաեւ գործի մեջ, որ հայտարար է «գործելակերպի» նույնության: Այստեղ եւս կար-

գաղրություն չէ, որ կատարում են մեր ընկերները,- քանի որ ամեն շրջան իր գործերն ունի եւ կուսակցությունն ապակենտրոն է – այլ նույն կաղապարով ձուլված կամքերի արդյունք է այդ երեւույթը: Կուսակցական կաղապարն է նույն, ուստի եւ ձուլվածքները նման են իրար: Սա նշանակում է թե Դաշնակցության անդամները իմացական ու բարոյական կառույցի հիմնական գծերով մոտավորապես նման են իրար: Այս հիմնական հենքի վրա ամեն մի «Դաշնակցական» իր նկարն է գործում գորգի զարդերի նման: Տարբեր են գույները, տարբեր նկարն ու դասավորությունը, տարբեր՝ մեծությունը, բայց նույն է հենքը, եւ բոլորն էլ գորգ են:

Այս պատճառով Դաշնակցությունը թեեւ ընկերային կազմակերպություն է, բայց նա նման չէ պետական կազմակերպության: Արտաքուստ նայելով թվում է թե նա շատ զուգահեռ ունի պետության հետ, բայց խորքը դիտելով՝ մենք տեսնում ենք, որ աննման են իրար: Դաշնակցության մեջ չկա մասնագիտացում եւ պետք չէ, որ լինի: Այսօրվան խմբագիրը վաղը կարող է քարոզիչ դառնալ, մյուս օրը խմբապետ, երրորդ օրը մաուզերիստ: Այս ճկուն կերպարանափոխությունը արդյունք է նրա «դաշնակցական» կոչման, սա ճառագայթումն է նրա տիպարի: Կարող է մեկի մեջ չեշտված լինել ռազմիկի կարողությունը, մյուսի մեջ տեսական մտքի ուժը, երրորդի մեջ խոսքի շնորհքը, չորրորդի մեջ կազմակերպելու տաղանդը, բայց երբ հարկը պահանջեց՝ ամենքը պարտավոր են զենք առնելու եւ կռվի դաշտ իջնելու, թողնելով մեկն իր հոդվածը, մյուսն իր բեմը, երրորդն իր ժողովը: Կամ ընդհակառակը, երբ պետք է Կանոնագիր մշակել եւ որոշումներ կայացնել, այստեղ ձայն ունեն ե՛ւ տեսաբանը, ե՛ւ բեմասացը, եւ կազմակերպիչը եւ մարտիկը: Չկա մի ասպարեզ, որ վերապահված լինի միմիայն որոշ ընկերների եւ գոցված լինի մյուսների հանդեպ: Կանոնագիրը պահանջում է «ամեն ջանք թափել» իրականացնելու ծրագիրն ու որոշումները, եթե դրա համար պետք է, որ մեկը խոսե եւ չկա ընկեր, որ խոսքի շնորհքն ունենա՝ բեմ է բարձրանում լեռների մարտիկը. եթե պետք է հաբեկում կատարվի եւ հարմարագույն մարդը չկա, գնում է գործի՝ կուսակցության հիմնադիրն ու տեսաբանը:

Դաշնակցության մեջ չկա եւ չի կարող լինել մասնագիտացում,

որովհետեւ մեր կուսակցությունը ոչ թե մասնագետների միություն է, այլ հանրային որոշ տիպարների ընկերություն. մարդիկ, որ սուր ականջ ունեն հայության տառապանքի ճիչը լսելու, ուր եւ նա հնչե եւ որ շարունակ իրենց ծրագիրն ունեն աչքի առջեւ: Նրա իրացումը պահանջում է բազմազան աշխատանք, ուստի կուսակցության մեջ չէ եղած եւ պետք չէ, որ լինի որեւէ գործից հրաժարում: Կարող է առարկություն լինել այս ու այն անդամի հարմարության մասին, բայց խոսք չի կարող լինել կուսակցության պահանջը մերժելու մասին: Այս ոգին է, որ կուսակցական համեստ ընկերներին դարձնում է հերոս, պարտադրելով կատարել գործեր, որ առաջին նվաղ թվում են անհնարին նրանց ուժերի համար: Համարձակություն չի լինի եթե ասեմ, թե «դաշնակցականի» համար անհնարին բան չկա իր ծրագրի իրացման ճամփին: Հիշեցեք կուսակցության անցյալը եւ պիտի հանդիպեք փափկասուն մարդկանց, որ «դաշնակցական» կոչումին հավատարիմ՝ դարձած են խստաբարո եւ լեռնակյաց մարտիկին հավասար ընկեր, մոռանալով իրենց սովոր հանգիստը եւ դյուրատար պայմանները: Անշուշտ, ղեկավար մարմինների գործն է ընկերներին դասավորել այնպես, որ նրանք լավապես օգտակար լինեն, բայց «դաշնակցականը» պարտական է գնալ ամեն գործի, որ պահանջում է կուսակցությունը, որովհետեւ նա մի հանդիսավոր ժամի հանձնառու եղած է «ամեն ջանք թափել» իրացնելու կուսակցության ծրագիրն ու որոշումները:

Կուսակցության հավատարիմ ընկերները դիտեն, թե հաճախ որքա՜ն անողոք է եղած Դաշնակցությունը եւ կհիշեն անշուշտ հարյուրավոր ընկերներ, որ հնազանդ ու սիրով ենթարկված են կուսակցության անողոք որոշումներին: Այս անողոք դպրոցին մեջ են մարզվում «դաշնակցական» մարդու կուսակցական բարձր առաքինությունները, որ ոչ միայն կուսակցական են, այլեւ մարդկային: Իրենց դաժան գեղեցկությամբ նրանք իշխում են մարդու հոգուն եւ գերում են առմիշտ՝ ստեղծելով նահատակներ ու հերոսներ: Այս մուրճի տակ է, որ կոփվում են անձեւ հոգիները եւ այս բովի մեջ է, որ պողպատվում են երերուն կամքերը: Դաշնակցությունն այսպիսով, ոչ միայն դառնում է քաղաքական զորավոր ազդակ, այլեւ հայ տիպարի ազնվացման ազդու մարզարան: Եվ որքան ավելի

«դաշնակցական» են դառնում մեր ընկերները, այնքան ավելի խորանում է նրանց բաժանող խրամատը Հայության մյուս տիպարից: Այս երեւույթը ոմանք տհաճությամբ են դիտում, մինչդեռ պետք է գոհությամբ լցներ ամենքիս սիրտը, որովհետեւ ոչ ամեն խրամատ ու պառակտում ավերիչ են. կա շինարարություն, որ միայն պառակտումով հնարավոր է եւ խրամատով զորացող: Ազգային նկարագրի ազնվացումը այդ շինարար գործերից մեկն է: Ոչինչ առնչություն կարող է լինել անողնաշար սրիկայի եւ գաղափարատենչ մարտիկի միջեւ: Ազգային ծագումն արգելք չէ, որ նրանք իրար հիմնապես ժխտեն: Սրիկան միայն վախ եւ ատելություն կարող է սնուցանել իր հոգում գաղափարական մարդու հանդեպ. իսկ սա արգահատանք եւ արհամարհանք՝ նրա ճկուն կենցաղի դիմաց: Մեկն ստիպված է կեղծ ու թաքուն գործելու. մյուսը շիտակ եւ ինքնավստահ, որովհետեւ նա հետամուտ է իր անձնական բարիքին եւ խորշանք ունի բարոյական ճիգի մը, իսկ սա սլացք է դեպի գաղափար եւ իր թռիչքի ընթացքին հազիվ նկատում է կյանքի բարիքը: Եվ որքա՜ն շահավետ ու փայլուն ասպարեզներ լքած է «դաշնակցականը» իր գաղափարին ծառայելու համար. ասպարեզներ, որ շատերի երազն են կազմում: Եվ որքա՜ն անձնվեր ու մաքուր սերեր մերժած է «դաշնակցականը», խորտակելով քնքույշ հոգիներ, որոնց մասին գաղափար իսկ չունի սրիկան: Կյանքն այսպիսով նպատակ չէ «դաշնակցական» մարդու համար. նա միջոց է ծրագիր հետապնդելու եւ որոշումներ իրացնելու: Մի շատ համեստ խոսք.- «ամեն ջանք թափել» - ազդակ է դառնում մարդկային տիպարի ազնվացման եւ խթան՝ գերագույն զոհաբերության, որովհետեւ երբ ասում է «ամեն ջանք», այլեւս տեղ չի թողնում, որ ապաստանես հմտության պարապին եւ հրաժարվես պարտքից անհմտության պատրվակով: Դա մի կոչ է, որ կազմակերպական Կանոնագիրն ուղղում է բոլոր «դաշնակցականներին»՝ պատրաստ լինել ամեն ժամ եւ ամեն տեղ կատարելու այն գործը, որ անհրաժեշտ է, անկախ այն բանից «մասնագե՞տ» ես թե ոչ: Դաշնակցության մեջ մասնագետներ չկան. կան միմիայն «դաշնակցականներ»:

Այս չի նշանակում, որ Դաշնակցությունը դեմ է մասնագիտության կամ հակառակ է մասնագետներ օգտագործելուն: Սա նշանակում է միայն, որ «դաշնակցական» ըմբռնումի մեջ «մասնագետ» գաղափարը տեղ չէ գրավում: «Դաշնակցականը» կարող է մասնագետ լինել, բայց իր մասնագիտությամբ չէ, որ «դաշնակցական» է. ինչպես եւ մասնագետը կարող է դաշնակցական գործին մեծապես նպաստել, բայց դրանով «դաշնակցական» չի դառնում: Հայ-թաթարական ընդհարումների ժամանակ մենք մասնագետ գողեր ունեինք, որ զորանոցներից զենք ու փամփուշտ էին գողանում մեզ համար, բայց նրանք «դաշնակցական» չէին, ինչպես ուրիշ վայրերում «դաշնակցականներ» կային, որ նույն գործն էին կազմակերպում ու կատարում, առանց սակայն, մասնագետ գողեր դառնալու: «Դաշնակցական» մաքսանենգներ եղած են, որ մեծաքանակ զենք ու փամփուշտ փոխադրած են սահմանից սահման, բայց եւ ոչ մի ապրանք չեն փոխադրած անձնական շահի համար ինչպես եղած են մասնագետ մաքսանենգներ, որ իրենց փոխադրած անձնական ապրանքի հետ փոխադրած են եւ մեր զինամթերքն ու գրականությունը: Սրանով «դաշնակցականը» մաքսանենգ չի դարձած եւ մաքսանենգը՝ «դաշնակցական»: Մեկն աշխատած է «ամեն ջանք թափել» իր ծրագիրն ու կուսակցության որոշումներն իրագործելու, մյուսն իր անձնական շահին նոր շահ բարդելու: Եվ հաճախ է պատահած, որ «դաշնակցական» գործ կատարելով, մասնագետ գողն ու մաքսանենգը մկրտված են նոր ավազանում եւ դարձած են տիպար հեղափոխական, ամեն դասի մարդկանց հիացումը խլելով: «Դաշնակցական խեչո՛ն», որ Հայ ժողովրդի ազնվագույն զավակներից մեկն եղավ, մի պատանի գրպանահատ էր... Ոչ ամեն զինվորական, որ կոչված է Դաշնակցության դրոշի տակ իր կյանքը վտանգելով՝ դրանով իսկ դարձած է դաշնակցական, բայց շատ «դաշնակցականներ» «ամեն ջանքի» թելադրանքին հնազանդ՝ մտած են կռվի ասպարեզ ու դարձած զինվորական: «Դաշնակցական» կոչումը մասնագիտություն չէ. նա որոշ բարոյական կառուցվածք է մատնանշում, որոշ Ծրագիր ու Կանոնագիր, իսկ մասնագիտությունը որոշ կարողություն է, որ «դաշնակցություն» չի ենթադրում: Ուստի պետք չէ զարմանալ, որ կան հազարավոր գյուղացիներ, բանվորներ եւ արհեստավորներ, որ «դաշնակցական» են անկախ իրենց արհեստից, եւ կան շատ տիտղոսավոր մասնագետներ, որ «դաշնակցա-

կան» չեն եւ լինել չեն կարող, կրկին անկախ իրենց արհեստից: «Դաշնակցականը» մի տիպար է, որ երբ հարկը պահանջե կարող է եւ պարտավոր է մասնագիտանալ, բայց մասնագետը չի կարող «դաշնակցական» դառնալ՝ ապավինած միմիայն իր մասնագիտությունը: Դրա համար պետք է «դաշնակցական» մտայնություն ունենալ եւ «դաշնակցական» բարոյական կառուցվածք:

* * *

Կանոնագիրը վստահությամբ թույլ է տալիս, որ հանձնառուները կրեն «դաշնակցական» անունը եւ գործի մեջ արդարացնեն իրենց կոչումը: Այս իմաստով «բազումք են կոչեցյալք եւ սակաւք ընտրեալք»: Ամեն քաղաքացի կարող է դաշնակցական դառնալ եւ շատերն են դառնում իսկապես, բայց քչերն են հավատարիմ մնում իրենց հանձնառության: Եվ սա մի չարիք չէ: Դաշնակցության ուժն իր անդամների քանակի մեջ չէ, այլ նրանց որակի մեջ է: Մի բուռ դաշնակցականներ ամեն տեղ կարող են հրաշքներ գործել. եւ գործած են իրոք, եթե եղած են «դաշնակցական»՝ Կանոնագրի առումով:

Պատմական իրադարձությանց բերումով կուսակցության առջեւ դրվում են խնդիրներ, որ լուծում են պահանջում: Այդ «լուծումները» կատարվում են ծրագրի համեմատ եւ կուսակցության համար նրանք մի-մի կայան են մեր ծրագրի իրացման ճամփին: «Ազգը», սակայն, կարծում է, որ այդ խնդիրները բախտորոշ են եւ վերջնական. եւ ժողովրդի կենդանի տարրերը խմբվում են Դաշնակցության դրոշի շուրջը: Բազմանում են գործակիցները, թանձրանում է համակիրների մթնոլորտը, ծավալում է գործն ու կազմակերպությունը: Լայն ալիքներով շրջան է անում կուսակցության անունն ու համբավը: Ամեն ոք «դաշնակցական է արդեն»: Բազմաթիվ ինքնասիրություններ ծաղկում են փարթամ՝ կուսակցության հմայքի լույսով եւ թվում է թե կազմակերպությունը հասած է իր զարգացման գագաթը: Եռում է հանրային եւ կուսակցական կյանքը, կատարվում է պատմական գործը հաջող կամ անհաջող վախճանով: Հանրային գործակցության ալիքը հետ է քաշվում: Շատերն այլեւս գործ չեն գտնում անելու, քանի որ այդ մի-

ակ գործի համար հարած էին կուսակցության: Շատերը լքում են դիրքերը, եթե «գործն» անհաջող վախճան է ունենում կամ վարկաբեկ անդրադարձում է ստանում հանրային գիտակցության մեջ: Բազմությունը խուսափում է հալածանքից կամ հանրային պարսավից եւ թվում է, թե կուսակցությունն իր քայքայման օրերն է ապրում: Բայց երբեք կուսակցությունն այնքան զորավոր չէ, քան այն ժամանակ երբ եկամուտ տարրերը լքում են նրան. որովհետեւ. ճիշտ այդ ժամանակն է, որ մնում են այն սակավաթիվ «դաշնակցականները», որոնք Կանոնագրի հինգ պահանջներին զոհացում են տված: «Ամեն ջանք թափելու» հանձնառությունը իշխում է տիրաբար՝ հավատարիմ անդամների հոգում եւ մղում է նրանց դեպի նոր գործեր: Նրանց համար նշանակություն չունի կատարված գործի անհաջող ելքը, քանի որ այդ «գործով» չի սպառվում կուսակցության ծրագիրը եւ Դաշնակցության դերը՝ հայության կյանքում: «Դաշնակցականին» գործ չի պակսում իր ծրագրի իրացման համար եւ ոչ պատմության արգանդն է ամլանում նոր պայմաններ ու խնդիրներ ստեղծելու: Հետ մղվելով մի ճակատից՝ «դաշնակցականը» գրոհ է տալիս մյուս ճակատների վրա: Պարտությունը ոչ թե հուսալքում, այլ բորբոքում է նրա եռանդը եւ հնարամտությունը: Պարտությունն ինքնին դառնում է մի դաս՝ շտկելու համար կազմակերպության թերիները եւ փոխելու պայքարի եղանակները: Կուսակցությունն իր ուժը ամփոփում է, հարվածի վայրը փոխում եւ ներքուստ զորանում է: Դրսի պարսավը անազդեցիկ է մնում համոզված դաշնակցականի համար, ինչպես դրան նախորդող հռչակն ու հիացումը չէին մթագնած նրա գիտակցությունը: Նա շարունակում է իր ճամփան, որ նախորոշված է իր ծրագրով եւ գործելակերպով: Սկսվում է մի ներքին եռ ու զեռ, որ մնում է աննկատ դրսի հիասթափ կամ հոգնած շրջապատին: Այսպես է, որ Դաշնակցությունը մնում է կայուն եւ ոչ մի փոթորիկ նրան չի հաղթահարում մինչեւ իսկ այն ժամանակ, երբ նրա ամենից փորձված եւ ազդեցիկ անդամները տառապում են բանտերի եւ աքսորների մեջ կամ ընկնում են կռվի դաշտերում:

Պետք չէ կարծել, ուրեմն, որ Դաշնակցության ուժը հետեւորդ զանգվածների մեծության մեջ է: Զանգվածները որ կուսակցական

չեն, այսօր կարող են հարել մեզ եւ վաղը լքել կուսակցության շարքերը, որովհետեւ նրանք «դաշնակցական» չեն կանոնագրական առումով, այլ համակիրներ են, գործակից կամ աջակից: Համընթաց ուժեր են նրանք, որ կուսակցության ղեկավարությամբ պատմական գործ են կատարում, համարելով այդ գործն անհրաժեշտ եւ բախտորոշ: Կուսակցությունը, սակայն իր ծրագրի հետապնդման ընթացքին նման գործեր շատ է ունեցած եւ դեռ շատ գործեր պետք է ունենա. գործեր, որ ծրագրի իրացման տեսակետով կայաններ են միայն, իսկ զանգվածների տեսակետով՝ բախտորոշ եւ վերջնական: Երբ պատմական կյանքի ընթացքը նոր խնդիրներ բերե լուծելու, զանգվածները նորից կղան ու կհավաքվեն կուսակցության դրոշի տակ, նրա ղեկավարությամբ պայքարելու համար: Կուսակցությունը, սակայն, շատ լավ գիտե այդ գործերի արժեքը ծրագրի իրացման տեսակետից, այս պատճառով նա հանգիստ է ներքուստ եւ վճռական իր ղեկավարության մեջ: Նրա թափը զորանում է զանգվածների բազմությանը զուգահեռ եւ հրաման թե սաստ՝ հնչում են տիրաբար: Նա իշխում ու վարում է, պատուհասում եւ վարձատրում է պայքարի հաջողության անունով, բայց ամեն տեղ իր անվերապահ վստահությունը տալիս է սակավաթիվ «դաշնակցական» ընկերների, որ իր մատյան գունդն են կազմում: Նրանց հավատարմությունն է միակ հիմունքը գործի հաջողության: Նրանց «դաշնակցական» բնույթն է միայն, որ կարող է հաղթանակ ապահովել անհավասար պայքարների ընթացքին եւ անհնարին պայմանների մեջ: Մեծ են զանգվածները, բայց լույծ են իբր խմբակցություն: «Դաշնակցական» սակավաթիվ խմբակն է, որ ողնահար է դառնում այդ լույծ զանգվածին եւ դարձնում նրան զորավոր մարմին: Դաշնակցությունը զանգվածներ է կառավարում եւ բազմատեսակ ճակատների վրա պայքար է մղում իր սակավաթիվ բայց հավատարիմ ընկերներին կոթնած, որոնք պատահաբար չէ, որ մտած են կռվի ասպարեզ եւ հատկապես այդ **մեկ** գործի համար չէ, որ զենք են առած. նրանք եկած են իրենց ծրագրի իրացման համար, որ այդ կարգի պայքարներ շատ է տեսած եւ դեռ շատ պետք է տեսնի մինչեւ վերջնական մարմնացում:

Այսպիսով պետք է շատ լավ տարբերել կուսակցական ուժերը համակիր զանգվածներից եւ հավատարիմ զինվորները օժանդակ

գնդերից: Կուսակցության ուժն ու զորությունը «դաշնակցական» ընկերն է եւ ոչ թե համակիր տարրը: Իր պատմական դերը խաղալու համար կուսակցությանն անհրաժեշտ են համակիր զանգվածներ, բայց զանգվածը կուսակցություն չէ եւ համակրանքը՝ պարտադրանք. մեկն անցողական է, անկայուն, մյուսը՝ հարատեւ է, մնայուն: Այս իմաստով Դաշնակցությունը հայոց քաղաքական կյանքի մնայուն սպայակույտն է, որ երբ դեպքերը բերին՝ կարող է համակիր զանգվածներից գործունակ բանակ պատրաստել: Այս իսկ պատճառով կուսակցության գաղափարների ծավալումը, կուսակցական գործերի կարգավոր ընթացքը, մեր շարքերի կարգապահ վարմունքը, մեր վարած պայքարների կազմակերպված բնույթը՝ անկախ նրանց հաջող կամ անհաջող ելքից, մեր կատարած գործերի հիշեցումը, մեկնությունն ու պատճառաբանությունը անհրաժեշտ աղդակներ են զանգվածներ խմբելու համար մեր դրոշի շուրջ եւ ստեղծելու համար համակրանքի լայն մթնոլորտ: Այս բարոյական մթնոլորտն անհրաժեշտ է մեր գործի համար, ինչպես նյութական մթնոլորտը՝ բույսերի աճի: Այն խուռներամ բազմությունները, որ ունկնդրում են Դաշնակցության խոսքը լինի բեմերից թե մամուլի մեջ՝ թաքնված ուժեր ունեն, որ կարող են երեւալ մի օր. ուժեր, որ կարող են մի կողմից Դաշնակցության շարքերը լցնել հավատարիմ կուսակիցներով, եւ մյուս կողմից անսալով նրա կոչին՝ պայքարի մտնել նրա դրոշի տակ, երբ պարագաներն այնպես բերեն, որ Դաշնակցության հերթական գրոհն իր ծրագրի իրացման համար զանգվածներն ըմբռնեն իբր կենսական եւ բախտորոշ մի գործ: Մեծ է զանգվածի ուժը եւ նրա բերած նպաստը մեր պայքարի օրերին, բայց զանգվածը կուսակցական չէ եւ լինել չի կարող: Կրկնում եմ, կուսակցության ուժը զանգվածների մեջ չէ, այլ զանգվածներ համախմբելու եւ պայքարի մղելու կարողության մեջ: Անհրաժեշտ է, որ հայ զանգվածները ճանաչեն Դաշնակցությունը իբր կազմակերպիչ ու վարիչ մեծ պայքարների, իբր հավատարիմ սպայակույտը հայ ժողովրդի, իբր գաղափարի անձնվեր եւ անշահախնդիր մարտիկներ, եւ համակրանքի թանձր շերտով պատեն մեր կազմակերպությունը: Այդ համակրանքն անհրաժեշտ է մեր խոսքն աղդու պահելու համար: Այդ համակրանքի ուժով է, որ

նրանք խուռներամ արձագանգ են տալիս մեր կոչին, երբ իրենց մթին եւ մեր պայծառ գիտակցությունը կացության մասին զուգադիպում են իրար: Այդ համակրանքը, սակայն արդյունք է մեր անձնվեր, անշահախնդիր եւ անշեղ գործունեության, որ կարիք չունի քծնանքի եւ շողոմության: Դաշնակցությունը կոչված է զանգվածները կրթելու եւ գիտակից ժողովուրդ դարձնելու, եւ ոչ թե նրանց մթին ու ստորին հակումները շոյելու: Դաշնակցականը գործում է ոչ այն պատճառով որ զանգվածները քաշե ետեւից, այլ այն պատճառով, որ այդպես են պահանջում իր Ծրագիրն ու Կանոնագիրը: Բայց քանի որ կուսակցության գործը բխում է իր ծրագրից, իսկ ծրագիրը բանաձեւումն է հայ ժողովրդի կենսական պահանջների, ուստի զանգվածը, որ ժողովուրդ է, գալիս է մեծ պայքարի օրերին կռվելու դաշնակցական մարտիկի կողքին եւ նրա դրոշի տակ: Գնահատելով ամեն կենսունակ ծիլ, որ երեւան է գալիս հանրային կյանքի ընդարձակ դաշտերում. չարհամարհելով ամենից համեստ ուժերը, որ կարող են մեր պայքարին նպաստել. մեր խոսքով՝ բայց մանավանդ մեր գործով համակրանք ստեղծելով զանգվածների մեջ, որ երբ առիթը գա՝ հենվինք նրան մեր ծրագիրը հետապնդելու համար՝ «դաշնակցականը» պետք չէ մոռանա երբեք, թե իր բուն ուժը իր գաղափարական տիպարի զորացման մեջ է. որ սակավաթիվ դաշնակցական սպայակույտը այն մակարդակն է, որ կոչված է մակարդելու հանրային եւ ընկերական շարժումները մեր մեջ: Որ կազմակերպության հարատեւությունը, նրա ներքին ամրությունը, նրա անդամների գաղափարական մաքրությունը, նրանց անշահախնդիր բարքն ու անձնվեր գործն են բուն ուժերը, որ շարժում են զանգվածները եւ նրանց նպաստով ու նրանց միջոցով պատմական դեր են կատարում հայության կյանքում:

* * *

Տեղն է հիմա, որ ուշադրության առնենք մի շատ կարեւոր պարագա: Դաշնակցությունը քաղաքական կուսակցություն է, որ ունի որոշ ծրագիր, այդ ծրագիրը թարգման է որոշ շահերի: Հանրային շահերի պաշտպանության եւ հետապնդման կուսակցություն

լինելով՝ Դաշնակցությունը շահակցական կազմակերպություն չէ: Նա հանրային շահեր է պաշտպանում եւ ոչ թե իր անդամների շահերը: «Դաշնակցականը» ոչ թե իր վիճակի բարվոքման է հետամուտ, այլ ժողովրդի կացության հեղաշրջումին: Այս պարագան պետք է պարզորեն դիտակցել եւ լավապես տարբերել: Մեր կուսակցությանը անդամակցողը սկզբից արդեն պետք է հաշտվի այն մտքի հետ, որ շատերին կարող է թվալ անիմաստ եւ արտառոց՝ թե նա մտնում է մի կազմակերպության մեջ, ուր պետք է շարունակ տա եւ կորցնե, առանց որեւէ նյութական բարիք սպասելու. որ ոչ թե կուսակցությունն է, որ նրան պիտի սնուցանե, այլ նա ինքն է, որ պետք է պահե կուսակցությունը իր աշխատանքով, դրամով ու կյանքով: Հազարավոր «դաշնակցականներ» թողած են տուն, դիրք եւ ազդեցություն եւ մտած են այս զարհուրելի բայց հմայիչ կազմակերպության մեջ ու շահած են մահ միայն: Կազմակերպությունը չարքաշության ու մահվան հրավեր է կարդում իր անդամներին եւ ոչ թե բարեկեցիկ կյանքի: Մի որոշ տեսակետով Դաշնակցությունը նման է նախնական եկեղեցուն: Նա կրթում է իր անդամներին գաղափարի համար մեռնելու: Կարծեք հայոց մարտիրոս եկեղեցու կենդանի ավանդությունը անցած է մեր կազմակերպության, թողնելով իր պատմական պատյանը հոգով մեռածներին՝ իրենց մեռելները թաղելու եւ գերեզմաններ բերելու, որ «լի են ոսկերօք մարդկան եւ ամենայն պղծութեամբ»: Ոչինչ չի խոստանում Դաշնակցությունն իր անդամներին. ոչ դիրք, ոչ պատիվ, ոչ գանձ, ոչ հանգիստ: Եթե երբեմն հասցնում է հանրային բարձր դիրքի՝ միմիայն նրա համար, որ այդ դիրքի վրա կատարես «դաշնակցական» պարտականություն: Երեկ պարզ զինվոր էիր կամ խմբապետ, այսօր դառնում ես նախարար, բայց չես դադարում մնալ «դաշնակցական», ենթակա որոշ Ծրագրի եւ Կանոնագրի: Ու երբ նկատում է թե նոր դիրքի վրա դու փորձում ես մտածել ու գործել իբր ոչ «դաշնակցական»՝ նա քեզ գահավիժում է չալաչար, առանց նայելու հուչակիդ ու դիրքիդ: Շատերը տեսած են հուչակավոր անուններ, որ հորինած է Դաշնակցությունը իր այս կամ այն անդամի համար եւ գահավեժ անկումներ, որ ստեղծած է նո՛ւյն Դաշնակցությունը նո՛ւյն մարդկանց համար: Իր պահանջն է, որ

հանրային գործերը վարեն գաղափարական տիպարներ եւ գործեն միմիայն գաղափարի համար, առանց համարձակելու վայրկյան իսկ մտածել իրենց անձնական շահի համար: Այս պատճառով, այն դիրքերը, ուր խելահեղ մրցությամբ դիմում են սոսկական փառատենչները, «դաշնակցական» մարդու համար ճշմարիտ դողդոթաներ են, ուր ստիպված են հանրային դիրքի պահանջները հաշտեցնել գաղափարական դաշնակցականի բարձր կոչումին եւ անարվեստ ու համեստ բարքին: Եվ արդեն այդ դիրքերը ստիպումով է, որ տրվում են «դաշնակցականին» եւ ո՛չ իբր մեծարանք այլ իբր պարտադրանք: Դրսի մարդկանց այս ամենը հեքիաթ կարող են թվալ, բայց դաշնակցականները գիտեն, որ այս այսպե՛ս է:

Այս պարագան շատ բնորոշ է մեր կազմակերպության համար. կրկնում եմ Դաշնակցությունը մի շահակցական ընկերություն չէ, ապրուստի եւ բարեկեցության մի ձեռնարկություն, իր անդամների նյութականն ապահովող ու բարելավող մի կազմակերպություն, այլ ուխտվածների մեկ միություն է սերտորեն մտերմացած, խստորեն կապված ու տաժանորեն հակակշռված: Եվ զարմանքն այն է, որ մի անգամ օձիք տվողը այլեւս ազատում չունի: Բավական սրիկայություն պետք է հանձնառության կապանքները խզելու համար: Այս չարքաշության, անդադրում զոհաբերության եւ վտանգալից ասպարեզն իր հմայիչ գեղեցկությունն ունի, որ անմատչելի է շատ շատերին: Ամենքը հաշտ են այն մտքի հետ, որ մտած են կուսակցության մեջ ավելի կամ պակաս զոհելու համար եւ ոչ թե շահի. բայց Դաշնակցությունը հետամուտ է հայ ժողովրդի գերագույն շահերի պաշտպանության: «Դաշնակցականը» պարտավոր է զոհաբերել, որ հայ ժողովուրդը ապրել կարենա: Նա ուխտած է դուլ ու դադար չունենալ, «ամեն ջանք թափել», մինչեւ հայ ժողովուրդն ազատվի իր ստորադաս եւ ստրուկ վիճակից:

«Դաշնակցականն» ամենից առաջ ինքն իր մեջ աշխատում է սպաննել պատմական ստրկության հետին մնացորդը եւ վախկոտության վերջին հետքերը սրբել: Դրա համար «դաշնակցականները» սովորաբար ավելի խիզախ են, քան արի, թեեւ արիությունը եւս անպակաս է նրանց շարքերում: Ոգեկան եւ բարոյական այն հանդարտ քաջությունը, որ հատկանիշն է արիության, հաճախ պակասում է խիզախին, որ քաջ է պոռթկումով: Սա ոչ թե ժառանգական արիության մարմնացումն է, այլ ժառանգական ստրկության հեղաշրջումը. ուստի հաճախ «դաշնակցականը» չի ճանաչում չափի զգացում: Բայց ավելի լավ է խիզախ լինել պայքարների մեջ, քան թուլամորթ ու ստրկամիտ: «Դաշնակցականն» այսպիսով իր իսկ անձի մեջ վերակազմում է նոր հայության տիպարը, բորբոքելով ժառանգական արիության կայծերը, որ մնացած են անթեղված եւ հարաճուն խիզախությամբ խարանելով ու սպիացնելով ժառանգական ստրկամտության վերքերը: Այս բարոյական հեղաշրջումը ամենից ավելի հատկորոշ գիծն է մեր կուսակցության: Սասունցի Դավթի ավանդական տիպարն է, որ կենդանանում է «դաշնակցականի» մեջ, հեղաշրջելով մի դարավոր մտայնություն: Այս հեղաշրջման ճամփին «դաշնակցականը» կորցնում է շատ անձնական շահեր եւ խզում է շատ թանկագին կապեր, բայց նրա աչքին չեն երեւում այդ կորուստները, որովհետեւ մի կողմից խթանում է Կանոնագրի պահանջը՝ «ամեն ջանք թափել», որին նա հանձնառու է դարձած, մյուս կողմից կշտամբում կամ քաջալերում է նահատակ ընկերների թանկագին հիշատակը, որ հսկում է անմար. ընկերներ, որ ոչ մեկ բանով պակաս էին նրանից եւ հաճախ շատ բանով առավել, եւ որոնք, սակայն, մեռան պայքարի ճամփին, կուսակցության դրոշը թողնելով իրեն: Դաշնակցությունն այսպիսով մի ուրույն բարոյական աշխարհ է, ուրույն ըմբռնումներով ու բարքերով, որ ստեղծում ու սնուցանում է ուրույն տիպարներ: Համեմատեք ուրիշ քաղաքական կուսակցություններ նրա հետ եւ կտեսնեք անդնդախոր տարբերությունը: Սա ոչ թե շահակից անձերի միություն է, այլ արիացող տիպարների ընկերություն: Այստեղ ոչ թե անձնական եւ նյութական շահն է, որ կապում է մարդկանց, այլ բարոյական ուխտի նույնությունն է, որ դարձնում է ընկեր եւ Ծրագիր-Կանոնագրի միությունը՝ համընթաց: Եվ գործի ընթացքին, բուն իսկ մարտիկների շրջանում՝ լինեն նրանք զենքի թե մտքի ընկեր, ոչ այնքան Ծրագիրն ու Կանոնագիրն է զգացվում, որքան բարոյական կապը: Դաշնակցության պատմությունն այնպես է ընթացել, որ նա դարբնած է ավելի բարոյական տիպարներ, քան պատրաստած է «գործիչներ» բառի սովորական առումով: Եվ շատ անգամ այնպես է թվում , որ «դաշնակցական» մարդիկ առանց որեւէ Ծրագրի եւ Կա-

նոնագրի կարող են մնալ նույն բարոյական ընտանիքը, հենված իրենց ոգեկան կառուցվածքին եւ գաղափարական տիպարին, միշտ ասպետորեն պատրաստակամ զոհաբերելու իրենց կյանքն ու աշխատանքը հայ ժողովրդի բարօրության համար: «Դաշնակցական» տիպարների այս միության մեջ – որ մեր կազմական կյանքի բարձրագույն արդյունքն է,- Դաշնակցությունը դուրս է գալիս կուսակցության սահմանից եւ դառնում ասպետական կարգ: Նրա մեջ արթնացած է եւ արծարծվում է վերստին հին եւ արի հայության տոհմական առաքինությունը «հասանել մարտնչել» միամիտ եւ միասիրտ եւ «ի վերայ աշխարհին դնել զանձինս իւուրեանց մինչեւ ի մահ»: Եվ ավանդական հայ ասպետի հոյակապ կերպարանքն է կարծեք, որ աշխատում է վերակենդանացնել անձնվեր «դաշնակցականը» այսօրվան գետնատարած հայության մեջ, այն ազնվական ասպետի – Մուշեղ Մամիկոնյան,- որ «զտիւ եւ զգիշեր կայր յաշխատութեան. ջանայր եւ ճգնէր կալ ի ճակատու պատերազմին ... ի վերայ աշխարհին կեալ եւ մեռանել, ի վերայ անուանն քաջութեան, ի վերայ բնակ տերանց եւ ի վերայ բնակչաց աշխարհին ... զանձն յուր փոխանակ առնել աշխարհին. եւ հանձն իւուր խնայէր ի մեռանել». (Փավստոս. Դ. 21 եւ Ե. 20): Եվ մյուս հոյակապ ասպետի – Մանվել Մամիկոնյան – խրատն է կարծեք, տված իր որդուն.- «Լինել միամիտ (հավատարիմ), ջանալ եւ վաստակել, եւ տալ պատերազմ փոխանակ աշխարհին Հայոց զանձն քո» (Փավստոս. Ե. 44), որ աշխատում են կյանքի մեջ գործ ու տիպար դարձնել Սերոբներն ու Գեվորգ Չավուշները՝ մթին գյուղերից եւ Ռոստոմներն ու Քրիստափորները՝ լուսավոր քաղաքներից: Այս նկատումով Դաշնակցությունը մի հրաշափառ հարություն է հայի արության եւ մի թոթափում ստրկական շղթաների: Ժողովրդից է նա եւ ժողովրդի համար, -բայց ժողովուրդ չէ: Իր գերագույն նպատակն է ստեղծել մի հայ ժողովուրդ իր տիպարի նման, ինչպես ինքը վերստեղծումն է հայ ավանդական տիպարի, որ խաթարված էր դարավոր ստրկության մեջ: Միացյալ եւ Անկախ Նոր Հայաստանին պատշաճ է նոր հայություն. նոր հայությունը միայն կարող է նոր Հայաստան ունենալ. եւ Դաշնակցությունն աշխատում է այդ նոր հայի տիպարն ստեղծել՝ նոր Հայաստանին հասնելու համար:

* * *

Եթե ամեն մի դաշնակցական լրիվ գոհացում տա Կանոնագրի հինգ պահանջներին միաժամանակ, կարող են կարծել, որ այն դեպքում մենք կունենանք միօրինակ տիպարների մի ճանճրալի բազմություն: Կրկնելով միեւնույն տիպարը, այդ միօրինակությունը թվում է թե պետք է իշխեր ժամանակի եւ տարածության մեջ, այսինքն ամեն տեղ նույն տիպարները եւ ամեն ժամանակ նույն տիպի մարդիկ: Սակայն, այդպես չէ իրոք. Դաշնակցությունը բազմազան տարբերությանց ցուցահանդես է: Դաշնակցականները նման տիպարներ են, ո՛ւր եւ ե՛րբ հանդիպեն, բայց նույն տիպարները չեն: Ինչպես եռանկյունիները եռանկյունի են ամեն տեղ, բայց կան մեծ ու փոքր, սուրն ու բութը, ուղղածիրն ու կորածիրը: Ամեն մի Դաշնակցական շարժվում է իր տիպարի ուղղությամբ, բայց ոչ ամենքը նույն արագությամբ եւ նույն տեղն են հասած: Ամեն մեկն աշխատում է «ամեն ջանք թափել» բայց ոչ ամենքը նույն գործերի մեջ եւ ոչ նույն չափով: Իր էության մեջ անգամ – իր Ծրագրի եւ Կանոնագրի մեջ – Դաշնակցությունն անշարժ կուսակցություն չէ: Ոչ միայն իր գործերն են փոխվում, այլեւ ինքը իբր գործող: Քառասուն տարվա ընթացքին ոչ միայն մարդիկ են փոխված, այլեւ նրանց հմտությունները: Այդ փոփոխությունը բնական է եւ անհրաժեշտ: Այդ փոփոխությունն է Դաշնակցության ներքին պատմությունը, անկախ նրա գործերից, որ նրա արտաքին պատմությունն են կազմում: Փոփոխվելով միասին՝ Դաշնակցությունը մնում է **մի** կուսակցություն եւ իր բնույթով **նույն** կուսակցությունը: Միաժամանակ նա ամենից ավանդապահ կուսակցությունն է եւ այդ ավանդության մեջ է իր միության ու նույնության գաղտնիքը: Նա ա՛յն չափով անփոփոխ չի մնում, որ հնանա եւ անպետքանա հանրային կյանքի ղեկավարության համար եւ այդ իսկ պատճառով դուրս նետվի կյանքից, բայց եւ ա՛յնքան չի փոփոխվում հեղհեղուկ, որ վստահություն չներշնչե իբր հենարան կամքերի եւ լծակ՝ գործերի: Նա իր բնույթով մնում է նույնը, բայց հարմարվում է կյանքին: Եվ որքան խստորեն աշխատում է հավատարիմ մնալ իր ավանդությանց, այնքան լրջորեն հարմար-

վում է կյանքին: Նա նման է մարդկային լեզվին: Ամեն ոք աշխատում է ճշտորեն խոսել իր լսած լեզուն եւ հարազատ մնալու ճիգով՝ փոխվում է լեզուն, ու մի օր տեսնում ենք գրաբարը դարձած է աշխարհաբար, թեեւ 1500 տարի բոլոր զավակներն աշխատած են իրենց մոր լեզուն խոսել հավատարմությամբ: Երկուսն էլ հայոց լեզու են, բայց տարբեր են արդեն. նման են, բայց նույնը չեն: Այս է բնական ճամփան ամեն մի բարեշրջության: Ամեն փոփոխություն ոչ թե բեկումն է այստեղ, այլ հոսում. ոչ հեղաշրջում, այլ բարեշրջում: Ձգտելով հեղաշրջել հայոց կյանքի պայմանները: Դաշնակցությունը ներքուստ բարեշրջվում է. ուստի նա մնում է **մի** եւ **նույն**, թեեւ փոփոխվում է շարունակ: Կանոնագրի հինգ պահանջները շարունակում են մնալ պարտադիր, բայց գոհացվում են տարբեր եղանակով ու բովանդակությամբ:

Այս երեւույթը ընկերաբանական է եւ արժե կանգ առնել իր մեկնության վրա: Այս ի՞նչպես է, որ Դաշնակցությունը մնում է նույնը, բայց փոփոխվում է շարունակ՝ հարմարվելով կյանքին ու միջավայրին: Հիմնական պատճառը իր կատարած գործն է: Միշտ հավատարիմ իր Ծրագրին ու Կանոնագրին՝ Դաշնակցությունը հղանում ու կատարում է գործեր, որ իր համոզումով տանում են դեպի ծրագրի իրացումը: Անկախ ձեռնարկի ելքից – հաջող կամ անհաջող – այդ գործի համար մշակած մասնավոր ծրագիրն ու որոշումները՝ գործի վախճանին՝ դառնում են ավելորդ. նրանք հղացումներ ու վճիռներ չեն այլեւս, այլ իրացած փաստեր: Այդ իրացած փաստերի հետեւանքով փոխվում է կացությունը: Կյանքի մեջ ստեղծվում է մի փաստ, որ առաջ չկար. եւ կուսակցությունը կատարած է արդեն մի գործ, որ առաջ չուներ: Նա հիմա մի որոշ գործ կատարած կազմակերպություն է: Ընկերները հիմա ունեն մի գործի փորձառություն, որ առաջ չունեին: Ուրիշ ընկերներ աջակցած են արդեն մի որոշ գործի, որի մասին առաջ լուր իսկ չունեին: Եվ շրջապատը, որ առաջ մի որոշ վերաբերում ուներ դեպի կուսակցությունը, այս նոր գործից հետո փոխում է իր վերաբերումը դեպի լավը կամ վատը, նայած թե կատարված գործը բարիք է համարում թե չարիք: Գործից շահողն ու տուժողը տարբեր վերաբերում են մշակում դեպի գործողը: Մի խոսքով փոխվում է

կացությունը ներքուստ եւ արտաքուստ. կուսակցությունն՝ իր գործով, որ նոր դրվագ է դառնում իր հին պատմության, գործողն՝ իր ձեռք բերած փորձառությամբ. աջակից ընկերները՝ իրենց օժանդակությամբ, շրջապատն՝ իր վերաբերումով:

Ձեռնարկվում է հերթական գործը ծրագրի իրացման համար. կազմակերպվում է նոր ձեռնարկը, բայց տարբեր են պայմանները ներքուստ եւ արտաքուստ: Թե հղացողն ու որոշողը եւ թե գործադրողը փոխված են արդեն, նրանք նույն մարդիկն են դուցե, բայց արդեն փորձառու են: Գործի ծրագիրն ու որոշումները նույնը չեն, ինչ որ առաջ, քանի որ ձեռնարկն ինքը նոր է եւ տարբեր, բայց հին փորձառությունն ազդում է նոր ծրագրի եւ որոշումների վրա: Սրանք նոր մտայնության արդյունք են, որ ինքն արդեն արդյունք է նոր փորձառության: Կուսակցությունն իրեն զգում է ավելի փորձառու, քան նախորդ գործի ժամանակ, ուստի ավելի ինքնավստահ է, կամ ավելի զգուշավոր իր նոր որոշումների մեջ, նայած թե նախորդ գործը հաջո՞ղ թե անհաջող ելք է ունեցած: Նույն ելքի հետեւանքով՝ նոր ծրագիրը կազմվում է ավելի լայն կամ ավելի նեղ չափերով: Մի խոսքով՝ կուսակցությունը նույնն է, բայց կուսակցականը փոխված է. իր նախորդ գործը մի փաստ է արդեն թե՛ հանրային կյանքի մեջ եւ թե՛ կուսակցականի եւ հանրության գիտակցության մեջ: Եթե նախորդ ձեռնարկը մի ահաբեկում էր, այսօր ահաբեկված չկա այլեւս: Գործի պայմանները փոխված են արդեն: Եթե ահաբեկվածը խուզարկություն էր կատարում շարունակ՝ նրան փոխարինողը զգուշանում է. դրա հետեւանքով զենքի փոխադրությունը դյուրանում է: Իսկ եթե նորեկն ավելի դաժան է՝ հալածանքները խստանում են, ոմանք նահատակվում են, ուրիշները խուսափում են, բուսնում են մատնիչներ եւ այլն եւ այլն: Այսպես ուրեմն գործերի հետեւանքով փոխվում է կացությունը – գործիչներն ու շրջապատը, փորձն ու մտայնությունը եւ դրա հետեւանքով նոր որոշումներ են կայացվում եւ գործելու նոր ճամփաներ գծվում: Բայց հիմնականը մնում է նույնը այս դեպքում: Ծրագիր ու Կանոնագիր փոփոխություն չեն կրում. փոխվում են միայն մարդիկ, որոշումներն ու ձեռնարկները: Կուսակցությունը նույն է իր Ծրագրով ու Կանոնագրով, բայց փոխված են իր որոշումները, գործերն ու անդամները:

Ոչ միայն մենք ենք, որ փաստեր ստեղծելով ազդում ենք մեզ եւ ուրիշի վրա, այլ եւ ուրիշ միջավայրերում ստեղծվում են փաստեր, որ ազդում են մեզ ու մեր միջավայրի վրա: Ծագում է համաշխարհային պատերազմը՝ ոչ մեր կամքով ու որոշումով: Ստեղծվում է անկախ Հայաստանի մի համեստ կորիզ: Փոխված են միջավայրի պայմանները. փոխվում են գործերն ու գործիչները: Նույն «դաշնակցական» մարդիկ են, բայց պետք է ուրիշ գործեր հղանան եւ ուրիշ որոշումներ կայացնեն: Հին փորձառությունն օգտագործվում է նոր հղացումների համար, հին գործիչները՝ նոր գործերի համար, կատարած գործերն ազդում են մշակվող ծրագրների վրա: Հիմնական ծրագրի պահանջները հիմա մեզնից է կախված գործադրել. մի մասն իրանում են անմիջապես, մյուս մասը հերթի են սպասում: Բայց ստեղծված կացությունն այն չէ, որ ակնկալած կամ նախորոշած էր ծրագիրը: Նա պահանջում էր դաշնակցականորեն միացած Կովկաս՝ Ռուսաստանին դաշնակցորեն միացած: Բայց Ռուսաստան չկա, որ Հայաստանը նրա հետ դաշնակցորեն միանա, եւ ոչ Կովկաս գոյություն ունի, որ Հայաստանը դաշնակցաբար միանա նրան: Թաթար ու վրացի անջատ միավորներ են դարձած: Նույն Դաշնակցությունն է, նույն Ծրագրով ու Կանոնագրով, բայց պայմանները փոխված են: Բազմահազար զանգվածներ – դաշնակցական, համակիր, գործակից, սոսկական հայեր՝ առանց կուսակցական պիտակի՝ բոլորված են Դաշնակցության շուրջը եւ գործում են նրա ղեկավարության տակ: Ծնունդ են առնում նոր տենչեր, բացվում են նոր հորիզոններ այն բարձունքից, ուր հասած է հայությունը պատմական դեպքերի ալիքներով վերացած, ինչպես մեկը, որ հասնում է մի լեռան գագաթ: Կատարված գործերը վստահություն են ներշնչում զանգվածներին եւ վարիչներին, կացությունը հզոր թելադրանքներ է անում եւ կյանքի անդիմադիր բերումով փոփոխության է ենթարկվում ամենից ավելի անփոփոխելին -կուսակցության ծրագիրը: Ինքնավար, դաշնակցաբար Կովկասին եւ նրանով Ռուսաստանին կապված Հայաստանի գաղափարը մթագնում է մարդկանց գիտակցության մեջ եւ նրան փոխարինում է Միացյալ եւ Անկախ Հայաստանի գաղափարը: Փոխվում է կուսակցության դերն ու դիրքը հայ կյանքում ներքուստ եւ աշխարհի մեջ՝ արտաքուստ: Մշակվում է մի նոր Կանոնագիր, որ սահմանում է պետական մարմինների եւ կուսակցության հարաբերությունը: Ծրագիրը դառնում է դրդիչ բազմատեսակ գործառնությանց ու ձեռնարկների: Նույն կուսակցությունն է դարձյալ, բայց արդեն փոփոխ Ծրագրով, Կանոնագրով ու գործերով: Այսպես ուրեմն կատարած գործը ինքնին սկզբունք է փոփոխության եւ վերակազմության:

Բայց ինչն է, սակայն, որ այս բոլոր փոփոխությանց մեջ կայուն է պահում կուսակցությունը եւ կազմակերպությունը.- դաշնակցական տիպարների նույնությունը նախորդ գործիչների համեմատությամբ: Անկախ գործերի տեսակից ու չափից՝ դաշնակցականները մնում են նույն տիպարի մարդիկ, նույն բարոյական կառույցները. աշխատավոր հայ ժողովրդի անկաշառ եւ անձնվեր սպասավորներ, որ ենթակա են նույն Կանոնագրին եւ հետամուտ են նույն ծրագրի իրացման: Կուսակցությունը փոփոխած է իր ծրագրի մի մասը եւ հավելում բերած է իր Կանոնագրին, բայց սպետական կարգի բարոյական խարիսխները նույն են մնացած եւ անդամների տիպարները իրենց բարոյական էությամբ անփոփոխ են տեւապես: Ըստ էության նույն Դաշնակցությունն է ամեն տեղ եւ նույն դաշնակցականները, որ «ամեն ջանք թափում են» Կանոնագրի հինգ կետերին գոհացում տալու:

Կազմակերպական փորձառությունը, որ ձեռք է բերված համեստ խմբերի եւ մարմինների մեջ, դառնում է զորավոր ազդակ հանրային մեծ շարժումներ վարելու գործում: Շարժումները փոխում են իրենց ընթացքը, դառնում են նպաստավոր կամ աննպաստ, բայց կուսակցությունն իր էության մեջ մնում է նույնը եւ «դաշնակցականը» հավատարմորեն կրկնում է նախորդ տիպարների հիմնական գծերը: Այս տեսակետով ոչ այնքան գործերն են կարեւոր, որքան կազմակերպությունը եւ կան օրեր երբ պետք է գործերը լքել, կազմակերպությունը պահելու համար: Կարճամիտներին կարող է թվալ, որ սա կնշանակե միջոցն ավելի գերադասել, քան նպատակը, բայց իրական կյանքը եւ ուղիղ դատումը մեզ տարբեր բան են ասում: Կազմակերպություն ունենալով միշտ կարելի է գործեր կատարել, բայց կազմակերպության գոյությունը

վտանգելով, ծրագիրը կմնա անտեր եւ անտիրական եւ հանրային գործերը կստանան «բնական» ընթացք: Եվ ճիշտ այս է պատճառը, որ հայ ժողովրդի ներքին եւ արտաքին թշնամիները գիտակցաբար թե անգիտակցաբար ամեն կերպ աշխատում են քայքայել Դաշնակցությունը, որովհետեւ լավ գիտեն թե քանի նա կա, միշտ կարող է «գործեր» ստեղծել, իր ծրագրին հետամուտ եւ Կանոնագրին ենթակա, իսկ եթե նա վերանա՝ հայության կյանքը ցրիվ եւ անկազմակերպ գործերի մի պղտոր ջուր կդառնա, ուր ամեն ոք կարող է իր ուզած ձուկը որսալ:

Այսպիսով Կանոնագրի հինգ պահանջները, որ առաջին նվագ թվում են այնքան համեստ ու հասարակ իրոք մեծարժեք են ոչ միայն կուսակցական այլեւ հանրային տեսակետով: Եվ այդ պահանջների ամենօրյա կատարումը, որ ոմանց թվում է աննշան ու տաղտկալի, իրոք այն մուրճն է, որ դարբնում է կուսակցության պողպատը, դարձնելով նրան հատու զենք ընկերային պայքարների մեջ: Այդ պահանջներին հավատարմորեն գոհացում տալով է, որ կուսակցությունը մնալով միշտ նույնը՝ ենթարկվում է արդյունավոր փոփոխությանց եւ տեւաբար հարմարվելով կյանքին՝ չի գուլանում ու ժանգոտում խաղաղ օրերին:

Այս տեսակետով ամեն մի «դաշնակցական» կոչված է նույն դերը խաղալու կուսակցության մեջ, ինչ որ նրա հիմնադիրներն ու հետագա պահնորդները: Մի խումբ նույն տենչերն ունեցող մարդիկ ժամանակին մշակած են մի քաղաքական-տնտեսական հեղաշրջման իրագործելի ծրագիր: Իրենց ծրագրի իրացմանը հասնելու համար նրանք կազմած են մի Կանոնագիր եւ հերթական ձեռնարկների համար հանած են որոշումներ, տրամադրած են շատ համեստ դրամական միջոցներ եւ աշխատած են իրենց գաղափարները տարածել եւ կուսակիցներ գտնել, անձամբ «ամեն ջանք թափելով» իրենց Ծրագրի, Կանոնագրի եւ որոշումների իրագործության համար, կանգ չառնելով մինչեւ իսկ մահվան առջեւ: Նույնը վիճակված է անելու եւ հետագա անդամներին. ընկերներ նրանք գտնում են խմբի մեջ, որոնց թիվը պարտավոր են ավելացնել. ծրագիրը նրանք գտնում են պատրաստ, բայց որ կոչված են փոխելու՝ հարմարելով կյանքի բերումին. ենթակա են մի կանոնագրի, որ կարող

են փոփոխության ենթարկել՝ ընկերների հետ համախորհուրդ, կատարում են որոշումներ, որ իրենք են հանած կամ իրենց ընկերները՝ համախորհուրդ իրենց հետ. կուսակցական տուրք են վճարում եւ պարտավոր են «ամեն ջանք թափել» իրացնելու իրենց Ծրագիրը, Կանոնագիրն ու որոշումները: Այսպիսով ոչ միայն ավանդ են ստանում, այլեւ ավանդ են ստեղծում նախորդների պես: Ոչ միայն հավատարմությամբ պահում են ավանդը, այլ եւ հավատարիմ մնալու համար փոփոխում են շարունակ: Այսպիսով, ըստ էության, կրկնվում են ոչ միայն դաշնակցական տիպարները, այլեւ նրանց պարտականությունն ու դերը կուսակցության մեջ: Դաշնակցության անդամակցիլ, «դաշնակցական» կոչումն իրավամբ առնել իր վրա նշանակում է աշխատել, որ ընկերային զորավոր ազդակը – Դաշնակցությունը – տեւապես մնա զորավոր՝ իր ընկերային հեղափոխական դերը կատարելու մեր կյանքում: Ամեն մի «դաշնակցական» կոչված է Սասունցի Դավթի նման «թուր կայծակին» շարժելու Մսրա Մելիքի դեմ. նա պարտավոր է հոգալ թե իր բազկի զորության մասին՝ բարոյական տիպարը մշակելով իր մեջ եւ թե կայծակե թուրի զորության մասին՝ «ամեն ջանք թափելով», որ նա չգուլանա եւ չժանգոտի անտեղի եւ անվայել գործերի մեջ, այլ միշտ սրբած ու պատրաստ՝ ասպետական անշահախնդիր ձեռքի մեջ, օրհասական պայքարների օրերին՝ իշնի թափով ու զարկե սարսափով...

Ահա թե ինչ են թելադրում Կանոնագրի երկու չոր ու ցամաք հոդվածները:

* * *

Մեր կուսակցությունը կոչվում է Հայ Յեղափոխական Դաշնակցություն: Իր կազմության օրերին նրա անունն էր «Հայ Յեղափոխականների Դաշնակցություն»: Նույն նպատակին ձգտող, բայց տարբեր խմբակցությանց պատկանող հայ հեղափոխականներ, դաշնակցելով իրար հետ ընդհանուր գործի համար՝ կազմեցին մեր կուսակցությունը: Այսպիսով իր կազմության օրերին նրա նպատակը գործնական էր: Նա ոչ այնքան հետամուտ էր ամեն կողմով

համամիտ մարդիկ գտնելու եւ բերելու իրար քով, որքան նույն գործին ու նպատակին ձգտող հեղափոխականներ դարձնելու իրար դաշնակից: Այս պատճառով նա գործեր ունեցավ, առաջ քան ծրագիր ունեար: Դրանք **տարբեր** մտայնություն ունեցող մարդիկ էին, բայց **բոլորովին** նույն գործին ու նպատակին էին հետամուտ. այդ նպատակը տաճկապատկան Հայաստանի ազատագրությունն էր: Մտածումի նույնությունն այսպիսով նախապայման չէր կուսակցությանն անդամակցելու: Ծրագրի ընդհանուր գծերը նույնն էին եւ պատճառաբանությունն ընդհանրապես նույն հիմքերն ուներ, բայց այդ հանգամանքը առաջնակարգ նշանակություն չուներ. կարեւորը գործն էր: Ով որ ձգտում էր հայ ժողովրդի ազատագրության եւ գործնապես աշխատում էր այդ նպատակի համար, դրանով իսկ իրավունք էր ստանում Դաշնակցության անդամակցելու: Ժողովրդի խավերից դուրս եկած գործիչները բնավ մտահոգ չէին այն մասին թե ի՞նչն է իրենց պայքարի վերջնական նպատակը. «ազատություն», ասում էին նրանք եւ զենք առնում, անցնում երկիր՝ հարստահար ժողովրդին օգնելու համար եւ հայերին ազատելու թուրքի լուծից: Մտավորական խավն էր, որ երբեմն գրամարտ էր մղում ծրագրի համար. մարտիկը գիտեր իր թշնամին իբր թուրք եւ գնում էր նրա ձեռքից հայ ազատելու:

Կուսակցության գործնական բնույթը արգելք էր դառնում ծրագրային խնդիրների վրա երկարորեն կանգ առնելու եւ այդ կարգի հարցեր քննում էին ու նրանց շուրջը պայքար ստեղծում առավելապես այն մարդիկ ու խմբակները, որ գործի մեջ թերանում էին: Դաշնակցության հիմնադիրներն անգամ ծրագրային խնդիրների մեջ շատ բարակը չէին մանում: Ընդհանրապես պարզ էր շարժման նպատակը – այդքանը բավ էր գործեր հղանալու, կազմակերպելու եւ վարելու համար: Ոչ թե չէին գիտակցում ծրագրային խնդիրների արժեքը, այլ չէին կարծում, որ նրանց մանր քննությունն ու լուծումը գործնական հեղափոխության համար անխուսափելի անհրաժեշտություն լիներ: Այս պատճառով մի որեւէ հեղափոխական ձեռնարկի ծրագիրն ավելի շատ ժամանակ էր խլում եւ ավելի մեծ վիճաբանությանց տեղիք տալիս, քան բովանդակ կուսակցության ընդհանուր ծրագրի մշակումը: Հավանորեն ամենքը մտածում էին. «նախ ազատագրվենք, հետո կտեսնենք թե ինչպես պետք է կազմակերպել ժողովրդի կյանքը»: Այս գործնական ոգին մեր կուսակցության հիմնական հատկությունն է եղած եւ շարունակում է մնալ մինչեւ այսօր: Ծրագրային խնդիրները հիմա շատ ավելի արժեք ունեն, քան առաջ, բայց շարունակում են նվազ արժեք ունենալ քան գործնական հեղափոխության խնդիրները:

Սկզբում կուսակցությունը կոչվում էր «Հայ Յեղափոխականների Դաշնակցություն», բայց շուտով դարձավ «Հայ Յեղափոխական Դաշնակցություն»: Այս հանգամանքը անհետեւանք չմնաց հետագային: Կուսակցականների գիտակցության մեջ Դաշնակցությունն իբրեւ հեղափոխական կուսակցություն սկսավ ձեւավորվել ավելի, քան իբր հեղափոխականների դաշնակցություն: Ուշադրությունը՝ ժամանակի ընթացքին՝ կուսակցության անդամների որակից անցավ բուն իսկ կուսակցության բնույթին: Ոչ այնքան հեղափոխականների դաշնակցություն, այսինքն հեղափոխական մարդկանց միություն, այլ հեղափոխական դաշնակցություն, այսինքն հեղափոխական մի որոշ ծրագիր հետապնդող կուսակցություն, որ ունի հեղափոխական գործելակերպ: Եվ աստիճանաբար Դաշնակցությունը դարձավ ոչ թե առհասարակ հեղափոխականների միություն, այլ դաշնակցական իմաստով հեղափոխականների կազմակերպություն: Հիմա նա նույն մտածումն ու ծրագիրն ունեցող հեղափոխականների կուռ միություն է եւ ոչ թե նույն նպատակն ունեցող հեղափոխականների դաշնակցություն: Հիմա մեր նպատակներն ունեցող մարդիկ, որ գործակցում են մեզ, դրանով չեն դառնում «դաշնակցական». նրանց մենք այսօր համարում ենք գործակիցներ, համակիրներ, աջակիցներ, օժանակներ, բայց ոչ կուսակցականներ եւ մեր կազմակերպության անդամներ: Մենք չենք մերժում նրանց գործակցությունն ու աջակցությունը, բայց նրանց տարբերում ենք մեզանից: Մենք նրանց նույնպես հեղափոխական ենք համարում, բայց ոչ դաշնակցական: Նրանց «հեղափոխական» ճանաչելու հետեւանքով է, որ մենք ընդունում ենք նրանց գործակցությունը եւ հնար ենք տալիս մեր կազմակերպության մեջ եւ մեր դրոշի տակ հետապնդելու **իրենց** նպատակները, որ նաեւ մերն են, բայց մենք նրանց զատում ենք մեզանից եւ չենք համարում

մեր կուսակցության անդամ: Այսպիսով ոչ ամենքը, որ հեղափոխական են, դրանով իսկ դաշնակցական են եւ ոչ ամենքը, որ ձգտում են հայ ժողովրդի ազատագրության հեղափոխական ճանապարհով՝ դրանով իսկ մեր կուսակցության անդամ են: Կուսակցությունը հիմա գործակցում է այլամիտների հետ, բայց չի նույնանում նրանց հետ իբր նույն կուսակցություն: Գործնական խնդիրները դերադաս են այսօր, ինչպես որ էին երեկ, բայց նրանք բնավ չեն համարվում կուսակցական միակ շաղախը՝ իր անդամներին զոդելու համար: Մի ժամանակ մեզ գործակցողը, թեկուզ եւ չլիներ համախոհ, համարվում էր կուսակից, այսօր կուսակից է նա, որ ոչ միայն գործակցում է մեզ այլեւ համախոհ է մեզ:

Այս հանգամանքը մեր կուսակցությունը դարձնում է մի կուռ միություն եւ մեծապես նպաստում է նրա ներքին ուժին եւ կարգապահության: Նա վերացնում է նախորեն ամեն տարտամություն եւ դրանով անհնարին է դարձնում ամեն ներքին քայքայում: Որովհետեւ գործն ու նպատակը մեծ ազդակներ են մարդկանց միացման համար, բայց ավելի մեծ ու զորավոր ազդակներ են մտածումի եւ նկարագրի նույնությունը: Սրանով «գործակիցները» տարբերվում են «ընկերներից»: Գործակիցները լավագույն դեպքում հավատարիմ են նույն գործին, իսկ «ընկերները» նույն կուսակցության, որ ոչ միայն այդ գործն ունի, այլեւ շատ ուրիշ գործեր: Գործերի հաջող կամ անհաջող վախճանը կարող է երկարատեւ կամ կարճատեւ դարձնել գործակցությունը, բայց կուսակցական ընկերների կապը մնում է ամուր եւ անխորտակելի թե լավ թե վատ օրերին: Ու թեեւ մեր կուսակցությունն այլեւս չի կոչվում «Հայ Յեղափոխականների Դաշնակցություն» բայց նա մնում է եւ պետք է մնա իբր «Յեղափոխական Դաշնակցություն»: Մարդկանց միջեւ հիմա ընտրանք ենք անում, բայց գործի բնույթը պահում ենք նույնը: Դաշնակցությունը հիմա այլազան հեղափոխականների միություն չէ, այլ նույնամիտ ու նույնատիպ հեղափոխականների ընկերություն: Շեշտը հիմա մենք դնում ենք «հեղափոխական» բառի վրա, որ մեզ համար ուրույն բովանդակություն ունի եւ բովանդակ կուսակցության բնույթն ենք ուզում շեշտած լինել ավելի, քան նրա անդամների բնույթը: Մենք հիմա տարբեր տիպար ենք եւ տարբեր մտայնություն հեղափոխականների շրջանում, առաջ միայն հեղափոխական էինք ոչ հեղափոխական հանրության մեջ: Հիմա մենք «դաշնակցական» հեղափոխականների կուսակցություն ենք, ավելի լավ է ասել՝ «ընկերություն» ենք, ինչպես խորին իմաստությամբ կոչած է հայ ժողովուրդը՝ մեզ անվանելով ընկերության մարդիկ:

* * *

Մեր կուսակցությունը կոչվում է «Հայ Յեղափոխական Դաշնակցություն»: Իր **հայ** բառով նախորոշված է մեր կուսակցության հիմնական գծերից մի քանիսը: Նա ուրեմն մի **հայ** կուսակցություն է: Այս կարճ բառը ընդարձակ մեկնության տեղիք է տալիս:

Լինելով **հայ** կուսակցություն, դրանով իսկ Դաշնակցությունը սահմանափակ կուսակցություն է. իր կազմակերպական դաշտը վերջանում է այնտեղ, ուր վերջանում է հայ ժողովուրդը: Նա իր անդամներն առնում է հայերի միջից եւ ամեն տեղ, ուր որ հայեր կան: Պատահաբար որեւէ այլազգի կարող է անդամ լինել Դաշնակցության, բայց կուսակցության նպատակը հայ հեղափոխական տիպարների եւ ճիգերի կազմակերպումն է եւ հայ հեղափոխական գործի ղեկավարությունը: Նա մի որոշ տեղ ամփոփված կազմակերպություն չէ, որովհետեւ ամփոփ չէ ինքը հայությունը. նա հայության մեջն է եւ նրանից է իր սնունդն ստանում՝ նյութական թե բարոյական, ուստի գնում է հայության հետեւից՝ թե՛ նրան եւ թե՛ իրեն մենակ չթողնելու համար: Նա կարող է այլազգի կազմակերպության համակիր ու գործակից լինել, բայց նա ինքն իր մեջ մնում է հայկական եւ օտար կազմակերպություններից զատվում է իբր ուրույն ազգի կազմակերպություն: Իր ժողովրդի ներսը նա զատվում է մյուս կազմակերպություններից իր մտածումով, Ծրագրով, Կանոնագրով ու գործելակերպով, իսկ օտարներից իր ազգային պիտակով՝ ամենից առաջ: Նա որեւէ միջազգային հեղափոխական կուսակցության ազգային հատված չէ, այլ ինքնուրույն է անկախ կուսակցություն է մի ուրույն ազգի: Ազգի ուրույնությունը սահմանն է Դաշնակցության, ինչպես ինքն իր գոյությամբ

զորավիգ է ազգի ուրույնության: Ազգի ինքնության արտահայտիչներից մեկն է նա: Ինչպես Հայ եկեղեցին Հայության ուրույն կազմակերպությունն է տիեզերական քրիստոնեության, այնպես էլ Դաշնակցությունը Հայության ուրույն կազմակերպությունն է տիեզերական հեղափոխության: Իր հիմքերով տիեզերական՝ Դաշնակցությունը մնում է ազգային եւ Հայ՝ իր ծավալման սահմաններով: Համաշխարհային հեղափոխական մտքի Հայ գործակալն է Դաշնակցությունը Հայոց ազգի շրջանում, Համաշխարհային ազատագրական շարժման գործավարն է նա Հայության մեջ: Իբր մարդ՝ նա օտար չէ մարդկային իրավական եւ ընկերային գերագույն ըմբռնումներին, բայց այդ ըմբռնումները նա ձգտում է իրացնել Հայ կյանքի մեջ եւ Հայերի ձեռքով: Սրա համար նա համակիր է հեղափոխական շարժումների, ուր եւ պատահեն եւ աջակից է նրանց, ուր հասնում է իր ձեռքը: Բայց դրանով չի նույնանում նրանց հետ իր Ծրագրով ու Կանոնագրով, այլ նման է բնույթով՝ սակայն անջատ իր գործի միջավայրով ու անդամներով:

Այս Հայ բառի իմաստը ուրույն բովանդակություն է ստացած Հայաստանի Հանրապետության ստեղծումի ընթացքին եւ այնուհետեւ: Մեր ծրագիրը պահանջում էր երկու լայնորեն ինքնավար Հայ շրջաններ՝ մեկը Ռուսաստանում եւ մյուսը Տաճկաստանում: Նա պահանջում էր Կովկասի Հայաշատ գավառները զատել վարչապես ու դարձնել մի ինքնավար շրջան, իսկ Տաճկաստանի Հայաշատ գավառները զատել վարչապես ու դարձնել մի ուրիշ ինքնավար շրջան: Կովկասի ինքնավար շրջանը նա պահանջում էր դաշնակցորեն կապել թաթարական եւ վրացական ինքնավար շրջանների հետ եւ իբր մի դաշնակցորեն կապված վարչական միավոր՝ դաշնակցական կապերով կցել Ռուսաստանին, իսկ Տաճկաստանի Հայաբնակ ինքնավար շրջանը անմիջորեն կապել Տաճկաստանին: Այսպիսով մենք պահանջում էինք ինքնավար երկու շրջան վարչապես զատ եւ քաղաքականապես անանջատ: Մենք ձգտում էինք թե՛ Թուրքիայում եւ թե՛ Ռուսաստանում ներքնապես անկախ լինել մեր գործերի մեջ եւ արտաքուստ միացած. պետական հանուր գործերը վարել մեր ձեռքով: Այս ծրագիրը մերժում էին ամենքը, քանի դեռ ծրագիր էր միայն. այսօր երբ իրացած է, մերժում ենք մենք, նրա հղացողներն ու մշակողներս եւ պաշտպանում են նրանք, որ երբեմն մերժում էին չարաչար:

Նախորդ ծրագրով մենք մի ազգային կուսակցություն էինք, մեր կազմակերպության եւ պահանջների տեսակետով, որ գործում էինք տարբեր պետությանց մեջ: Կուսակցության միության հիմունքը Հայ ժողովրդի միությունն էր, որ ապրում էր անջատ՝ Ռուսաստանում եւ Թուրքիայում երկու տարբեր իրավական կարգերի տակ, երկու տարբեր ընկերային եւ տնտեսական պայմանների մեջ, երկու տարբեր ցեղապրական միջավայրում: Հայությունը մեկ էր իբր ժողովուրդ, բայց զատ էր իբր քաղաքացի. եւ այս պատճառով Դաշնակցությունը մեկ էր իբր Հայ կազմակերպություն, բայց զատ էր իբր տարբեր երկրների կուսակցություն: Նա Թուրքիայում մեկն էր Թուրքիայի կուսակցություններից եւ Ռուսաստանում մեկը Ռուսաստանի կուսակցություններից: Նա մեկ էր իբր Հայ կուսակցություն, բայց երկու էր իբր տարբեր պետությանց քաղաքական ազդակ: Նրա նպատակը միեւնույն Հայ ժողովրդի քաղաքական եւ տնտեսական բարեկեցությունն էր, բայց երկու տարբեր երկիրների մեջ: Երկու երկրի մեջ եւս նա հեղափոխական կուսակցություն էր եւ հետամուտ էր միապետական կարգերի վերացման, երկու վայրում եւս բնական դաշնակիցն էր այն բոլոր կուսակցությանց ու հոսանքների, որ նույն նպատակն ունեին այդ վայրերի մեջ: Այդ է պատճառը, որ նա գործակցում էր ուրիշ հեղափոխական կուսակցությանց հետ Ռուսաստանում եւ Երիտասարդ Թուրքերի հետ Տաճկաստանում: Որովհետեւ Դաշնակցությունը լինելով մի եւ անբաժան՝ միաժամանակ Թուրքիայի ներքին քաղաքական ազդակներից մեկն էր, ուստի մասնակցում էր այդ երկրի ներքին հեղափոխական եւ քաղաքական խնդիրների լուծման. նույն պահվածքն ուներ նաեւ Ռուսաստանում: Նա հեղափոխական էր թե՛ Ռուսաստանում, թե՛ Տաճկաստանում եւ այդ երկրների ազատասեր քաղաքացին լինելով՝ նա ռուս Հայենասեր էր Ռուսաստանում եւ Թուրք Հայրենասեր Տաճկաստանում, միշտ մնալով Հայ ժողովրդասեր եւ իր ապրած պետությանց ներքին հեղաշրջումը համարելով նախապայման իր պատկանած ժողովուրդի բարեկեցության: Նա ձգտում էր Հայերին նույնիրավ քաղաքացի դարձնել թե՛

Ռուսաստանում, թե՛ Թուրքիայում եւ աշխատում էր ա՛յն գաղափարը պատվաստել տիրապետող ազգերին, թե հայրենիքը ոչ միայն իրենց է պատկանում այլ մյուս ժողովուրդների հետ նաեւ հայերին եւ հետեւապես հայերը ոչ թե պետք է հպատակներ նկատվին, այլ նույնիրավ քաղաքացիներ: Իբրեւ Ռուսաստանի իրավազուրկ քաղաքացի նա սահմանադրական կարգ էր պահանջում եւ ներքին լայն ինքնավարություն Ռուսաստանի մեջ բուն իսկ ռուսազգի իրավազուրկ զանգվածների հետ միասին. նույն պահանջները նա դնում էր նաեւ Տաճկաստանում նույն հիմունքներով մյուս իրավազուրկ ազգերի եւ Թուրք քաղաքացիների հետ միասին: Նա մի կողմից աշխատում էր նույն իրավունքներն ապահովել հայ ժողովրդին ինչ որ **արդեն** ունեին ռուսն ու Թուրքը իրենց հայրենիքում, մյուս կողմից նա գործակցում էր նրանց **նոր** իրավունքներ ձեռք բերելու եւ **նոր** կարգեր ստեղծելու **ամենքի** համար, ուրեմն եւ իր համար: Նա մասնակցում էր այդ երկրների թե չինարարության՝ իր աշխատանքով եւ թե հեղափոխության՝ իր գործերով: Սահմանափակ էր Դաշնակցությունը հայ ժողովրդի ծոցում, բայց ընդարձակ էր իր գործունեության դաշտը: Նա մասնակցում էր Բաքվի բանվորական ցույցերին ու գործադուլներին եւ Պետրոգրադի ուսանողական շարժումներին, թեեւ Բաքուն ու Պետրոգրադը Հայաստան չէին. բայց որովհետեւ նրանք Ռուսաստան էին, իսկ ինքը նույն երկրի իրավազուրկ քաղաքացին էր, ուստի հարվածում էր հին կարգն ամեն տեղ, ուր հանդիպում էր նրան:

Այսպիսով Դաշնակցությունը նախորդ շրջանում ոչ այնքան հայրենիքն ուներ նկատի, որքան հայությունը: Իր քաղաքական պահանջը ավելի չէր քան լայն ինքնավարություն հայաբնակ գավառների: Նա հիմք առնում էր հայ տարրի բնակավայրը ոչ պատմական իմաստով, այլ խտության չափով: Բարեբախտաբար, հայությունը խիտ էր այն գավառներում, որ երբեմն նրա քաղաքական հայրենիքն էին կազմում: Հայերնիքի գաղափարը նա ստորադասում էր բնակավայրի գաղափարին: Եթե խստորեն բնորոշենք՝ Դաշնակցությունը նախորդ շրջանում հեղափոխական ազգասեր էր եւ ոչ հեղափոխական հայրենասեր: Գուցե կային ոմանք, որ կարծում էին թե լայն ինքնավարությունը մի կայան է անկախության

ճամփին, բայց Դաշնակցության ղեկավար խավերի մեջ անջատողական միտումներ չկային: Ռուս միապետական մամուլն էր, որ հայերին վերագրում էր այդ հակումը եւ հայերն անկեղծությամբ եւ խորին վրդովումով մերժում էին այդ մեղադրանքը ոչ թե քաղաքականություն անելով, այլ իրողությունը մեջտեղ հանելով: Գուցե առաջին մտածողները ունեին այդ գաղափարը, բայց նա երբեք լրջորեն տեղ չէ գրված կուսակցության իմացության մեջ:

Այսպիսով Դաշնակցությունը ոչ թե ազատ հայրենիք ստեղծելու էր հետամուտ, այլ բարեկեցիկ հայ ժողովուրդ՝ իր բնակավայրում: Ոչ թե անջատական էր անկախության իմաստով, այլ ինքնավարական էր դաշնակցական իմաստով: Ոչ թե ձգտում էր հայաբնակ գավառները անջատել Ռուսաստանից ու Թուրքիայից եւ իրար կցելով ստեղծել մի ազատ եւ անկախ Հայաստան, այլ աշխատում էր հայ ժողովրդի բնակավայրերը զատել վարչապես իբր ուրույն, ներքնապես ինքնավար շրջաններ, սակայն, կապված այն պետության, որի մեջ պատմությունը դրած էր հայ ժողովրդին: Նա ձգտում էր մայրենի լեզվով դատ ու դատաստան ունենալ եւ կրթություն, գավառի ներքին գործերը ինքը վարել եւ իր լեզվով, բայց ձգտում չուներ իր զորքն ունենալու, իր պոստն ու երկաթուղին եւ իր դրամը: Սա մի ձգտում էր պահելու ազգն ու ազգայնությունը իբր թիվ եւ կերպարանք՝ պետական օրենքների բարեփոխ հովանու տակ: Նա ձգտում էր հայերին իրավունք ապահովելու, որ իբր հայ ապրեն օտար ազգի պետության մեջ ոչ թե նրանց բարյացակամության շնորհիվ, այլ պետական օրենքի երաշխիքով. ոչ թե հանդուրժված մի տարր, այլ իբր իրավասու եւ իրավատեր ազգ: Ուստի նա կուսակից էր դաշնակցորեն կազմված Ռուսաստանի եւ Թուրքիայի, ուր հայաբնակ գավառները միասնաբար՝ իբր ուրույն վարչական միավոր՝ կազմելու էին այդ պետությանց բաղադրիչ մասերը: Նրա համար քաղաքական կազմության օրինակ էր հանդիսանում Զվիցերիան եւ Ավստրիան. Զվիցերիան իբր տիպար Կովկասի համար, ուր տարբեր ազգեր առանց իրենց մշակութային ինքնությունը ժխտելու՝ ապրում են մի վարչական կարգի տակ, իսկ Ավստրիան իբր վարչական տարբեր միությանց միություն: Այս լուծումը որ տեսապես թվում էր բանական եւ արդար, կարծում

էին թե լավագույն լուծումն է, որ ապահովում է ազգերի ինքնուրոյությունը եւ կեր է տալիս պետությանց միարար քաղաքականության: Այս լուծումը պետության եւ պետական ժողովրդի կամքը սահմանափակում էր համապետական խնդիրներով, իսկ տարբեր ազգերի ինքնավարությունը՝ ներքին խնդիրներով: Այն ամենը, որ համապետական արժեք ու նշանակություն ուներ եւ թողնվում էր կենտրոնական իշխանության, ուր ձայն ունեին նաեւ տարբեր ազգերն իրենց թվի համեմատ, իսկ այն ամենը, որ տեղական նշանակություն ուներ, թողնվում էր տարբեր ազգերին կազմակերպելու եւ վարելու: Ազգերը հաշտվում էին կլանվիլ մեծ պետությանց մեջ իբր քաղաքական միավոր, բայց ձգտում էին շեշտել իրենց ինքնությունը իբր վարչական եւ մշակութային միավոր: Այս մտածման եւ ծրագրի հիմունքն այն համոզումն էր, որ Ռուսաստանը բնավ Կովկասից հեռանալու չէ եւ չկա մի ուժ, որ ստիպե նրան հեռանալ. Տաճիկն անզոր է, Պարսկաստանը թույլ, Եվրոպան բաժան եւ տարամերժ, Չինաստանը՝ թմրած, Ճապոնը՝ հեռու, ուստի եւ անշահագրգիռ:

Մեծ պատերազմը, սակայն գլխիվայր շրջեց ամեն նախատեսություն: Ռուսաստանը հեռացավ եւ Կովկասը մնաց մենակ ու ազատ: Մի պահ Դաշնակցության ծրագիրը գործադրության հարմարություն ունեցավ գոնե Կովկասի համար: Հեղափոխության շրջանին Կովկասը դարձավ վարչապես զատված միավոր, բայց կապված Ռուսաստանին: Այդ վիճակը դեռ լավ չորոշված՝ Կովկասը իբր Կովկաս, մնալով երեք ժողովրդի միացյալ պետություն, բաժանվեց Ռուսաստանից: Այն տարրերը, որ սկզբունքով դեմ էին ամեն մի վարչական բաժանման եւ դավանում էին մի եւ անբաժան Ռուսաստան – վրաց ընկերվար – ռամկավարները – առաջինը եղան, որ անջատեցին Վրաստանը Կովկասից՝ հակառակ Դաշնակցության կամքին ու ցանկության: Դաշնակցությունն այսպիսով ստիպված եղավ երեսը դարձնելու դեպի հայաբնակ գավառները, որ արդեն գրված էին նրա ուշադրությունը ինքնապաշտպանության տեսակետով: Պատմությունն այսպիսով մղեց Դաշնակցությունը դեպի հայրենիք եւ ինքնավար, բայց դաշնակցորեն Ռուսաստանին կապված հայաբնակ գավառների կուսակիցները դարձան Միացյալ եւ Անկախ Հայաստանի պաշտպաններ: Քաղաքական մտքի այս հեղաշրջումը կատարվեց ազգամիջյան պայքարների եւ ընդհարումների եւ հայ թուրքական ուժերի բախման թոհ ու բոհի մեջ: Դաշնակցությունը քաղաքական տեսակետով դարձավ մի բոլորովին նոր կուսակցություն, մնալով սակայն **մի** եւ **նույն**: Նա հիմա նույնպես ձգտում էր հայ ժողովրդի բարեկեցության, բայց ոչ թե օտար պետությանց շրջագծի մեջ, այլ նրա բուն պատմական հայրենիքում: Ժողովրդի բարեկեցությունը նա այլեւս չէր կապում Ռուսաստանի եւ Թուրքիո ներքին բարեփոխության, այլ իր հայրենիքի – Հայաստանի ազատության հետ: Նա դադարում էր այլեւս Ռուսաստանի եւ Թուրքիայի ներքին կուսակցություններից մեկը լինելու եւ գործոն մասնակցություն ունենալու նրանց ներքին հեղաշրջման մեջ, այլ դառնում էր Հայաստանի գործոն ու ղեկավար կուսակցությունը, որ ձգտում էր հայաբնակ բոլոր շրջաններն անջատել ու միացնել իրար՝ ստեղծելու համար միացյալ եւ անկախ Հայաստան: Նա որ անջատողական չէր, հիմա դարձավ անջատման կողմնակից: Նա որ պահանջում էր դաշնակցորեն միացյալ Կովկաս, հիմա դարձավ ազգայնորեն անջատ եւ սահմանատված Կովկասի կուսակից: Նա, որ գործում էր Ռուսաստանի եւ Թուրքիայի բովանդակ տարածության վրա այդ պետությանց անիրավ կարգերի դեմ՝ ամփոփեց իր գործունեությունը Հայաստանի մեջ, դրսի հայությունը նկատելով իբր օժանդակ ազդակ հանուր Հայրենիքի: Այսպիսով իր քաղաքական գործունեության դաշտը նեղացավ, բայց ստացավ մի նոր եւ զորավոր հիմունք – Հայրենիքը: Ոչ թե հայ ժողովրդի բարեկեցությունը միայն դարձավ իր նպատակը, այլ «բարեկեցիկ հայն իր ազատ եւ միացյալ Հայրենիքում» դարձավ իր կարգախոսը: Սա մի հիմնական փոփոխություն էր Դաշնակցության ծրագրի, մտայնության ու գործի մեջ, որ դեռեւս չի ձեւակերպված իբր ծրագրային պաշտոնական տեսաբանություն, բայց տաս տարուց ավելի է, որ գործոն ուժ է իրական կյանքի մեջ եւ իբր ղեկավար սկզբունք ընթացք է տալիս մեր մտածումին ու գործին:

Դրանով ճշտվում է Դաշնակցության վերաբերումը դեպի գաղութներն ու բնիկ հայությունը: Առաջ նա հայերի մի կուսակցու-

թյուն էր, որ հեղափոխության ճամփով աշխատում էր բարեշրջել այն երկրների կարգերը, ուր հայություն էր ապրում՝ առավելապես աշխատելով բարեփոխել հայ մեծագույն զանգվածների բարեկեցությունը Ռուսաստանում եւ Թուրքիայում: «Հայ յեղափոխական դաշնակցության» հայ բառի մեջ նա դնում էր այդ քաղաքական բովանդակությունը: Հիմա նա **հայ** բառի մեջ դնում է տարբեր քաղաքական բովանդակություն: Նա կրկին **հայ** ժողովրդի բարեկեցության է ձգտում, բայց ոչ թե քաղաքացիական, այլ քաղաքական. նորից ընկերվար է, բայց ոչ Ռուսաստանի եւ Թուրքիայի ընկերական կյանքն է աշխատում հեղաշրջել, այլ Հայաստանի ընկերական կյանքը ընկերվար հիմքերի վրա դնել: «Հայաստանն» այսպիսով իբր ուրույն պահանջ հիմա մտնում է իր քաղաքական ծրագրի մեջ, որ առաջ չկար: Առաջ պահանջածը հայաբնակ գավառներ էին՝ վարչապես ինքնավար, հիմա նա ինքնավար շրջաններ է պահանջում քաղաքականապես ազատ եւ անկախ: Նա առաջ աշխատում էր հայ տարրի քաղաքացիական իրավունքներն ապահովել օտար պետությանց մեջ եւ ուզում էր նրանց տիրակից դառնալ, հիմա նա ձգտում է հայերի քաղաքական իրավունքներն ապահովել նրա բուն հայրենիքում – Հայաստանի մեջ, ուր ձգտում է նրանց միահեծան տեր դարձնել: Իր գործունեության շեշտը նա հիմա դնում է ոչ թե քաղաքացիական, այլ քաղաքական իրավունքների վրա եւ Հայաստան է պահանջում, հայ ժողովրդին քաղաքական իրավունքներ ապահովելու համար: Որովհետեւ եթե հայն ունենա քաղաքական իրավունք իր հայրենիքի մեջ, այսինքն լինի տեր ու տնօրեն իր կյանքի եւ հայրենիքի իբր անկախ պետություն, այն ժամանակ միմիայն **իր** կամքից կախված կլինի իր քաղաքացիական իրավունքները գծել եւ իր տնտեսական եւ ընկերային կյանքը տնօրինել: Նա հիմա չի հրաժարվում իր հին դերից լինել համայն հայության իրավանց պաշտպան ամեն տեղ, ուր ապրում են նրանք. բայց մինչդեռ գաղութների մեջ աշխատում է հայերի իրավունքը ձեւակերպել եւ ապահովել իբր ուրույն ազգային զանգված՝ մշակութային իմաստով, նա աշխատում է հայ ժողովրդին իրավունքներ ապահովել բուն իսկ իր հայրենիքում՝ քաղաքական իմաստով: Գաղութները այսօր եւս նրա համար օժանդակ ազդակ են բուն հայրենաբնակ հայության բարեկեցության համար, բայց մինչդեռ առաջ նրանց օգտագործում էր հայության ինքնավարական իրավունքներն ապահովելու, այսօր հրավիրում է աջակցել նրանց քաղաքական անկախ գոյության պայքարին:

Եվ այս ձգտումը օրավուր պայծառանում է դաշնակցականի եւ նրա շնորհիվ հայ մարդու գիտակցության մեջ: Ավելի արդար է եւ հնարավոր, որ հայությունը քաղաքական իրավունքներ ունենա իր հայրենիքի մեջ, քան այն բոլոր վայրերում, ուր ապրում է նա: Ավելի բանական, արդար եւ իրավացի է հայության պատմական բնավայրը անջատել ու միացած տալ նրան իբր հայրենիք՝ ուրիշ ազգերի նման եւ նրանց հավասար՝ իր քաղաքական կյանքով ապրելու, քան ամեն մի պետության մեջ քաղաքացիական իրավունքներ ապահովել ազգի հատվածներին: Սա մինչեւ իսկ անհնարին է, թե գործնապես, որովհետեւ զատ հայաբնակ վայրեր չկան օտար պետությանց մեջ եւ թե հոգեբանորեն, որովհետեւ ամեն տեղ նա մի հյուր է եւ ամենուր նա հյուր է զգում իրեն: Ամեն տեղ, ուր հայն ապրում է, որքան եւ լայն քաղաքացիական իրավունքներ ունենա, որքան եւ նույնիրավ դառնա բնիկ տարրերին – նա միշտ հյուր կնկատվի եւ հյուր կզգա իրեն, եթե շարունակե իբր **հայ** ապրել իր ուրույն մշակութային կյանքով ու լեզվով: Եվ այն օրը նա կարող է երկրի տերերից մեկը նկատվել եւ քաղաքական իրավունքներ ունենալ, երբ հրաժարի իր ուրույն ազգայնությունից, մշակույթից ու լեզվից եւ դառնա բուլղար՝ Բուլղարիայի մեջ, արաբ՝ Սուրիա եւ Եգիպտոս, հույն՝ Հունաստանում եւ այլն: Արդ՝ հայությունն իրավունք ունի ապրելու իբր ուրույն ազգ իր ուրույն կերպարանքով: Նույն իրավունքն ունին եւ այն մեծ ազգերը, որոնց հայրենիքի հովանու տակ ապրում են հայերը: Նրանք իրավամբ իրենց տեր են համարում իրենց հայրենիքի եւ չեն կարող իրենց դարավոր կյանքի սարք ու կարգը փոխել հայ զանգվածների ազգային պահանջներին հարմարվելու համար: Լավագույն դեպքում նրանք կարող են հանդուրժել, որ նրանց մոտ ու նրանց պետության մեջ հայերն ապրեն իբր ուրույն համայնք իրենց մշակութային կերպարանքը պահելով. բայց մեզ համարել իրենցից մեկը, իրենց հավասար իրավունքներ ունեցող իրենց հայրենիքի վրա

— սա անհնարին է հոգեբանորեն եւ անիրավացի իրավորեն: Քաղաքական լրիվ իրավունքներ ամեն ազգ միմիայն իր հայրենիքում կարող է վայելել, այսինքն այն երկրի մեջ, որ իրենն է միայն եւ ուրիշ ոչ ոքի չի պատկանում: Որքան եւ հյուրընկալը բարեկամ լինի՝ հյուրն իրեն ազատ կարող է զգալ միայն իր տան մեջ: Ոչ ոք կարող է ազատ զգալ իրեն օտար երկրի մեջ: Ամեն ազգ պետք է իր քաղաքական հայրենիքն ունենա: Այս հաստատուն եզրակացության եկած է Դաշնակցությունը անցնելով ծանր փորձությանց միջից եւ այս գիտակցությունը պետք է խորանա հայության մեջ, որ պահանջն զգա սեփական տուն ու հայրենիք ստեղծելու: Այսպես ուրեմն, մի ժամանակ իր անունին «Հայ» բառը կցելով՝ Դաշնակցությունը «Հայոց ազգ» էր հասկանում եւ նրա բարեկեցությունը՝ Ռուսաստանում եւ Տաճկաստանում. այսօր երբ ասում է **Հայ**՝ հասկանում է ազատ հայություն միացյալ եւ անկախ Հայաստանի մեջ: Դաշնակցությունը հայ կուսակցություն է ոչ միայն նրա համար, որ հայ են իր անդամները, գործում է հայության մեջ եւ հայ զանգվածի բարեկեցության է հետամուտ, ուր էլ որ լինեն, այլ հայ է, որովհետեւ ձգտում է ազատ հայություն ստեղծել ազատ Հայաստանի մեջ: Նա հիմա ոչ թե ասում է «ազգ», այլ՝ «ազգ եւ հայրենիք»: Ոչ թե բարեկեցիկ ազգ եւ տիրող ցեղին նույնիրավ, այլ բարեկեցիկ եւ բոլոր պետությանց նույնիրավ հայրենիք ու ազգ: Ոչ ինքնավար հայություն, այլ անկախ հայություն, ոչ թե հայաբնակ գավառների զատ-զատ միություն, այլ անջատված հայրենիքի միացյալ եւ անկախ գոյություն:

* * *

Մեր կուսակցությունը «Հայ» յեղափոխական դաշնակցություն կոչվելով՝ այդ **Հայ** բառի մեջ դնում է եւ մի ուրիշ բովանդակություն: Նա **Հայ** կազմակերպություն է ոչ միայն ուրիշ ազգերի հակադրությամբ, իբր նրանցից անջատ ու տարբեր մի ուրույն ազգի կազմակերպություն, այլեւ հայ է ինքն իր ազգային հավաքականության մեջ՝ իբր հակադրություն ներքին հատվածական բաժանումների: Նա Ռուսաստանի հայոց կուսակցություն չէ եւ ոչ Տաճկաստանի հայության, այլ հայոց ազգի կուսակցություն է: Նրա համար չկա հպատակության խնդիր, այլ ցեղակցության: Առավել եւս նա Ղարաբաղցու կուսակցություն չէ կամ Սեբաստացու. նա հայության քաղաքական ազդակն է, անկախ նրա բնակավայրից: Իր անդամների հպատակության կամ տեղայնության պիտակը չէ, որ արժեք ունի, այլ նրանց **Հայ** լինելու հանգամանքը: Ամեն մի հայ, ո՛ր տեղացի եւ լինի, Դաշնակցության անդամ է, եթե գոհացում է տալիս Կանոնագրի հինգ պահանջներին: Դաշնակցությունը չի ճանաչում քաղաքական սահման կամ աշխարհագրական բաժանում, այլ ցեղագրական տարբերություն միայն: Նրան անդամակցում է ամերիկաբնակ հայը, բայց նրա անդամը չէ Ղարաբաղցի թաթարը եւ չէր Սեբաստացի թուրքը: Այսպիսով նա զատվում է անմիջական հարեւանից եւ ձեռք է մեկնում հեռավոր ցեղակցին:

Միաժամանակ Դաշնակցությունը խտիր չի դնում հարանվանությանց միջեւ. նրա համար նույնարժեք են լուսավորչականը, կաթոլիկն ու բողոքականը, բավական է, որ նրանք հայ են ծագումով եւ հեղափոխական իրենց տիպարով ու մտայնությամբ: Դաշնակցությունը դավանական կազմակերպություն չէ, այլ ազգային քաղաքական կուսակցություն: Այս երկու հանգամանքները Դաշնակցությանը տալիս են համազգային բնույթ եւ նրա հետեւորդների մտայնությանը՝ ազգային գունավորում: Դաշնակցականն ամենից առաջ իր մեջ **Հայն** է զգում, հետո միայն տեղացին եւ հարանունը: Նա հայության չնորհիվ է, որ ընկեր է մյուս հայերին եւ միեւնույն կուսակցության մեջ, բայց իբր տեղացի նա անդամ կարող է լինել **իր** հայրենակցական միության եւ իբր դավանող՝ **իր** եկեղեցու: Դաշնակցությունը նրա հայության է իր կոչն ուղղում եւ ոչ նրա հայրենակցության կամ դավանանքին: Իր քաղաքական ծրագրերը վերաբերում են բովանդակ հայության եւ Հայաստան աշխարհին, ոչ թե նրա այս ու այն հատվածին կամ այս ու այն դավառին: Գավառ ու հատված նրա համար արժեք ունեն համազգային ապագայի տեսակետով եւ բովանդակ ազգի ճիգերն է աշխատում կազմակերպել համազգային քաղաքական ապագայի հասնելու համար: Երբ միջամուխ է լինում հայ-թաթարական ընդհարումներին կամ Սասունի ապստամբության՝ նրան մտահոգում է հայ

տարրի պաշտպանությունն առհասարակ, որովհետեւ իր ծրագիրն այդ տարրի բարեկեցության համար է եւ այդ տարրն ունի իբր հիմք պայքարի եւ գործի: Հայ տարրի գոյությունն առաջին պայմանն է հայի բարեկեցիկ գոյության, ուստի համազգային ինքնապաշտպանության գործը առաջին մտահոգությունն է Հ. Յ. Դաշնակցության, լինի այդ ինքնապաշտպանությունը նյութական թե ոգեկան, այսինքն կենդանական գոյության թե մշակութային կերպարանքի պահպանության համար:

Դարեր շարունակ հայությունը չի ունեցած մի կազմակերպություն, որ համայն հայության քաղաքական շահերն ունենար իբր մտահոգության նպատակ: Եկեղեցին, որ մի ժամանակ կատարում էր այդ պաշտոնը, անչքացավ այն օրվանից, երբ տարբեր դավանանքներ բուն դրին հայության ծոցում: Հիսունական թվերից հայ մտավորական դասի գիտակցության մեջ ազգ եւ եկեղեցի զատվեցին իրարից եւ երկուսը նկատվեցին իբր տարբեր գոյակցություններ՝ ոչ թե ազգ ու եկեղեցի՝ նույնացած իրար, այլ եկեղեցին իբր ուրույն դավանական համայնք՝ միեւնույն հայ ազգի ծոցում: Բողոքականն ու կաթոլիկը, որ հայոց պատմական եկեղեցուն չէին պատկանում, դրանով չէին դադարում հայ ճանաչվել եւ լուսավորչական եկեղեցին, որ համարվում էր ազգային, նկատվեց հայոց եկեղեցիներից մեկը, թեեւ ամենից զորավորն իր անդամների թվով եւ պատմական շուքով: Այսպիսով եկեղեցին դադարեց ազգը ներկայացնել եւ Տաճկաստանի հայոց Սահմանադրությունը եկավ սահման դնելու ազգին եւ եկեղեցուն, առանց սակայն, անջատելու իրարից: Նա լուսավորչական եկեղեցու Սահմանադրություն լինելով՝ զատում էր լուսավորչական հայությունը բողոքականից եւ կաթոլիկից, բայց միաժամանակ լուսավորչական հայությունն ինքն իր մեջ սահման էր դնում աշխարհիկ եւ հոգեւորական տարրերի միջեւ: Այսպիսով մեր պատմական ազգայնության մեջ աստիճանաբար առաջ եկավ մի ճեղքվածք: Իր դավանական ապրումներով հայը մնաց իր եկեղեցու մեջ — լուսավորչական, բողոքական թե կաթոլիկ, իսկ իր աշխարհիկ ապրումներով զատվեց նրանից: Եվ մինչդեռ հայոց հարցի ծագման օրերին եկեղեցականը դժկամությամբ դարձավ բերան հայության քաղաքական տենչերի, այնուհետեւ նա շեղ

ընթացավ հայ ժողովրդի քաղաքական ճամփից, ու թեեւ անհատ հոգեւորականներ հարեցին քաղաքական շարժման՝ բայց եկեղեցին իբր ազգային հաստատություն մասնակից չեղավ հայոց հեղափոխության: Եթե երբեմն դուրս եկավ այդ մեկուսացումից, այդ քայլն արավ ժողովրդի բռնադատության տակ: Այսպիսով հայությունն իր քաղաքական մտածումով ու գործերով դուրս եկավ եկեղեցու շրջափակից եւ մեր հանրային զարգացման գիծը տարավ աշխարհական ուղղությամբ: Այս պատմական շարժման մեծագույն ազդակն այսօր Դաշնակցությունն է: Նա վերադարձ չունի դեպի հին կացությունը: Հայության քաղաքական կյանքի ղեկավարությունը նա իր ձեռքն է առած եւ ազգային մյուս խմբակցությանց նա շարունակ հրավեր է կարդում քաղաքական, աշխարհիկ գործերի շուրջ գործակցել իրեն կամ պայքարել իր դրոշի տակ ոչ իբր դաշնակցական, ոչ իբր այս ու այն դավանանքին աշակերտող, այլ իբր **հայ** մարդ: Այսպիսով, որոշ է Դաշնակցության դիրքը հայոց եկեղեցիների հանդեպ: Նա գործ ունի ոչ նրանց դավանության, այլ նրանց անդամների հետ, որոնց արժեք է տալիս ոչ թե նրանց դավանության, այլ նրանց քաղաքական տրամադրության համար: Կախաղան բարձրացող կամ բանտերում տառապող կուսակցականի մեջ, ոչ թե նրա դավանանքն է նկատվում, այլ նրա հեղափոխական գործն է ու տիպարը եւ նա չի մերժում իր նահատակների եւ հերոսների շարքը դասել այլադավան հայերին, ինչպես եւ խտիր չի դնում այլադավան հայ զանգվածների միջեւ, երբ ծրագրում է հայության ապագան: Դաշնակցության մեջ, իսկ դուրսը Դաշնակցության անդադրում քարոզի շնորհիվ կաթոլիկ հայ գյուղացին դադարեց «ֆրանգ» նկատել իրեն եւ **հայ** զգաց. այդպես նաեւ բողոքականը: Այս տեսակետով Դաշնակցությունը հայոց ազգային ինքնագիտակցության մեծագույն ազդակը եղավ եւ շարունակում է լինել:

* * *

Դաշնակցության **հայ** կոչումը ճշտում է նրա դիրքը նաեւ հայ աշխարհական շարժման մյուս հոսանքների հանդեպ: Նրանք, որ ստորադասում են ազգի գաղափարը միջազգային գաղափարին,

տարբերվում են մեզանից, որ գերադասում ենք ազգի ըմբռնումը միջազգային ըմբռնումից: «Միջազգային» ասելով մենք հասկանում ենք նույնիրավ ազգերի ազատ դաշնակցություն եւ ոչ իբր ստորադաս ու գերադաս ազգերի կախումավոր կապակցություն: Մենք հավատարիմ ենք Մեծ Հեղափոխության գաղափարին եւ ձգտում ենք իրացնել այդ գաղափարները ոչ միայն նույն երկրի քաղաքացիների միջեւ, այլեւ նույն երկրագնդի ազգերի միջեւ: Մեր գերագույն նպատակներից մեկն է նույնիրավ դարձնել ոչ միայն անհատներին, այլեւ ազգերին եւ քաղաքական իրավունքի նորմերը դարձնել միջազգային իրավունքի նորմեր: Ինչպես քաղաքացիական իրավունքը խտիր չի դնում անհատների միջեւ եւ բոլորին ճանաչում է նույնիրավ միեւնույն օրենքի առջեւ, այնպես էլ մեր ձգտումն է, որ ազգերն՝ իբր անհատներ՝ ճանաչվեն նույնիրավ միջազգային օրենքի առջեւ: Ազգը մենք նկատում ենք հավաքական միավոր, որ ունի իր սեփական կերպարանքը. նա պետք է դառնա իրավական անձնավորություն՝ միջազգային իրավունքի հանդեպ: Ինչ հարաբերություն որ ունին անհատներն իրար հանդեպ՝ եւ օրենքի դիմաց, պետք է ունենան եւ ազգերն իրար հանդեպ՝ միջազգային օրենքի դիմաց, որ ոչ թե ուժի գործիք պիտի դառնա, այլ արդարության ուժ: Ինչպես չկան գերադաս եւ ստորադաս քաղաքացիներ նույն պետության մեջ, պետք չէ, որ լինեն վերադաս ու ստորադաս ազգեր նույն երկրագնդի վրա. կարողությամբ ու հմտությամբ տարբեր իրարից՝ իրավապես նրանք պետք է լինեն նույնիրավ:

Մենք մասնակից ու համակիր ենք միջազգային շարժումների, բայց մենք աշխատում ենք այդ շարժումը նպաստավոր դարձնել հայ ժողովրդի իրավական կացության համար: Հայ ժողովուրդը մենք չենք համարում միջազգային շարժումների ստորադաս միջոց, այլ գերադաս նպատակ, մյուս ազգերին նույնիրավ: Ազգային վերելքի հոգեբանությունն է իշխում մեր շարքերի մեջ, մինչդեռ մեր հակառակորդ բանակում իշխում է ազգային նվաստության հոգեբանություն: Երկուսս էլ գիտակից ենք մեր ժողովրդի ուժերի չափին. երկուսս էլ լավ գիտենք մեր ժողովրդի կարողության սահմանը, բայց երկուսս էլ անարժեք չենք համարում ժողովրդի ուժն ու կարողությունը, այլապես մենք չէինք հետապնդի ազգային քաղա-

քական ծրագիր եւ նրանք՝ միջազգային հեղաշրջում: Երկուսս էլ կարծում ենք, որ հայ ժողովուրդը մի ուժ է, բայց մինչդեռ նրանք այնքան նվաստ են կարծում այդ ուժը, որ անհնարին եւ անիմաստ են համարում ազգային քաղաքականությունը միջազգային թոհ ու բոհի մեջ, մենք կռթնած մեր անցյալ գործերին եւ ներկա ճիգերի միշտ մեծացող արդյունքին՝ այնքան զորավոր, բայց մանավանդ զորացող ենք նկատում մեզ, որ խիզախում ենք նույնիրավ գոյության ձգտիլ՝ ուրիշ ազգերի շարքում եւ նրանց հավասար: Նրանք ձգտում են ստորադաս ազգերին հավասար՝ ապրել մի մեծ ու հզոր ազգի մականի տակ իրենց աշխարհագրական բնավայրի մեջ. մենք աշխատում ենք մեծ ու հզոր ազգին նույնիրավ ապրել անկախ ու ազատ մեր սեփական քաղաքական հայրենիքի մեջ: Նրանք հարմարացումի ասպետներ են, մենք՝ ըմբոստության. ուստի նրանց շուրջը հավաքվում են հանգստավետ կյանքի սիրահարները, որ աշխարհը դմակ են կարծում իսկ իրենց դանակ, իսկ մեր շուրջը հավաքվում են անհանգիստ տարրերը, որ բողոք ունեն աշխարհի անիրավ կարգերի դեմ եւ ձգտում են արդարակուռ ապագայի: Նրանք լավ են համարում ա՛յն, ինչ որ հրամայում են տերն ու մականավորը. մենք լավ ենք համարում ա՛յն, ինչ որ ստեղծագործում են մեր ազատ միտքն ու զգացումը, մեր անցյալին եւ ուժերին կռթնած եւ մեր կենսական շահերից թելադիր: Այս պատճառով մենք անուղղելի իդեալիստներ ենք, նրանք ճկուն իրապաշտներ: Մենք բարձրանում ենք դեպի տառապանք՝ ժողովուրդն ու կենցաղը ազնվացնելու բուռն տենչով ու վճռականությամբ, նրանք իջնում են դեպի հանգիստ, դեպի բարոյական լճացում ու քայքայում: Երկու բանակի մեջ եւս եռ ու զեռ կա շարունակ. բայց մերը նման է դեպի դիրքերը սլացող բանակի եռ ու զեռին, նրանցը որդնոտող մսի, ուր ամեն մի որդ պարարտանում է հանրային մսի քայքայման գնով: Հասկանալի է, որ այս երկու մտայնության մեջ միության եզր չկա. նրանք անհաշտ են իրար հետ եւ անհաշտ պիտի մնան: Ճահիճը չի կարող արեւ հանդուրժել. մեկի զորությունը մյուսի չքացումն է: Այս պատճառով Դաշնակցությունը ասում է բացորոշ. «Ոչ եկի արկանել խաղաղութիւն, այլ սուր» եւ Մ. Նալբանդյանի հետ կանչում է արտաքաց. «Օրհնեալ է պատերազմը»:

* * *

Դաշնակցության «Հայ» կոչումից ծագում են մի շարք վերաբերումներ դեպի մեր հանրային հաստատություններն ու գործերը: Բոլոր մասնակի միությունները առնվազն հանդուրժելի են Դաշնակցության համար, բայց դուրս են նրա սահմանից: Դաշնակցականը կարող է այս կամ այն հայրենակցական միության անդամ լինել, բայց Դաշնակցությունը հայրենակցական միություն չէ. ինչպես կարող է այս կամ այն հարանվանության անդամ լինել, բայց Դաշնակցությունը հարանվանություն չէ: Դաշնակցականը կարող է այս կամ այն գրական բարբառով գրել, բայց Դաշնակցությունը լեզվական խնդիրներ չունի: Սրանց ներքին հոգսերը, կազմակերպական խնդիրները, լավն ու վատը կարող են դաշնակցականին մտահոգել, բայց կուսակցության հոգածության առարկան չեն: Որեւէ գրական, գիտական, գեղարվեստական, շահակցական եւ այլ կարգի միություններ կարող են դաշնակցական անդամ ունենալ, բայց Դաշնակցությունը վեր ու զատ է այս բոլոր մասնակի եւ անջատ միություններից: Այս բոլոր միության մեջ դաշնակցականը կարող է մտնել՝ միշտ մնալով «դաշնակցական». այսինքն պահելով իր «դաշնակցական» մտայնությունը, իր Ծրագիրն ու Կանոնագիրը եւ ամեն ջանք թափելով նրանց իրացման համար: Նա՛խ Դաշնակցական գործ ու պարտականություն, հետո ուրիշ կարգի աշխատանք ու մտահոգություն: Գուցե նա ունի կարողություններ, որոնց համար Դաշնակցությունն ասպարեզ չունի. բայց ա՛յն կարողությունները որ պիտանի են «դաշնակցական» գործին՝ նա պարտավոր է արժեցնել լիովին եւ անվերապահ իր կուսակցության համար: Ինչ որ պետք չէ Դաշնակցության՝ ա՛յն է տրամադրելին այլ գործի համար: Մտնելով այլազան միության մեջ՝ Դաշնակցականը օգտագործում է եւ պետք է օգտագործե նրանց մի մեծ, ընդհանուր եւ համազգային նպատակի համար, որ ձեւակերպում է իր ծրագիրը. «միացյալ, անկախ եւ ընկերավար Հայաստան»: Բոլոր մասնավոր միությունները հանրային շահեր ունեն նկատի եւ այս կամ այն հանրային շահն են համարում հիմնական եւ հաճախ՝ գերադաս: Առանց այս սահմանափակ մտայնությունն ունենալու՝

«դաշնակցականը» մտնելով այդ կարգի միության մեջ, պետք է ջանա նրանց հետապնդած հանրային բայց մասնակի շահերը ներդաշնակության բերել համազգային գերագույն շահի հետ, որ իր ծրագրի հետապնդածն է. եւ պիտի ջանա իր դրոշմը դնել այդ միության գործի վրա, որ արդյունք են տարբեր մտածության եւ շահիմացության: Այդ միությունները պետք չէ նկատել Հ. Յ. Դաշնակցության ենթակա մարմիններ, ինչ որ անխորհուրդ կլիներ եւ անիմաստ, քանի որ Դաշնակցությունը չունի մասնավոր շահեր ու հոգեբանություն — այլ պետք է նկատել ուժեր, որ կարող են նպաստել մեր ընդհանուր գործին: Ոչ այն ամենը ինչ որ մեր հետ չէ, մեզ հակառակ է. եւ ոչ այն ամենը, ինչ որ մեր կազմածը չէ, դրանով իսկ դեմ է մեզ: Մեր մասնակցության, քաջալերության եւ պաշտպանության արժանի են բոլոր միությունները, որ թեկուզ մի մատ ջուր կարող են հոսեցնել դեպի մեր հանրային ջաղացքի առուն: Քանի դեռ խնդիրը վերաբերում է Դաշնակցության բուն գործին եւ մեր «դաշնակցական» հանգամանքին՝ մենք իրավամբ կարող ենք ասել. «որ ոչ ընդ իս ցանէ՝ ցրէ», այսինքն ով մեզ հետ չի ցանում, ցրիվ է տալիս սերմը, ով չի ընդունում մեր Ծրագիրը, Կանոնագիրն ու որոշումները նա «դաշնակցական» չէ, ավելի կամ պակաս մեր հակառակորդն է եւ համենայն դեպս միշտ տարբեր է մեզանից: Բայց երբ խնդիրը վերաբերում է մեր նպատակի հետապնդումին՝ այն ժամանակ սատանաներն անգամ դաշնակից են մեզ եւ օգտակար, եթե մի որոշ ժամանակ ու մինչեւ մի որոշ տեղ ուղեկցող են մեզ եւ գործի ընկեր: Այս պատճառով «դաշնակցականն» ամեն տեղ եւ ամենքի հետ կարող է լինել, մաքսավորի եւ մեղավորի հետ կարող է սեղան բազմել, բայց միշտ եւ ամեն տեղ մնալով «դաշնակցական» եւ քարոզելով «երկնքի արքայությունը», որ իր ծրագիրն է եւ գործելակերպը: Եվ եթե որեւէ մաքսավոր որեւէ կերպ նպաստե մեր գերագույն նպատակի իրացման՝ դա մի շահ է ընդհանուր գործին: Եվ բնավ արգելք չկա, որ նա շարունակե մնալ մաքսավոր, թեեւ ավելի լավ կլիներ, որ նա դառնար մեզանից մեկը, մեր դավանակիցն ու գործակիցը: Դաշնակցականն անգիջող է իր համոզումների մեջ, բայց հանդուրժող է ուրիշների համոզման հանդեպ: Նա հետամուտ է իր ծրագրի

իրացման, բայց կարող է տարբեր կարողությունները եւ ազատ ժամանակը տրամադրել ուրիշ նպատակների, եթե նրանք անուղղակի նպաստում են մեր ծրագրի իրացման: Դաշնակցությունը կոչում չունի հայ մարդու բոլոր պահանջներին գոհացում տալու եւ ոչ հայոց ազգի բովանդակ շահերը պաշտպանելու: Նա արթնացնում է հայ ժողովրդի քաղաքական մտածումը եւ ռազմական ոգին եւ կազմակերպում է հայության քաղաքական կամքը եւ հեղափոխական կորովը մի որոշ քաղաքական եւ տնտեսական ծրագրի իրացման հետամուտ: Այս աչքով է նայում հայ մարդուն եւ հայ զանգվածին. այս նպատակին տանող կարողություններն են նրա ուշադրությունը գրավում եւ իր համազգային նպատակին օգտակար գործերն ու ճիգերն է նա գնահատում: Իր անդամներից այն է պահանջում ինչ որ օգտակար է եւ անհրաժեշտ իր ծրագրի իրացման համար, մնացած բոլոր տեսակետներով իր անդամները ազատ են ձգված իրենց մասնավոր նախասիրությանց եւ գործերի մեջ: Դաշնակցությունը պաշտոն ու զբաղում չէ. նա մի որոշ մտայնություն է եւ բարոյական: Նա պահանջում է ոմանց լիակատար անձնվիրությունը մեր գործի համար, մյուսների պատրաստակամությունը զոհաբերելու՝ երբ հարկը պահանջե: Բայց քանի դեռ չի հնչած ժամը գերագույն զոհաբերության, «դաշնակցականը» պարտավոր է Կանոնագրի հինգ պահանջներին գոհացում տալ եւ ամեն տեղ, ուր որ մտավ՝ լինի միություն թե պարզապես օտար շրջանակ, Կուսակցության գաղափարը տարածել եւ մասնակի նպատակները ընդհանուր ծրագրին ու գործին ներդաշնակել: Դաշնակցությունն այսպիսով թե իր ընկերներից եւ թե օտարներից պահանջում է այն ամենը, ինչ որ համազգային քաղաքական արժեք կարող է ունենալ եւ իր գերագույն նպատակին ծառայել, որ իր ծրագրի իրացումն է կյանքի մեջ: Ինչ որ պահանջում է անհատ ընկերներից, նույնը հետամուտ է ստանալու եւ տարբեր ու մասնակի միություններից: Նրանց գործունեության մեջ եւս իրեն հետաքրքրում է համազգային արժեք ունեցող կողմը. ոչ մարդասիրականը, ոչ մասնագիտականը, ոչ արվեստականը, այլ ինչ որ կարող է նպաստել համազգային քաղաքական նպատակի իրացման, որ այլ բան չէ, քան իր ծրագրի իրացումը:

«Դաշնակցական խումբ, մարմին թե անհատ իրենք են, որ ճշտում են իրենց վերաբերումը դեպի կուսակցական ամեն մի ներքին խնդիր եւ դեպի հանրային ամեն մի մարմին ու գործ: «Դաշնակցականը» պետք չէ մոռանա երբեք, որ ինքը մի **հայ** կուսակցության անդամ է եւ մի **քաղաքական** եւ **հեղափոխական** կուսակցության անդամ: Այս «հայ», «քաղաքական» եւ «հեղափոխական» բառերը նախորոշում են իր բռնելիք դիրքի բնույթը, իր ընթանալիք ճամփի ծիրը, առանց պատասխան տալու այս ու այն հարցումին, այդ պատասխանն ինքն է, որ պետք է գտնե եւ տա՝ միշտ մնալով «դաշնակցական»: Նա պետք չէ մոռանա, որ ինքն ունի մի ծրագիր, որի իրացման հանձնառու է եղած՝ կուսակցության անդամակցելով: Թե ինչ պետք է ձեռնարկել կուսակցության մեջ եւ արտաքին ո՞ր ձեռնարկներին պետք է մասնակցել կուսակցության ծրագրին լավապես ծառայելու համար. ի՞նչ պահվածք պետք է ունենալ անհատական կյանքի մեջ կուսակցության վարկն ու հմայքը բարձր պահելու համար, սրանք խնդիրներ են, որ ինքը պետք է որոշե, եթե մենակ է որեւէ շրջանի մեջ, եւ իր ընկերների հետ համախորհուրդ պետք է որոշե, եթե կազմակերպություն կա իր բնակած վայրի մեջ:

Վարմունքի այս ձեւը պարտադիր է բոլոր «դաշնակցականների» համար՝ լինեն դեկավար թե պարզ անդամներ: Մենակությունը պատճառ չէ, որ «դաշնակցականն» անգործ ու անտարբեր մնա իր ապրած միջավայրում եւ իր գործոն դիրքը չճշտե հանրային իրադարձությանց եւ ուժերի հանդեպ: Իր «դաշնակցական» հանգամանքով նա մի ազդակ է կյանքի մեջ եւ պարտավոր է քաղաքական մտածում արթնացնել եւ գործ առաջ բերել իր ապրած միջավայրում հայ զանգվածի մեջ: Այս նախաձեռնության ոգին բխում է մեր Կանոնագրից, որ պահանջում է «ամեն ջանք թափել» իրականացնելու մեր ծրագիրը: Այդ ծրագիրն է վարիչ սկզբունքը բովանդակ Դաշնակցության եւ ամեն մի դաշնակցականի. այդ ծրագիրն է նաեւ, որ թելադրում է մի որոշ պահվածք եւ ընթացք դեպի հանրային ուժերն ու գործերը, դեպի օտար անձերն ու միությունները՝ լինեն նրանք հայ թե այլազգի: Ինչպես զորքերը տրված հրամանին հլու՝ շտկում են իրենց դեմքը աջ կամ ձախ եւ

շարժվում են մատնանիշ ուղղությամբ, այնպես էլ կուսակցությունը եւ կուսակցականը պարտավոր են շարժվել Ծրագրի եւ Կանոնագրի ուղղությամբ: Ամեն ոք պարտական է լսել այդ կանչը, որ հրաման է, հորդոր եւ սաստ միանգամայն: Հրաման՝ փորձառուներին, հորդոր՝ նորեկներին եւ սաստ՝ չեղընթացներին:

Այս կարգապահությունը մեծագույն ազդակներից մեկն է մեր կազմակերպության եւ հեղափոխիչ դեր է կատարած եւ շարունակում է կատարել մեր կազմալույծ եւ ստրկածին ազգի մեջ: Սա մի կարգապահություն է, որ չի պարտադրվում, այլ ամեն ոք ինքն է որոշում իր համար իր իսկ հանձնառությամբ: Ոչ ոք չի խնդրած կամ ստիպած, որ սա կամ նա դաշնակցական դառնան: Ամեն ոք ազատ է անդամկցել կամ ոչ: Բայց մեկ անգամ, որ հանձնառու եղավ Կանոնագրի հինգ պահանջներին գոհացում տալ՝ այնուհետեւ նա պարտավոր է կատարել իր հանձնառությունը հավատարմությամբ: Սա մի կարգապահություն է, որ բռնական չէ. սա տիրոջ հարկադրանքը չէ ստրուկի վրա. սա չի ծագում մի օտար ուժից, այլ բխում է սեփական գիտակցությունից ու կամքից: Սա մի ուխտ է, որ ազատ մարդն ազատորեն դնում է ինքն իր համար իր ազատ կամքով: Սա ազատ մարդկանց գործակցության մի պայման է ազատորեն ընդունված, բայց ստրկորեն իրագործված, ուր մարդն ինքն իր ստրուկն է եւ ոչ օտարի, ինքն իր կամակատարը եւ ոչ օտարի, որ ասել է թե ազատ է լիովին: Որովհետեւ ազատությունն անկարգություն չէ եւ ոչ սանձակոտոր մի ընթացք: Ազատությունը ինքնադիր օրենքների եւ ինքնընտիր կարգերի հոժարակամ եւ անվերապահ հնազանդությունն է: «Ազատ» ու «հնազանդ», որ թվում է թե ժխտում են իրար, իսկապես իրար լրացնում են: Մարդկային ճակատագիրն է ըմբոստանալ ու հնազանդիլ. սա տիեզերական կշռույթի մի ցոլացումն է մարդու կյանքի եւ հոգու մեջ: Խնդիրն այն է թե ինչի՞ դեմ ըմբոստանալ եւ ո՞ւմ հնազանդել: Իր նմանին հնազանդել հակառակ իր իսկ կամքին՝ սա կլիներ ստրկություն եւ ստրկամտություն. իր սեփական որոշումին հնազանդել — սա կլիներ սանձարձակություն. հավաքական մի մարմնի որոշումներին հնազանդել, որին համամիտ է նաեւ ինքը — սա կլիներ ազատություն բառի իսկական եւ չինարար առումով: Դաշնակցությունը ազատ մարդկանց ընկերական խմբակցություն է եւ նրանց կուսակցական կազմակերպությունը, դրա համար նա գերազանցորեն կարգապահ է քան որեւէ այլ մարմին: Սա մի կարգապահություն է, որ արդյունք չէ արտաքին բռնադատության, այլ ներքին գիտակցության եւ խղճմտանքի: Ոչ թե վախն է, որ «դաշնակցականին» պահում է կարգապահ, այլ ամոթն իր ներքին լավագույն հակումների հանդեպ, որոնց թելադրանքին անսալով՝ նա մի հանդիսավոր օր երդում է տված ընկերների ներկայությամբ գոհացում տալ Կանոնագրի հինգ պահանջներին: Նա ձգտում է հավատարիմ մնալ իր երդման եւ զգուշանում է չեղումներից: Նա ազատ է միանգամայն, բայց եւ կաշկանդված է խստորեն, սակայն, ոչ թե դրսից մեկն է, որ պահում է նրան, այլ ինքն է, որ ձգտում է հավատարիմ մնալ իր բնույթի ազնվագույն հակումներին: Իր անկարգապահ ընթացքը ոչ այնքան օրինազանցություն է, որքան բարոյական անկում. հանցանք եւ օրինազանցություն կլիներ եթե պարտադիր կարգի եւ կանոնի ստեղծումը կատարված լիներ ուրիշի կամքով եւ բռնանար իր վրա հակառակ իր կամքի. բաց դա անկում է, որովհետեւ ինքն է ձեւակերպած պարտադիր կարգն ու կանոնը կամ ինքն է հանձնառու եղած նրանց հնազանդելու կամովին:

Այս պատճառով անհատապաշտ մարդիկ «դաշնակցական» լինել չեն կարող: Նրանք ահեղորեն կաշկանդված կզգան իրենց դաշնակցական Կանոնագրի ճիրանների մեջ եւ նրա ծրագրի գծած ուղիների վրա: Անհատապաշտը շատ ավելի արժեք է տալիս իր անձնական իմացության քան հավաքական իմաստության: Նա կարծում է թե ամեն ոք ինքն իր վարիչն է եւ տերն ու տնօրենը եւ ազատ է այն պայմանով միայն, որ իր քմայքը օրենք ճանաչվի ամեն տեղ եւ ամեն ժամանակ: Նա մոռանում է, որ ամենից անտեր է նա, որ կարծում է թե ինքն է իր տերը եւ, որ ամենից երերուն են այն մարդու քայլերը, որ կարծում է թե ինքն է իր վարիչը: Ամեն լարում եւ ամեն պրկում իր թուլացումն ունի եւ ամեն մի ուժ իր հենարանը: Անհատական կամքի խթանը բավական չէ մարդուն միշտ պիրկ ու արթուն պահելու համար: Մենակյացը հաճախ մոլության մեջ է իր աչքը փակում, իսկ անձնամիտը՝ մոլորության մեջ: Մարդը հանրային կենդանի է եւ այնքան արժեք ունի, որքան հանրային է: Իր հա-

մակրանքի լայնությամբ չափվում է իր հոգու մեծությունը: Համակրական շրջանակի լայնացումը տանում է դեպի հերոսություն եւ վերջնագույն նեղացումը՝ դեպի ոճիր: Անհատական ճիգն ու մտածումը կարող են առավելն մի հոգեկան դաշտ հերկել, եթե հանրային ապրումներից չեն սրված. հավաքական մտածումն է, որ հեղաշրջում է կյանքի կերպարանքը: Այս ասպարեզում նույնպես՝ միտքն ու զգացումն այնքան արժեք ունեն, որքան հանրային են կամ ատակ են հետագային դառնալու հանրության միտք ու զգացում: Կամքն արգասավոր է միմիայն հանրային միջավայրում եւ այնքան ժամանակ, որքան ենթակա է հանրային խթանների, որ հասնում են օգնության, երբ անհատական կամքի խթանը թուլանում է: Հանրային մարդը զիջում է իր մտածումն ու կամքը մի տեղ, մի ուրիշ տեղ հաղթանակելու համար: Զիջումը չքացում չէ, այլ շեղում արգելքի հանդեպ: Կուսակցական մարդը իր ընկերների գործակցության մեջ է տեսնում իր մտածումի գործնական եւ իրական արժեքը եւ նրանց հավաքական մտածումի մեջ՝ իր անհատական կամքի պիտանությունը: Ոչ ոք կարող է իրեն ճանաչել ճշմարտապես՝ մենակ մնալով եւ ոչ ոք կարող է հանրային մտածումներ իրացնել՝ անհաղորդ մնալով իր նմաններին: Ոչ ոք կարող է հանրօգուտ գործ ստեղծել իր երկու ձեռքով եւ հանրօգուտ մտածումներ ունենալ՝ իր մտքով միայն: Կուսակցության հավաքական մտածումն այն հեսանն է, որ սրում է անհատի մտածումը, իսկ կուսակցության հավաքական կամքը այն կոթն է, որին հարմարվելով՝ անհատական մտածումը կարող է աջ ու ձախ կտրել: Կազմակերպության սալի վրա են հղկվում անհատական խառնվածքի խանգարիչ ցցվածքները եւ նրա հակակշռի տակ է, որ կամեցողության հաճախ կույր ուժը դառնում է հանրորեն պիտանի ազդակ: Ոչ ոք, որ հնազանդել չգիտե՝ կարող է երբեւիցե հնազանդության բերել. հնազանդությունը մեքենականություն ունի, որ մարդ պետք է իր հոգու մեջ ճանաչած լինի, հետագային ուրիշների վրա գործադրելու համար: Կոկոզավիզ անհատապաշտը ինքն է միայն, որ կա. իր կոշիկը կարող է հագնել, բայց հանրային հեղաշրջումներ անկարող է կատարել, որովհետեւ այդ կարգի գործերը լինում են համադիր ճիգերով, հավաքական մտածումով եւ գործակից աշ-

խատանքով, այսինքն, անհատի մեջ անձնականը մերժելով եւ հանրայինը առաջ քաշելով: Նա, որ չգիտե օրինակի հետեւել, երբեք չի կարող օրինակ դառնալ: Կուսակցականն իր փորձ ընկերին նայելով է, որ դառնում է փորձված ընկեր: Հավաքականության մեջ է, որ մշակվում են հանրային բարքի օրինակները, կանոններն ու կարգերը եւ մշակվում են՝ փոխադարձ գործակցությամբ: Հնազանդել այս կարգերին ու կանոններին, հետեւել այս օրինակներին՝ նշանակում է եւ հավաքական կյանքի գոյությունն ապահովել, իսկ հավաքական կյանք ապահովել նշանակում է անհատական կյանքի բովանդակությունն ապահովել. որովհետեւ «մարդը» մարդու մեջ հավաքական կյանքի ցոլացումն է եւ հավաքական ճիգերի արդյունքը. եւ մարդ այնքան ավելի մեծ արժեք ունի, որքան պայծառորեն ցոլացնում է իր խմբակցությունը: Այս դեպքում է միայն, որ անհատի խոսքն ստանում է արժեք ու կշիռ, որովհետեւ նա բանաձեւում է հավաքականության միտքը, զգացումն ու բարքը, որովհետեւ նա խոսում է այն, ինչ որ կարող էր եւ իր ընկերն ասել, եթե նրա չափ խոսել իմանար. որովհետեւ նա մտածում է այն, ինչ որ՝ թեեւ ոչ նույն պայծառությամբ, բայց էապես մտածում է հավաքական մարմնի անդամը. որովհետեւ նա գործում է այնպես, ինչպես կգործեր իր ընկերը, եթե նույն վճռականությունն ունենար: Զանգվածի համամտությունը, համազգացումն ու համաձայնությունն այսպիսով խթանում են անհատի կորովը եւ դարձնում են նրան հանրային շարժումների ազդակ, հանրային ապրումների թարգման, հանրային մտածումի առաջնորդ: Այսպիսով, անհատը կամ ինքն է օրինակ առնում կամ ինքն է օրինակ դառնում եւ ներքնապես ազատորեն մտածելով եւ ազատորեն ինքն իրեն հղկելով, ազատորեն վճիռ արձակելով եւ գործի ձեռնարկելով՝ նա դառնում է ինքնաբեր եւ ինքնակամ մի կրկնություն հավաքական տիպարի, մտայնության ու բարքի: Նա մի տարբեր ցոլացումն է դառնում նույն խորքի, որ իբր «անհատական» գիտակցվելով ներքնապես, իրոք հանրային է իր էության մեջ: Նրա զգացումը, միտքն ու գործը այնքան ավելի փայլուն են երեւում, որքան ավելի շնորհք ու վճռականություն ունի իր հոգին եւ այնքան ավելի զորավոր է իր ազդեցությունը եւ վարակիչ իր օրինակը, որքան

ավելի մեծ զանգվածների արձագանք է ինքը: Նա չի կարող պարծենալ **իր** մտածումով, **իր** կամեցողությամբ, **իր** անկախությամբ, բայց իրոք նա է, որ ինքնուրույն կամք ու մտածում ունի եւ անկախ ու ազատ նկարագիր: Այս կարգի մարդիկ են, որ երեւութապես ազատ ու անկախ չեն, քանի որ անդամ են մի կուսակցության, բայց փաստորեն ղորավոր են եւ ազդեցիկ, քանի որ տիպար են մի հավաքականության: Այս կարգի մարդկանց հիշատակն է, որ պահում է պատմությունը, որովհետեւ նրանք հավաքականության ունեցածը մատուցում են նրան՝ ավելի ցայտուն, վճռական ու հմայիչ տեսքով. որովհետեւ հավաքականությունն իր դեմքն է տեսնում նրանց կյանքի հայելու մեջ եւ ընդունում է թե նրանք «ոսկր են յոսկերաց եւ մարմին ի մարմնոյ»:

Կուսակցությունն այսպիսով կաշկանդում է իր անդամին՝ ազատություն տալով նրան. կապում է հանձնառությամբ՝ եւ արձակում, որ ստեղծագործե. գծում է ուղիները՝ բայց թողնում է, որ ամեն ոք գնա իր կարողության չափով. պարտադրում է որոշումները՝ բայց թողնում է, իրագործես ինչ որ ամենից ավելի լավ կարող ես իրագործել: Բանական ազատության մի մարզավայր է Դաշնակցությունը, ուր ամեն ոք կոչված է ստեղծագործելու եւ արժեցնելու իր կարողությունը համազգային քաղաքական շահերի օգտին: Այս է պատճառը, որ չկան ավելի լավ ունկնդրված բանախոսներ, քան ունի Դաշնակցությունը եւ ավելի լավ կատարված որոշումներ, քան հանում է Դաշնակցությունը, որովհետեւ նրանք պայծառ ու ողորկ ձեւ են տալիս կուսակցական զանգվածի մտածումներին, բանաձեւում են նրա պահանջներն ու տենչերը եւ վարում են կյանքը նրանց որոշումների համաձայն: Ու քանի որ դաշնակցականները հայ են եւ Դաշնակցությունը հայ հեղափոխական կազմակերպություն, հետեւապես միեւնույն ժողովրդի զավակներն են եւ նույն ազգի լավագույն երազն են ձգտում իրացնել եւ լավագույն տիպարը մարմնացնել՝ - ուստի նրանց խոսքը, որ ուղղած է «ընկերներին», դառնում է մի խոսք, որ ունկնդրում է համայն Հայությունը եւ դաշնակցականի գործը, որ կատարվում է իր ընկերների որոշման համաձայն, դառնում է լայն զանգվածների համակրանքի առարկա. ոչ այն համակրանքի, որ ծափ ու ծնծղա է

զարկում, այլ այն համակրանքի, որ ապրում է հոգիների խորքը. եւ մենք տեսնում ենք թե ինչպես Դաշնակցությունը վատաբանում են անհատներ, բայց պահում են զանգվածները, խաչակրություն են քարոզում նրա դեմ եւ ստանում են օվսաննաներ իրր արդյունք: Այս ամենը պետք է ականջներին օղ անեն մեր այն բոլոր ավագ ու կրտսեր ընկերները, որ կարծում են թե իրենց անհատական մտածումն ու կարծիքը ավելի կշիռ ունեն, քան դաշնակցական հանրության մտածումն ու կարծիքը. որ իրենց անձնական պատասխանատվությունը գերադասում են կուսակցության հավաքական պատասխանատվությունից, որ երբեմն միտում են ցույց տալիս շքեղորեն մեկուսանալու իրենց անհատական տարակարծության մեջ: Ոչ ոք մեծացած է մեկուսացումով, ամենքը շահած են հաղորդումով: Զանգվածը հանցավոր լինել չի կարող, քանի որ ինքն է դատավորն ու օրենսդիրը: Զանգվածների հետ լինել նշանակում է հանցանքներից խուսափել: Պատասխանատվությունից զերծ է նա, որ թեկուզ անդունդն է գահավիժում զանգվածների հետ միասին. մինչդեռ պատասխանատու մնում է նա, որ մնում է մեկուսի իր անհատական խելքով ու «իմաստությամբ»: Պատմությունը նրանց դավաճան է անվանում. կուսակցությունը՝ անպիտան անդամ եւ կյանքը՝ հանրորեն անարժեք:

* * *

Մենք տեսանք թե ո՞վ է «դաշնակցականը», բայց ո՞րն է Դաշնակցությունը. ոչ թե կուսակցությունը, այլ Դաշնակցությունն իր էության մեջ: Բոլոր հին ու նոր ընկերները, բոլոր հին ու նոր մարմիններն իրենց գործերով միասին կազմում են մեր կուսակցությունը: Եվ նրանք, որ նահատակված ու մեռած են վաղուց, ե՛վ նրանք, որ բանտ ու աքսորի մեջ են այսօր կամ ազատ գործում են աշխարհի հեռավոր կողմերում. ե՛վ այն գործերը, որ ծրագրված են. ե՛վ այն ձեռնարկները, որ կան, ե՛վ այն կուսակցական կյանքը, որ եռում է ամենուր — այս ամենը մեր կուսակցությունն են կազմում: Այստեղ մտնում են թե՛ մեր ծրագիրը, թե՛ մեր Կանոնագիրը, թե՛ մեր որոշումները: Բայց ո՞րն է սրանցից Դաշնակցությունը. արդ-

յոք այս կամ այն Կենտրոնական Կոմիտեն կամ Շրջանային Ժողո՞-
վը: Այս մարմիններն ու ժողովները դաշնակցական գործ են կատա-
րում բայց զատ զատ կամ միասին առած Դաշնակցություն չեն,
թեեւ կուսակցությունն են: **Դաշնակցությունը կուսակցության
Ընդհանուր Ժողովն** է: Նրա վճիռներն են միայն, որ ճանաչվում
են «դաշնակցական»: Որեւէ Շրջանային ժողով կարող է հարյուրա-
վոր որոշումներ կայացնել, բայց այդ որոշումները «դաշնակցա-
կան» կճանաչվին այն չափով, որքան չեն հակասում Ընդհանուր
Ժողովի որոշումներին: Այս կամ այն սոսկական «դաշնակցականը»
կամ մարմինը կարող են բազմատեսակ գործեր հղանալ եւ կատա-
րել, բայց նրանք չեն համարվի «դաշնակցական» գործ ու հղացում
եթե դեմ են Ընդհանուր Ժողովների ոգուն եւ թողած ավանդու-
թյան: Հ. Յ. Դաշնակցության Բյուրոն, որ հավատարիմ ավանդա-
պահն է կուսակցության եւ Ընդհանուր Ժողովի որոշմանց իրա-
գործողը, կարող է չեղյալ նկատել մի շրջանի որոշում եւ անգո՝
մի կուսակցական մարմին, եթե նրանք դեմ են Ընդհանուր Ժողով-
ների վճիռներին եւ նրանց ավանդության: Ընդհանուր Ժողովի
մշակած Կանոնագիրն է, որ պարտադիր է բովանդակ Դաշնակցու-
թյան համար: Որեւէ Շրջան չի կարող մի մասնավոր Կանոնագիր
մշակել եւ պարտադիր հռչակել իր իսկ շրջանի համար, եթե նրա
հիմունքները հակասում են ընդհանուր Կանոնագրին, որ Ընդհա-
նուր Ժողովի դրոշմն են կրում: Բոլոր ընկերները եւ մարմինները
պատասխանատու են գերադաս մարմիններին եւ ժողովներին, մի-
միայն Ընդհանուր Ժողովն է, որ պատասխանատու չէ ոչ ոքի առ-
ջեւ: Նրա դատավորը հայոց պատմությունն է, մինչդեռ մարմին-
ների եւ ընկերների գերագույն դատավորը Ընդհանուր Ժողովն է:
Նա կարող է պատուհասել եւ վարձատրել, բայց ինքը ենթակա չէ
պատուհասի եւ վարձատրության: Ամեն մի «դաշնակցական» մար-
մին ու անդամ պարտավոր են իրենց ընթացքը շտկել այն ուղղու-
թյամբ, որ մատնանշում է Ընդհանուր Ժողովը, միայն ինքն է, որ
իր ընթացքը որոշում է ազատ եւ անկախ: Նա հենվում է իր ան-
դամների իմացական կարողության եւ փորձառության, լսում է բո-
լոր շրջանների եւ մարմինների կարծիքն ու տրամադրությունը,
նկատի ունի ամենքի պահանջն ու դիտողությունը, բայց ենթակա

չէ նրանց: Այս ամենը, որ գալիս են կուսակցության շրջաններից
ու շարքերից՝ խորհրդակցության, դիտողության եւ կշռադատու-
թյան նյութ են միայն, բնավ պարտադրանք: Ոչ մեկ անհատ, մար-
մին կամ շրջան կարող են Ընդհանուր Ժողովին հրամայական լիա-
զորագիր ուղարկել եւ ոչ մեկը նրանցից իրավասու է իրեն Դաշ-
նակցությունից դուրս հռչակել, եթե իր կարծիքը չանցնի Ընդհա-
նուր Ժողովի մեջ: Ընդհանուր Ժողովի շեմքը կոխելով՝ ամեն ոք
հանձնառու է նրա որոշումները պարտադիր նկատել իր շրջանի
համար, որովհետեւ Ընդհանուր Ժողովը բուն իսկ Դաշնակցու-
թյունն է, նրա միտքն ու կամքը: Նա Դաշնակցությունն է իր ներ-
կա կազմով եւ անցյալ պատմությամբ, այնտեղ շնչում են ոչ միայն
դաշնակցական զանգվածի ոգին, մարմինների եւ ժողովների մտա-
ծումն ու տրամադրությունները, այլեւ այն հազարավոր հերոսնե-
րի եւ նահատակների հիշատակը, որ իրենց գործով ստեղծած են
Դաշնակցությունը եւ իրենց արյունով ամրապնդած են նրա հի-
մունքները: Ընդհանուր Ժողովն իր վճիռներն արձակում է ոչ մի-
այն իր իմացության ու փորձին կռթնած, այլեւ նրանց հիշատակին
եւ ավանդության:

Մինչեւ Ընդհանուր Ժողովի դուռը լինելով խստորեն կարգա-
պահ եւ կաշկանդված կուսակցականներ, պատգամավոր ընկերները
ներս մտնելով դառնում են լիովին ազատ եւ անկաշկանդ: Այստեղ
ոչ ոք եւ ոչինչ կարող է արգելք դառնալ պատգամավորի մտքի ու
խղճի ազատության: Այստեղ դադարում է ամեն իշխանություն եւ
հեղինակություն եւ Ընդհանուր Ժողովն ինքն է դառնում միակ
իշխեցնողն ու հեղինակությունը: Այստեղ խոսում, դատում ու
վճիռ է արձակում ոչ թե այս ու այն պատգամավորը, այլ նույն ին-
քը քառասնամյա Դաշնակցությունը: Ինչ որ նա վճռե՝ վերջնական
է եւ անառարկելի, ինչ որ կանոնագրե՝ պարտադիր է ամենքի հա-
մար. ինչ որ մտածե եւ բանաձեւե՝ ա՛յն է «դաշնակցական» միտքն
ու կամքը: Կուսակցության ներքին բարեշրջումը աղբյուրանում է
շրջանների մեջ եւ այստեղ է հորդում գետի պես. զանգվածների
մտածումն ու տրամադրությունը ծիլ արձակելով զատ-զատ շր-
ջանների մեջ՝ այստեղ է ստանում իր վերջնական կերպարանքը եւ
պարտադրվում ամենքին: Ընդհանուր Ժողովը կարող էր ասել

կուսակցության. «զգոյսդ ի քոյոց քեզ մատուցանեմ», այսինքն քո ունեցածն է, որ մատուցանում եմ քեզ, բայց վերջնապես բանաձեւած եւ հանրորեն պարտադիր:

Բոլոր ինքնասիրություններն ու հավակնությունները դադարում են Ընդհանուր Ժողովի մեջ՝ լինեն անհատական, շրջանային թե հատվածական. ոչ ոք բռնանում է մյուսի վրա՝ լինեն անհատ թե շրջան, եւ վճիռները տրվում են միջին եզրով, որ իմաստությունն ինքն է: Ծայրագույն աչքն ու ծայրագույն ձախերը գոհանում են միջին եզրը գտնելով. մեկը մտածում է, որ իր տեսակետը թեեւ չհաղթանակեց, բայց նրանից մի բան անցավ ժողովի որոշման մեջ. մյուսը մտածում է, թեեւ իր տեսակետը խստորեն քննադատվեց, բայց եւ այնպես հիմնովին խորտակված չէ. մի բան մտավ նրանից ժողովի որոշման մեջ: Եվ այսպես կյանքը թելադրում է, շրջաններն ուղարկում են Ընդհանուր Ժողով, ժողովը քննում ու կշռադատում է եւ հանած վճիռը կազմում է մի նոր փուլը Դաշնակցության պատմության, ու նաեւ մի փուլը հայոց նորագույն պատմության, որքանով Դաշնակցության գործը հայոց պատմության մի մասն է կազմում: Այսպես է, որ կուսակցությունը մնում է մեկ եւ անբաժան, բայց փոփոխվում է ժամանակի հետ: Այսպես է, որ ամեն քառամյակ մի ընդհանուր բնույթ ունի Դաշնակցության պատմության մեջ, որովհետեւ ապրում ու գործում է միեւնույն Ընդհանուր Ժողովի շունչով: Այսպես է նաեւ, որ ոչ մեկ մարմին իրավունք է համարում իրեն «Դաշնակցություն» նկատել, թեեւ բոլորն իրենց «դաշնակցական» են համարում եւ ոչ ոք համարձակություն ունի հանուն Դաշնակցության խոսելու եթե չի կրկնում կամ չի մեկնաբանում Ընդհանուր Ժողովի որոշումները: Այսպես է դարձյալ, որ անհատ ընկերների մտածումները որոշ ուղղություն են ստանում եւ աշխարհի չորս կողմն ընկած դաշնակցական ընկերներն ու մարմինները միեւնույն դիրքն են բռնում միեւնույն խնդիրների հանդեպ: Այստեղ նույնպես գործում է ազատության արգասավոր սկզբունքը: Դաշնակցականները չեն թուլանում իրար, այլ իրենց մտածումն են արտահայտում եւ իրենց համոզումը: Նրանք ոչ թե հնազանդում են վերին կարգադրության՝ իբր անկերպարան հլուներ, այլ արտահայտում են իրենց

համոզումն՝ իբր գիտակից մարդիկ, որովհետեւ շրջանների պատգամավոր ընկերները նախքան քվե տան մի կարծիքի, որ պետք է դառնա կուսակցության աշխարհայացքի տարրերից մեկը կամ նախքան հավանություն տան մի որոշման, որ գործունեության նոր ուղիներ է հարթում կուսակցության առջեւ՝ նրանք նախապես համոզվում են ներքուստ եւ լիովին: Դրա համար հաճախ մեր Ընդհանուր Ժողովներն այնքան երկար են տեւում եւ վճիռները տրվում են մեծ մասամբ միաձայն: Որովհետեւ սա տարբեր կուսակցության պատգամավորների մի ժողով չէ, ուր ամեն մի պատգամավոր հայտնում է իր տեսակետը եւ քվեն է որոշում վերջնապես. այլ միեւնույն կուսակցության Ընդհանուր Ժողովն է, ուր կան տարամիտ ընկերներ, բայց չկան հակառակորդ բանակներ, ուր ամենքի համար թանկ է կուսակցությունը եւ նրա աներեր գոյությունը պայման է հետագա ամեն գործունեության. ուր կարծիքներն ավելի կշիռ չունեն, քան կուսակցության ծրագիրն ու հետապնդած գերագույն նպատակը, ուր բոլոր ընկերները պետք է մտածումով նույնանան, որ դուրս գալով ժողովից՝ իրենց շրջանների մեջ միեւնույն ուղղությամբ վարեն մտքերն ու գործերը եւ իբր նորադարձներ, նոր եռանդով ու խանդավառությամբ վարակեն շարքերը: Այս ձեւով միայն կարող է կուսակցությունը մնալ միաձույլ եւ անսասան եւ հայ ժողովրդի կյանքի մեջ կատարել այն պատմական դերը, որ վիճակված է նրան:

* * *

Ոմանք կարող են շփոթել մեր Ընդհանուր Ժողովը պառլամենտի հետ եւ մեր Բյուրոն՝ կառավարության: Թեեւ երկուսն էլ ընտրված պատգամավորների վճռաբեր մարմիններն են, բայց նրանք մեծապես տարբեր են իրարից: Պառլամենտը մի երկիր է ներկայացնում, Ընդհանուր Ժողովը՝ մի կուսակցություն: Այնտեղ մի երկրից տարամիտ անձեր են հավաքված իբր տարատեսակ շահերի պաշտպան, այստեղ նույն կուսակցության համամիտ անդամներն են հավաքված իբր միեւնույն շահերի պաշտպան: Այնտեղ ներկա են հակառակորդ բանակների սպայակույտեր, այստեղ

մի համերաշխ բանակի սպայակույտ է հավաքված: Չկա մի պարտադիր ծրագիր պառլամենտի բոլոր անդամների համար եւ ոչ մի պարտադիր Կանոնագիր, որ բոլորի ընթացքը ճշտեր պառլամենտից դուրս. մինչդեռ կուսակցության բոլոր անդամները նույն ծրագիրն են պարտադիր համարում եւ նույն Կանոնագիրը: Ընկերային երեւույթների մեջ եթե կա մեկը, որ կարող է Ընդհանուր Ժողովին զուգահեռ կազմել՝ - եկեղեցական հին ժողովներն են, ուր հավաքվում էին նույն դավանանքն ունեցող մարդիկ, որ հետեւում էին նույն կրոնին (ապրելու եղանակին), ձեւակերպում էին իրենց դավանանքն ու վարքի կանոնները (Ծրագիր եւ Կանոնագիր), որ պարտադիր էր ամենքի համար: Պառլամենտը բովանդակ ազգն է ներկայացնում, Ընդհանուր Ժողովը ազգի կազմակերպություններից մեկը: Նա օրինադրում է բովանդակ երկրի համար, Ընդհանուր Ժողովն՝ իր կուսակցության: Նա կազմակերպում ու հակակշռում է հանրային կյանքի բոլոր մարզերը, սա պայքարի կազմակերպություն է եւ պայքարներից մի տեսակի – քաղաքական հեղափոխական: Գործնական տեսակետով Ընդհանուր Ժողովը մի ռազմական խորհուրդ է, որ գծում է պայքարի մոտավոր նպատակներն ու ընթացքը եւ թողնում է մնայուն սպայակույտին իրագործելու: Դաշնակցությունն ունի պետության գործառնություններ – զինվորական, ներքին, արտաքին, դատական, լուսավորության, ելեւմտական - եւ Ընդհանուր Ժողովը որոշում ու վճիռ է տալիս այս ամենի մասին. բայց մինչդեռ պառլամենտի վճիռները բովանդակ պետության կյանքին են վերաբերում, Ընդհանուր Ժողովն իր կուսակցության մասին է միայն վճիռներ տալիս:

* * *

Այս տեսակետից ամեն մի քաղաքական կուսակցություն մի պետական սաղմ է եւ նպաստավոր պարագաների մեջ կարող է պետություն դառնալ՝ անպետություն ժողովրդի մեջ եւ կառավարություն՝ պետության մեջ: Պատմության բերումով նա իր կուսակցական կազմակերպությունը կարող է դարձնել պետական կազմակերպություն: Այնտեղ, սակայն, ուր պետություն եւ կուսակցություն

նույնանում են – ստեղծվում է մի չարաշուք բռնություն, որովհետեւ այն կարգերը, որ սահմանված են որոշ խմբակցության համար՝ պարտադրում են ամենքին եւ այն ծրագիրը, որ մշակված է որոշ նպատակներով համարվում է պետության բոլոր նպատակների համար: Իշխանության անցնելով՝ կուսակցությունը պետք չէ դադարի կուսակցություն մնալ, որովհետեւ բովանդակ ազգը մի կուսակցություն լինել չի կարող – ազգը այլազան շահերի, մտայնությանց եւ տիպարների մի զանգված է եւ կազմակերպությունը չի կարող պետական կազմ լինել, քանի որ պետությունը շատ ավելի այլազան գործառնություններ ունի, քան կուսակցությունը: Նա կարող է ներկայացնել զանգվածային շահերը: Նա կարող է հանդես բերել հանրային ծավալուն մտայնություն եւ համախմբել ազգության որոշ տիպարները, բայց ոչ բոլոր մտայնություններն ու տիպարները: Իշխանության հասած կուսակցությունը մի մասն է երկրի ազգաբնակչության եւ կոչված է ոչ թե ամենքին թեքելու իր լուծի տակ, այլ ամենքի հետ միասին գտնելու շահերի եւ ուժերի միջինը եւ նրանց ընթացք տալու: Իշխանության հասնելով կուսակցության գործը չի դադարում, այլ ծավալում ու բարդանում է. նա հիմա կարող է ավելի շատ բեմերից խոսել եւ ավելի տիրաբար, ավելի շատ ուժեր համախմբել եւ ավելի ընդարձակ գործերի ձեռնարկել, բայց նա չի կարող նույնանալ բովանդակ ազգի հետ, թեեւ կարող է շահել զորեղ մեծամասնություն: Մեծամասնությունը սակայն հարում է ոչ թե ծրագրի ամբողջության, այլ նրա այս կամ այն կետին եւ այնքան ժամանակ «կուսակցական» է, որքան կուսակցությունը հետամուտ է այդ կետերի իրացման: Բավական է, որ կուսակցությունը հետամուտ լինի իր ծրագրի լիակատար եւ արմատական իրացման՝ որ համակիր մեծամասնությունը գնալով հալվի եւ կուսակցությունը մնա իր հին սահմանների մեջ: Իսկ եթե կամենա համառել եւ մնալ իշխանության գլուխ՝ նա ստիպված է դիմել բռնության եւ գործել անհամակիր բազմության մեջ – իր քարոզն ու հորդորը դարձնելով սաստ եւ իր խոսքի համոզիչ ուժին ընկեր տալով սվին ու մտրակ: Այստեղ վերջանում է հեղափոխությունը եւ սկսում է բռնակալությունը: Այս անփառունակ վախճանից խուսափելու համար կու-

սակցություն եւ պետություն պետք է խստորեն տարբերվեն «դաշնակցականի» գիտակցության մեջ: Դաշնակցությունը հետամուտ է հայ պետություն ստեղծելու եւ ոչ թե ինքը հայ պետություն դառնալու: Պետությունն ազգի քաղաքական կերպարանքն է եւ ոչ թե կուսակցության: Կուսակցությունը պետության ազդակներից մեկն է, բայց պետությունը չի եւ լինել չի կարող: Նրանք, որ կարծում են, թե անկախ Հայաստանը Դաշնակցության մարմնացումն է լինելու, նրա նահանգները՝ շրջաններ, նրա վարչությունները՝ կոմիտեներ, շատ թյուր ըմբռնում ունեն եւ՛ կուսակցության եւ՛ պետության մասին: Այս մտածումը «դաշնակցական» չէ, այլ եթե կուզեք՝ «մեծամասնական»* է: Նրանք է, որ պետություն եւ կուսակցություն շփոթում են իրար հետ եւ ստեղծած են անօրինակ բռնություն, որ ժխտում է շահերի եւ մտածման ամեն տարբերություն: Մտածման մի եղանակ է նա ճշմարիտ համարում, որ իր իրավունքն է. եւ նույն եղանակն է ամենքին պարտադրում, որ բռնություն է: Նա իրեն չի նկատում պատմական եւ ընկերային ազդակներից **մեկը** այլ համարում է **միակը**: Այս մտայնությունը խորթ է Հ. Յ. Դաշնակցության եւ խորթ պիտի մնա: Նա չի բռնանում, այլ հորդորում է հանձնառության: Նա պայքարում է անիրավության դեմ եւ խուսափում է անիրավությունից: Նա հրավեր է կարդում, որ հայ մարդը քաղաքական ազատության ձգտե եւ իր ծրագիրն է առաջադրում իբր լավագույն լուծում հայ ժողովրդի հիմնական պահանջների, բայց նա չի բռնադատում, որ ամեն ոք իր մտածումն ու գործելակերպն ունենա: Դաշնակցականն ինքն է բռնանում իր վրա եւ ոչ կուսակցությունը նրա վրա: Նա կարգապահ է ներքին համոզումով եւ ոչ արտաքին բռնությամբ: Նա կուսակից է որոշ քաղաքական կացության եւ որոշ տնտեսական կարգի ոչ այն պատճառով, որ ստիպում են նրան, այլ որովհետեւ այդ է իր համոզումը:

Այս հանգամանքը պետք չէ մոռանալ մանավանդ ազգային գործերի մեջ, ուր դաշնակցականը հաճախ իշխանության մաս է կազմում: Պետք է որոշապես տարբերել կուսակցություն եւ իշխանություն: Կուսակցությունն իշխանություն չէ, այլ իշխանության ազդակներից մեկն է միայն: Նա կարող է իշխանության հասնել, բայց պետք է իր ինքնությանը գիտակից լինի: Նա պետք է միշտ հաշվի առնի այն «անտարբեր» զանգվածները, որոնց լուռ համամտությամբ անցած է իշխանության գլուխ: Նա պետք է հաշվի առնի ոչ միայն կուսակցական քվեները, այլեւ այն մարդկանց, որ նրան քվե տված են առանց կուսակցական լինելու: Նա պետք է հաշվի առնի, ոչ միայն նրանց, որ քվեարկած են թեր, այլեւ նրանց, որ քվեարկած են դեմ եւ պայքարած են իբրեւ կատաղի հակառակորդ, որովհետեւ իշխանությունը ազգի եւ համայնքի վարչական կամքն ու կերպարանքն է եւ ոչ կուսակցության: Անցնելով իշխանության գլուխ՝ նա դառնում է ազգի եւ համայնքի բերան եւ ոչ միմիայն իր կուսակցության: Նա պետք է աշխատե իր ծրագրի այն կետերը իրացնել, որ հուսալի է թե հանրության հավանության կարժանանան: Սա չի նշանակում ծրագրից հրաժարվել – քանի որ ձեռնարկած գործերը ծրագրից են բխում կամ նրա մի մասն են կազմում – սա նշանակում է հարմարվել միջավայրին եւ ծրագրի հետապնդումը արդյունավոր դարձնել:

«Դրոշակ», 1929 թիվ 8,9,10,11,12, 1930 թիվ 1,2

Առանձնատիպ՝ 1930 Փարիզ (Մատենաշար «Դրոշակ»ի, թիվ 68

* Բոլշեւիկյան (խմբ.)

ՄԵՐ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ

Ա

Հ. Ց. Դաշնակցության կանոնագրի առաջին հոդվածն իրավունք է տալիս ամեն մի չափահաս Հայի անդամակցելու մեր կուսակցության, պայմանով սակայն, որ նա ընդունե մեր Ծրագիրն ու Կանոնագիրը եւ երդվե հավատարիմ մնալ նրանց: Այս մասին բավական խոսած եմ իմ մեկ գրության մեջ, որի անունն է. «**Մտածումներ Հ. Ց. Դաշնակցության մասին**»: Այս անգամ ես պիտի խոսեմ հատկապես մեր կանոնագրի մասին, աշխատելով պարզել նրա դերն ու նշանակությունը մեր կուսակցության համար: Նյութի բնույթն այնպես է, որ ստիպված եմ մի քանի կրկնություններ անելու, որի համար ընթերցողի ներողամտությունն եմ խնդրում: Աշխատած եմ մտածումներս վճիտ ու որոշ ձեւակերպել, որ մատչելի դառնան մեր բոլոր շարքային ընկերներին:

ԿԱՆՈՆԱԳՐԻ ԴԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Երբ մի քանի մարդ կյանքի որեւէ երեւույթի մասին միատեսակ կարծիք ունին՝ նրանց ասում են համամիտ մարդիկ: Սրանք կարող են շատ կամ քիչ լինել, մեկ կամ մի քանի երեւույթների մասին միատեսակ կարծիք ունենալ, բայց նրանք մի՛շտ համամիտ են եւ համամիտ կհամարվին, քանի դեռ նույն երեւույթների մասին տարակարծիք չեն դարձած: Կարող է պատահել, որ մի խումբ մարդիկ այսինչ երեւույթների մասին համամիտ լինեն այսինչ խմբի հետ, իսկ ուրիշ երեւույթների մասին համակարծիք լինեն ուրիշ խմբի հետ, բայց նրանք պարզապես համամիտ կնկատվին եւ ուրիշ ոչինչ:

Շատ անգամ մարդիկ ոչ միայն իրար համամիտ են, այլեւ հաճախ գործակից են, այսինքն միասնաբար նույն գործն են անում կամ նույն նպատակին են ծառայում: Մարդկանց այս կամ այն խումբը

միաժամանակ կարող է գործակցել մի քանի խմբերի հետ. այսպես օրինակ՝ իբր մարդիկ՝ անդամ լինել այսինչ միության, իբր հավատացյալ՝ այսինչ դավանության, իբր քաղաքացի՝ այսինչ կուսակցության, իբր բարեսեր՝ այսինչ ընկերության եւ այլն: Նրանք կարող են նաեւ **այսօր** գործակցիլ այսինչ խմբին, **վաղը**՝ մի ուրիշ խմբի բայց մեկ խմբի գործակցին թե մի քանի խմբերի՝ նրանք մի՛շտ կհամարվին գործակիցներ: Այսպիսով տեսնում ենք թե մարդկային ընկերության մեջ անհատներն ու խմբերը կարող են իրար համակարծիք գտնվիլ եւ ուրեմն՝ համամիտ նկատվիլ եւ միասնաբար գործեր կատարել եւ ուրեմն՝ գործակից համարվիլ:

Կուսակցությունը համամիտ եւ գործակից մարդկանց միություն է: Այս համամտությունն ու գործակցությունը սակայն տեւական բնույթ ունին: Հաճախ որեւէ ձեռնարկի շուրջ համախմբվում են մարդիկ, որ իրար հետ առժամապես կապված են ա՛յդ ձեռնարկը հաջողեցնելու համար, եւ երբ հաջողում կամ ձախողում են՝ ցրվում են, որովհետեւ նրանց կապը առժամյա բնույթ ուներ: Կուսակցության կամ ընկերության անդամներն այդպես չեն. նրանց կապը տեւական է: Այս տեւական կապն է, որ մարդկային խմբերը դարձնում է ընկերություն, կուսակցություն կամ միություն: Նրանք կապված են իրար եւ համամիտ ո՛չ թե կարճ ժամանակի եւ մի որոշ ձեռնարկի համար, այլ երկար ժամանակի եւ շատ գործերի համար: Այսպես են օրինակ Հայ Կարմիր Խաչը, Համազգայինը, Բարեգործականը, ինչպես նաեւ առեւտրական, գործակցական եւ այլ կարգի միություններ: Այդ ընկերությանց եւ միությանց անդամները կապված են տեւապես որոշ նպատակների համար եւ որոշ ձեւով: Նրանց նպատակները եւ փոխադարձ կապի ձեւը նախորոշում է նրանց Կանոնագիրը: Այդ կանոնագիրն է, որ համամիտ մարդկանց խմբերը դարձնում է **կազմակերպություն**, որոշելով անդամների եւ մարմինների փոխադարձ կապերը: Այս տեսակ մի կազմակերպություն է եւ մեր կուսակցությունը, որ ունի որոշ նպատակ եւ որոշ կանոնագիր:

Ընկերությունները եւ միությունները ինչպես նաեւ կուսակցությունները տարբերում են իրենց նպատակներով եւ փոխադարձ կապերի ձեւով: Այսպես՝ առեւտրական ընկերության նպա-

տակն է ապրանքների փոխանակությամբ դրամ շահեցնել իր անդամներին, գործակցական ընկերության նպատակն է ածան եւ ընտիր ապրանք մատակարարել իր անդամներին կամ միասնաբար ապրանք արտադրելով՝ շահը հավասար բաշխել արտադրողներին: Բարեսիրական ընկերությանց նպատակն է օգնության հասնիլ կարոտներին: Այս ընկերությանց կանոնագիրը նախորոշում է անդամների եւ մարմինների իրավունքն ու պարտականությունն այն ձեւով, որ նպաստավոր լինի իրենց նպատակի իրագործման: Ինչպես տեսնում եք ընկերությանց եւ միությանց նպատակները կա՛մ շահասիրական են, կա՛մ շահակցական, կա՛մ բարեսիրական. կան, որ նպատակ ունին ժողովուրդը լուսավորելու, կան որ հետամուտ են մարզանքն ընդհանրացնելու, կան որ ձգտում են գիտություն մշակել, ուրիշներ՝ այս կամ այն կրոնը տարածել եւ այլն: Սրանցից ոմանք իրենց անդամների նյութական շահն ունին նկատի, ոմանք՝ ուրիշների բարեկեցությունը, մի քանիսը մարդկության բարձրագույն շահերը: Այս կարգի կազմակերպություն են եւ քաղաքական կուսակցությունները եւ նրանց շարքին՝ Հ. Յ. Դաշնակցությունը:

Հ. Յ. Դաշնակցության նպատակն է վերազարձնել հայոց ազգին իր պատմական հայրենիքը եւ հաստատել այնտեղ ընկերվարական կարգեր՝ հայ պետության հովանու տակ: Այսպիսով մեր կուսակցությունը ո՛չ շահասիրական եւ ո՛չ շահակցական միություն է. միաժամանակ նա բարեսիրական ընկերություն չէ: Շահասիրական եւ շահակցական ընկերությունները մտածում են **իրենց** անդամների նյութական շահերն ապահովել. բարեսիրական միությունները ձգտում են իրենց անդամներից **դուրս** գտնված կարոտյալներին օգնել: Քաղաքական կուսակցությունները, ինչպես նաեւ Հ. Յ. Դաշնակցությունը հետամուտ են պաշտպանելու այն դասակարգի տնտեսական եւ քաղաքական շահերը, որի գիտակից անդամները իրար գործակցելով՝ կազմած են կուսակցությունը: Ուրեմն ո՛չ թե կուսակցության **անդամների** շահերն է, որ պաշտպանում է Դաշնակցությունը, այլ ա՛յն **դասակարգի** շահերը, որին պատկանում են դաշնակցականները: Հ. Յ. Դաշնակցությունը հայ աշխատավոր դասակարգի կուսակցությունն է: Այդ դասակարգը իր բովանդակ զանգվածով մեր կուսակցության անդամ չէ. բայց այդ հանգամանքն արգելք չէ, որ մեր կուսակցությունը այդ զանգվածի շահերը պաշտպանե եւ նրա քաղաքական եւ տնտեսական բարեկեցությունը իր գերագույն նպատակը համարե: Այս նպատակին հասնելու համար է, որ իրար մոտ եկած են աշխատավոր դասակարգի գիտակից անդամները եւ որոշ կանոնագրով ստեղծած են մի որոշ կազմակերպություն եւ տեւապես գործակցում են իրար հետ: Կանոնագիրն է այսպիսով, որ ցրիվ անհատներն ու խմբերը տեւապես կապում է իրար հետ եւ դարձնում **կազմակերպություն**: Առանց կանոնագրի, որ նախորոշում է անդամների եւ մարմինների փոխադարձ կապը՝ համամիտ եւ գործակից անհատներն ու խմբերը չէին կարող կուսակցություն համարվիլ: Կանոնագիրը կուսակցության ողնաշարն է, որով կանգուն է նա եւ գործունակ: Այս է պատճառը, որ ամեն ընկերություն, միություն եւ կուսակցություն աշխատում է իր կանոնագիրը անխախտ պահել եւ խստիվ գործադրել, որովհետեւ գիտե եւ համոզված է թե Կանոնագիրն է իր գոյության պայմանը եւ հարատեւության խարիսխը:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԻՐՆ ՈՒ ԱՆԴԱՄԸ

Մեր կուսակցությունն ունի շատ համակիրներ ու գործակիցներ եւ ավելի շատ ատեցողներ եւ հակառակորդներ: Համակիրն ու գործակիցը առանձին առած՝ պատահական անձեր են եւ ցրիվ ուժեր, որոնց բերած նպաստը արժեք է ստանում կուսակցության գործի շնորհիվ: Նրանք տեւապես կապված չեն մեզ հետ եւ կուսակցության արժեքն ու հեղինակությունը նրանցից չէ կախված: Նրանք ո՛չ մեկ պարտականություն ունին մեր հանդեպ ինչպես նաեւ ո՛չ մեկ իրավունք, որ նախատեսված լինի մեր կանոնագրով: Մեր կապերը նրանց հետ կենցաղական են եւ ոչ կանոնագրական: Իրենք են որոշում իրենց նպաստի եւ օժանդակության չափն ու ժամանակը. նրանք այսօր կարող են համակիր ու գործակից լինել իսկ վաղը անհամամիտ եւ հակառակորդ. այսօր անձնվիրությամբ աշխատել, վաղը մատը մատին չզարկել: Համակիրը մեր կազմակերպության անդամ չէ, հետեւապես ազատ է իր վարմունքի եւ մտածության մեջ: Մինչդեռ կուսակցության անդամը տեւապես կապ-

ված է մեզ հետ եւ իր իրավունքն ու պարտականությունը նախորոշված է մեր կանոնագրով: Մեր փոխադարձ կապը մեր անդամների հետ կանոնագրական է եւ այդ սահմանների մեջ՝ ընկերական: Կուսակցության անդամը պարտավոր է համամիտ լինել ծրագրին եւ գործակցել կուսակցության ձեռնարկներին եւ պարտավոր է ո՛չ թե մի որոշ ժամանակ եւ մի որոշ ձեռնարկի համար, այլ այնքան ժամանակ, որ կմնա կուսակցության անդամ եւ այն բոլոր ձեռնարկների համար, ուր կպահանջվի իր մասնակցությունը: Նա երդված է հավատարիմ լինել կուսակցության ծրագրին եւ կանոնագրին: Այն օրը, որ դադարի համամիտ լինել եւ գործակից՝ դրժած կնկատվի իր երդմանը եւ կդադարի կուսակցության անդամ համարվել: Պարզ համամիտը կարող է համակիր լինել մեր ծրագրին եւ հակառակ՝ մեր գործին. կամ թե՝ գործակցել մեզ հետ մեր այս կամ այն ձեռնարկության մեջ եւ հակառաք լինել մեր ծրագրին: Այդ իր իրավունքն է. նա ազատ է լիովին: Բայց կուսակցության անդամը չի կարող մեր ծրագրին ու կանոնագրին համամիտ լինել եւ մեր գործին հակառակ. կամ գործն ընդունել եւ մերժել Ծրագիր ու Կանոնագիր: Նա պարտավոր է եւ՛ մեր Ծրագիրն ու Կանոնագիրն ընդունել եւ՛ մեր գործին մասնակցել, այլապես մեր կանոնագրի առաջին հոդվածով կդադարի կուսակցության անդամ համարվել:

Պարզ համակիրն ու գործակիցը մեր կուսակցության անդամ չլինելով՝ ազատ է ինչպես մեր կանոնագրի պաշտպանությունից, այնպես եւ հետապնդումից: Համակիրները մեզ բարեկամ են եւ ոչ թե ընկեր. եւ մեր վերաբերումը նրանց հանդեպ կարող է եւ պետք է լինի բարեկամական եւ ոչ ընկերական: Նրանց վրա չէ, որ հենված է կուսակցությունը իր քաղաքական պայքարի մեջ: Նրանց օժանդակությունը պետք է մի՛շտ գնահատել եւ նկատի ունենալ, բայց ձեռնարկների ժամանակ կուսակցության անդամների թիվն ու կշիռը պետք է իբր հիմք առնել: Նրանց համար մեր Ծրագիրն ու Կանոնագիրը պարզ առիթներ են իրենց համակրանքն ու գործակցությունը ցուցադրելու, մինչդեռ կուսակցության համար Ծրագիրն ու Կանոնագիրը գոյության պայման են եւ կյանքի իմաստ: Ծրագրով նախատեսված նպատակների համար է, որ

կազմված է կուսակցությունը եւ կուսակցությունը կայուն ու տեւական է իր կանոնագրով: Թեեւ համակամ եւ համամիտ մարդիկ են, որ իրար մոտ գալով մշակած են մեր Ծրագիրն ու Կանոնագիրը, բայց մի անգամ մշակվելուց եւ ընդունվելուց հետո՝ նրանք շատ ավելի կայուն ու տեւական են դարձած քան նրանց մշակող եւ ընդունող ընկերները: Տարիները սահում են իրար ետեւից, հազարավոր մարդիկ մտնում են կուսակցության շարքերը, իրար հետ գործակցում, ապրում ու մեռնում կամ նահատակվում՝ բայց Ծրագիրն ու Կանոնագիրը մնում են հաստատուն եւ իշխում են ու ղեկավարում մեր կուսակցության անդամներին: Կանոնագրի հիման վրա է, որ մտնում են նորերը, կանոնագրով են ընտրվում մարմինները, կանոնագրով են պատժվում անկարգները եւ վտարվում անսաստողները: Եվ դա բնական է եւ հասկանալի, որովհետեւ այն օրը, որ Ծրագիր ու Կանոնագիր վերանան՝ կազմակերպությունը կքայքայվի եւ կուսակցությունը կլուծվի: Անդամները կմնան իբր սոսկական անձեր, բայց կուսակցությունը կչքանա: Նրանց զոդող կապը կխզվի եւ այլեւս չեն կարող տեւապես եւ միասնաբար քաղաքական նպատակ հետապնդել: Մինչ այդ՝ կուսակցության համախմբված մարդիկ մտածելու մի եղանակ ունեին, որ նախորոշված էր ծրագրի մեջ եւ փոխադարձ կապի եւ ստորադասության մի ձեւ ունեին, որ նախորոշված էր կանոնագրի մեջ. ամենքը կնդունեին այդ նպատակը եւ կպահեին այդ կապը: Բայց երբ չքանան եւ՛ Ծրագիր եւ՛ Կանոնագիր՝ կչքանա եւ կուսակցությունը եւ նրա անդամները կդառնան անհամամիտ եւ անկապակից անձերի ցրված բազմություն:

Մի անգամ եւս կրկնենք, որ պարզ համակիրն ու գործակիցը չեն կարող կուսակցության անդամ համարվիլ: Նրանք կարող են շատ հարգելի մարդիկ լինել, շատ խելացի, հայրենասեր եւ ազգասեր, շատ պարկեշտ եւ գիտուն, բայց նրանք միշտ կմնան համակիր, երբե՛ք կուսակցության անդամ, քանի դեռ կազմակերպված չեն, այսինքն՝ քանի մեր ծրագիրն ընդունելով՝ կանոնագրական կապով միացած չեն մեզ հետ իբր նույնիրավ ընկերներ: Նրանք կարող են մեր կուսակցության մեծամեծ ծառայություններ մատուցած լինել, բայց իրավապես մեր կուսակցական կյանքի, մեր ծրագ-

րի եւ կանոնագրի վրա ազդել չեն կարող: Համեստադույն անդամի ձայնը մեր կուսակցության մեջ ավելի կշիռ ունի, քան մեծատաղանդ համակիր մարդու կարծիքը: Համակիրը դուրս է մեր կուսակցությունից եւ պետք է դուրս համարվի: Նա ոչ պարտականություն ունի մեր հանդեպ եւ ոչ իրավունք: Նա կարող է այսօր նպաստել մեր գործին, վաղը հեռանալ մեզանից, այսօր հիանալ մեզ վրա, վաղը վարկաբեկել: Իր վարմունքի մեջ նա ազատ է եւ անկախ: Նա մեր գործակիցն է իր քմայքի կամ շահերի բերումով. այսօր այդ քմայքն ու շահերը նրան մեր գործակիցը կարող են դարձնել, վաղը՝ մեր հակառակորդը: Իր անձնական նկատումները մեր հակակշռին ենթակա չեն: Նա պարտական չէ մեզ հաշիվ տալու իր ընթացքի մասին եւ ոչ մե՛նք իրավունք ունինք պահանջելու: Նա ենթակա չէ մեր կանոնագրին, հետեւապես ենթակա չէ նաեւ մեր հսկողության եւ հակակշռին: Մեր ընկերը մեր լծակիցն է. համակիրը ազատ է լուծից:

Ընկերները սակայն պետք է մի բան մի՛շտ նկատի ունենան: Ով դուրս է մեր կուսակցությունից՝ դեռ չի նշանակում որ անպիտան մեկն է: Մեր շարքերից դուրս կան եւ կարող են լինել շատ պիտանի, պարկեշտ եւ տաղանդավոր մարդիկ, որ կարող են մեր այս կամ այն ձեռնարկին մեծապես օգտակար լինել: Առանց մերժելու նրանց արժանիքը եւ երախտագետ լինելով նրանց մատուցած ծառայության համար՝ ընկերները պետք չէ շփոթեն համակիր ու գործակից անձերը մեր կուսակցության անդամների հետ եւ պետք է միշտ հիշեն թե դաշնակցական է այն մարդը, որ ընդունում է մեր Ծրագիրն ու Կանոնագիրը:

Ինչպես համակիրն ու գործակիցը ազատ են մեր կուսակցության հանդեպ՝ մեր կուսակցությունն իր հերթին ազատ է նրանց հանդեպ: Ինչպես նա իր համակրանքն ու գործակցությունը չի զլանում մեր կուսակցության՝ քանի մեր գործը նպաստավոր է համարում իր նկատումներին, մենք նույնպես չենք զլանալու մեր հարգն ու երախտիքը նրան, քանի ծառայում է մեր նպատակին: Մեր կապը նրանց հետ տեւական չէ, այլ ժամանակավոր: Այդ կապն այնքան կարող է տեւել, որքան մեր շահերն ու նկատումները իրար չեն խաչաձեւում: Կուսակցությունը եւ իր անդամները պետք է

աշխատեն շատ համակիր անձեր շահել, բայց մազաչափ չշեղվիլ մեր կանոնագրից ու ծրագրից: Մեր իսկական համակիրն ու գործակիցը նա է, որ իր համակրանքն ու գործակցությունը չի սակարկում, այլ մեզ հետ է՝ ինչպես որ կանք: Չի կարելի ծրագրի որեւէ կետ փոխել եւ կանոնագրի որեւէ հոդված անտեսել՝ համակիրներ շահելու համար: Կուսակցության նպատակը համակիրներ շահելը չէ, այլ կուսակցության անդամներ պատրաստելը եւ կանոնագրի անխախտ պահպանումով՝ իր ծրագրած նպատակին ձգտելը: Եթե այս անշեղ ընթացքին համակիր եւ գործակից անձեր գտնվին՝ լա՛վ. նրանք մեր բարեկամներն են, մեր գնահատանքին եւ հարգանքին արժանի: Այս տեսակետից նայելով խնդրին՝ մեր շարքերի մեջ կան մարդիկ, որ իսկապես համակիրների դասի մեջ պիտի լինեին եւ ընդհակառակն կան համակիրներ, որ մեր ընկերների շարքի մեջ պիտի դրվեին: Բայց քանի որ մեկն ընդունած է Ծրագիրն ու Կանոնագիրը իսկ մյուսը՝ ո՛չ,- մեկն ընկեր է նկատվում, մյուսը՝ համակիր: Եվ ուրիշ կերպ լինել չի կարող, քանի պահում ենք մեր կազմակերպությունը:

ՄԵՐ ԿԱՆՈՆԱԳՐԻ ՀՈՐԻՆՎԱԾՔԸ

Կուսակցության ծրագիրը մեր նպատակի մասին է խոսում եւ նպատակն է հիմնավորում, իսկ Կանոնագիրը խոսում է մարմինների եւ անդամների փոխադարձ կապի մասին: Կուսակցության ընթացիկ կյանքի մեջ ծրագիրը նվազ է հիշվում քան Կանոնագիրը, որ հարատեւ գործում է: Ծրագիրը հասկանալու համար պահանջվում է մի որոշ կրթություն եւ մտքի մեծ ճիգ, մինչդեռ Կանոնագիրը ըմռնելու համար պարզ մեկնությունը բավական է, որովհետեւ կազմակերպության ընթացիկ կյանքը ամեն օր գործնական դաս է տալիս կանոնագրի մասին: Այս հանգամանքը ոմանց այն կարծիքին է բերած թե Դաշնակցությունը պարզապես կազմակերպությունն է հայության, մոռանալով, որ ամեն կազմակերպություն մի որոշ նպատակ ունի եւ ինքնանպատակ լինել չի կարող: Մեր կազմակերպությունը ծրագրի իրագործության համար է, հե-

տեւապես մեր ծրագիրը գերադաս է կանոնագրից, թեեւ կանոնագրի պարտադրանքը մենք շատ ավելի հաճախ ենք զգում քան ծրագրի գոյությունը:

Վերից նայելով մեր կուսակցության շենքին, ինչպես որ այդ շենքն երեւում է մեր կանոնագրի միջից՝ նրա հիմքը ժողովներից է սկսվում եւ ժողովով է վերջանում: Իրավասությունը մեր կուսակցության մեջ ժողովների ձեռքին է: Մարմինները ժողովներից են բխում եւ ժողովներին ենթակա են: Ժողովները գերադաս են, իսկ մարմինները ստորադաս: Ժողովներն օրինադրում են եւ մարմիններն իրագործում: Ոչ մեկ մարմին կարող է իր գերադաս ժողովը լուծել, բայց ժողովները կարող են ստորադաս մարմինները լուծել, երբ տեսնեն թե նրանք իրենց որոշման հակառակ ընթացք ունին: Մարմինների եւ անդամների իրավունքները կշիռ ու արժեք ունին, որովհետեւ ժողովները այդպես են նախատեսած:

Կուսակցության հիմքը կազմում է խմբական ժողովը, իսկ շենքի կատարը՝ Ընդհանուր Ժողովը, որից գերադաս ժողով չունի Դաշնակցությունը: Այս հանգամանքը բնորոշում է մեր կուսակցության կերպարանքը. Դաշնակցությունը մենատիրական չէ, այլ ռամկավարական կազմ ունի, այսինքն այնտեղ իշխել չի կարող որեւէ անհատի կամքը, որքան եւ այդ անհատը տաղանդավոր եւ անձնվեր լինի. այնտեղ իշխում է ժողովների կամքը, որ կարող է անհատներին բարձրացնել եւ իջեցնել՝ նայելով նրանց ընթացքին ու գործին: Այդ իսկ պատճառով դաշնակցական ընկերները ո՛չ թե կապված են այս կամ այն անձի հետ, այլ կապված են իրար հետ եւ դաշնակցություն ասելով ո՛չ թե այս ու այն մարմինն է հասկացվում կամ այս ու այն ընկերների խումբը, այլ բոլոր ընկերների համագումարը: Բոլոր ընկերները ինչ գործ եւ կատարած լինեն կամ ինչ շնորհք եւ ցուցադրեն՝ իբրեւ կուսակցության անդամներ նույնիրավ են, այսինքն նույն իրավունքներն ունին եւ իրար հավասար են: Ոչ մեկը նրանցից գերադաս է մյուսից եւ ոչ մեկն իրավունք ունի բռնանալու մյուսի վրա: Բոլոր ընկերները միասին առած կազմում են դաշնակցությունը եւ բոլոր ընկերների հավաքական կամքն է, որ իշխում է կուսակցության մեջ: Այդ հավաքական կամքին ենթակա են եւ՛ մարմինները եւ՛ ընկերները: Այդ

կամքն է տնօրինում կուսակցության ճակատագիրը: Նա է տերն ու տնօրենը բովանդակ կազմակերպության: Բայց այդ գերագույն իրավունքը ընկերներն ստանում են կանոնագրի հիման վրա: Այդ կանոնագրի հիմնական պայմանն ընդունելով է, որ սոսկական մի հայ իրավունք է ձեռք բերում դաշնակցության բախտը տնօրինելու իր նման ընկերների հետ միասին եւ համագումար: Նա երդումով խոստացած է հավատարիմ մնալ մեր ծրագրին եւ կանոնագրին, ուստի եւ տիրացած է այդ մեծ իրավունքին: Այն օրը, որ նա անտեսե իր Կանոնագիրը՝ կդադրի կուսակցության անդամ նկատվել եւ կզրկվի կուսակցության կյանքը տնօրինելու մեծ ու բարձր իրավունքից:

Մեր կուսակցության հորինվածքի մեջ ժողովներն ու մարմինները հաջորդում են իրար եւ իրար գերադասում: Խմբական ժողովը ընտրում է իր վարիչ մարմինը՝ - խմբապետը, գանձնապահն ու քարտուղարը,- որոնք խմբի հակակշռին ենթակա են եւ կարող են փոխվիլ նույն խմբի կամքով: Մի քանի խմբեր (3-4) միասնաբար ժողով գումարելով՝ ընտրում են ենթակոմիտե. իսկ ավելի շատ խմբեր (50 եւ ավելի ընկերներ), եթե նույն վայրի մեջ են ապրում՝ միասնաբար ընտրում են այդ վայրի կոմիտեն: Եթե այդ 50 ընկերները տարբեր վայրերի մեջ են՝ ընտրության ուրիշ եղանակ են կիրարկում. խմբերն ընտրում են մեկ կամ մի քանի պատգամավոր, որ իրավունք ունին խոսելու խմբի անունից եւ որ իրար քով գալով՝ կազմում են ժողով եւ ընտրում են կոմիտե: Այսպես է ընտրվում եւ մի շրջանի կենտրոնական կոմիտեն, ինչպես նաեւ Դաշնակցության Բյուրոն: Կոմիտեության ընտրական ժողովը կոչվում է Պատգամավորական*, կենտրոնական կոմիտե ընտրող ժողովը՝ Շրջանային, որին մասնակցում են կոմիտեների եւ նրանց շրջանի պատգամավորները, իսկ Բյուրոն ընտրվում է Դաշնակցության Ընդհանուր Ժողովի կողմից, որին մասնակցում են բոլոր կենտրոնական կոմիտեների եւ նրանց շրջանի պատգամավորները: Չկա դաշնակցության մեջ ավելի բարձր եւ իրավասու ժողով քան Ընդհանուր Ժողովը, ինչպես չկա ավելի բարձր եւ իրավասու մարմին քան Բյու-

* այժմ՝ ներկայացուցչական (խմբ.):

ռոն: Բոլոր մարմինները համարատու են իրենց ընտրող ժողովներին եւ պատասխանատու են նրանց առջեւ: Բոլոր մարմինները պարտավոր են իրենց ընտրող ժողովների որոշումներն իրագործել: Բոլոր ժողովները համարառու են իրենց ընտրած մարմինների հանդեպ եւ իրավունք ունին պատիժ ու պատուհաս տնօրինելու նրանց մասին: Խումբը կարող է փոխել իր ընտրած մարմինը եւ պատժել իր անսաստող ընկերը: Ընկերների ընդհանուր ժողովը կարող է իր դիտողությունն անել ենթակոմիտեին եւ կոմիտեին եւ դժգոհության պարագային չվերընտրել մարմինը: Շրջանային ժողովը իրավունք ունի համար պահանջելու կենտրոնական կոմիտեից եւ նրան պատասխանատվության հրավիրելու: Նույնը կարող է անել Ընդհանուր ժողովը Բյուրոյի վերաբերմամբ: Խմբի որոշումները պարտադիր են իր անդամների եւ իր ընտրած մարմնի համար. ընկերական ընդհանուր ժողովի կամ պատգամավորական ժողովի որոշումները պարտադիր են ենթակոմիտեի եւ կոմիտեի համար. Շրջանային ժողովի որոշումները օրենք են կենտրոնական կոմիտեի համար, իսկ Ընդհանուր ժողովի որոշումները՝ Բյուրոյի համար: Բոլոր ժողովների որոշումները սակայն պետք է կանոնագրի հիման վրա տրվին եւ չհակասեն կուսակցության ծրագրին եւ որդեգրած գործելակերպին: Միմիայն ա՛յդ պայմանով որոշումները կարող են պարտադիր համարվել եւ օրինական ուժ ստանալ:

Ինչպես տեսնում եք՝ ժողովներն են որ մարմիններ են ընտրում եւ նրանց պատասխանատվության կանչում: Մարմինների անդամները քանի դեռ ժողովական են եւ մարմնի անդամ չեն ընտրված՝ ո՛չ մեկ առավելություն ունին մյուս ժողովական ընկերների հանդեպ: Բայց երբ ընկերների մեծամասնության հավանությամբ մի քանիսը ընտրվին մարմնի անդամ՝ կացությունը կփոխվի. ընտրվածները կդառնան գործադիր իշխանություն եւ վարիչ, իսկ ընտրողները կմնան ենթակա: Շարքային պարզ ընկերը սակայն իրավասու վարիչ կդառնա ո՛չ թե իր կամքով, այլ ընկերների մեծամասնության հավանությամբ եւ ո՛չ թե ընկերների քմայքով, այլ կանոնագրի հիման վրա: Կանոնագիրն է, որ նախորոշած է թե ի՞նչպես պիտի ընտրվին մարմինները եւ Կանոնագիրն է, որ որոշած է մարմինների իրավասության սահմանը եւ ուրեմն ընկերները ենթարկվում են ո՛չ թե մարմնի անդամներին, այլ կուսակցության կանոնագրին, երբ կատարում են մարմնի կարգադրությունները: Շարքային ընկերները երդում տված են ընդունել Կանոնագիրը եւ ենթարկվիլ նրան. այս երդումի ուժովն է, որ շարքային ընկերը պարտավոր է ենթարկվիլ իր գերադաս մարմինների եւ ժողովների որոշումներին: Այս կամ այն ընկերը չէ, որ իրավունք է համարում նրան հրամայելու, այլ մարմինը, որի մեկ անդամն է այս կամ այն ընկերը, իսկ մարմնին Կանոնագիրն է տված հրամայելու եւ հրահանգելու իրավունքը: Այսպիսով մարմինների կանոնական որոշումներին չենթարկվիլ՝ կնշանակե Կանոնագիրն անտեսել եւ ընկերների մեծամասնությունը անարգել, քանի որ այդ մեծամասնության կամքով է, որ մի քանի պարզ շարքային ընկերներ ընտրված են իբր իրավասու եւ ղեկավար մարմին: Այս է պատճառը, որ Կանոնագիրը պատիժներ սահմանած է անսաստող ընկերների համար՝ պարզ հանդիմանությունից սկսած մինչեւ վտարումը կուսակցության շարքերից: Քանի որ Կանոնագիրը կուսակցության ողնաշարն է, առանց որի նա քայլել ու գործել չի կարող՝ ինքնին պարզ է, որ Կանոնագիրն անտեսողը սպառնում է խորտակել կուսակցության ողնայունը, քայքայել նրա հորինվածքը եւ անգործության դատապարտել: Բնական է որ կուսակցությունը իր շարքերից հանե այդ կարգի անսաստող ընկերը, որ չի գիտակցում թե իր առաջին եւ նվիրական պարտականությունն է պահպանել կուսակցության շենքը, որի սյուներն են կանոնագրի հոդվածները եւ որի շնորհիվ միայն նա ընդունված է կազմակերպական շարքերի մեջ:

Միմիայն Հ. Ց. Դ. Ընդհանուր ժողովն է, որ իրավունք ունի Ծրագիր եւ Կանոնագիր փոփոխելու եւ միմիայն այդ ժողովի որոշումներին է, որ պարտավոր են ենթարկվել **բոլոր** դաշնակցականները ուր եւ գտնվին, **բոլոր** ժողովները՝ ուր եւ գումարվին եւ բոլոր մարմինները՝ ուր եւ գործեն: Այս իսկ պատճառով **բոլոր** դաշնակցականները պարտավոր են ենթարկվել կուսակցության կանոնագրին, որովհետեւ նրա մեջ խտացած է Ընդհանուր ժողովի կամքը, որ պարտադիր է բովանդակ Դաշնակցության համար: Իսկ Ընդհանուր ժողովն իր հերթին բոլոր դաշնակցական ընկերների կամքն է, որ արտահայտում է իր որոշումներով: Այսպիսով կանոնագրին

չենթարկվել՝ կնշանակե համայն Դաշնակցության կամքն անտեսել եւ բաղմահազար ընկերների հավանությունն անարգել: Բովանդակ Դաշնակցության ձայնն է, որ հնչում է կանոնագրի մեջ եւ ասում է մեր շարքերը մտնողին.- Բարեկա՛մ, մենք դաշնակցականներս ա՛յս կանոնագրով կապված ենք իրար հետ եւ ա՛յս կանոնագրին ենթակա են մեր բոլոր ընկերները, ժողովները եւ մարմինները. եթե փափագ ունես մեր շարքերը մտնելու եւ մեզ ընկեր դառնալու՝ պետք է պատվիդ վրա երդվես, որ ընդունում ես այս Կանոնագիրը եւ խոստանում ես ենթարկվել նրան, այլապես՝ ազատ ես: Եվ մի անգամ երդում տվողը՝ եթե պատիվ ունի, պարտավոր է ենթարկվել կանոնագրին եւ պաշտպանել նրա բարձր հեղինակությունը: Ահա թե ինչու դաշնակցական գիտակից մարմիններն ու ընկերները խստորեն կառչած են կանոնագրին եւ նախանձախնդիր են նրա պաշտպանության: Մարմինները կոչում ունին պահակ կենալու կանոնագրի պահպանության, որովհետեւ բովանդակ Դաշնակցության կամքն է խտացած նրա մեջ. թերացումը նրա հանդեպ՝ անրագանք է այդ կամքին: Կազմակերպության համար չկա գերագույն օրենք քան իր Կանոնագիրը, ինչպես չկա գերագույն ուղեցույց քան իր ծրագիրը: Կանոնագիրը բարձրագույն հեղինակությունն է կուսակցության համար. նա գերիշխան կամքն է բովանդակ դաշնակցության, նրան ենթակա են եւ պետք է ենթարկվին բոլոր ընկերները, ժողովներն ու մարմինները՝ սկսած խմբից մինչեւ Ընդհանուր Ժողով եւ խմբապետից մինչեւ Բյուրո: Կուսակցության կանոնական կյանքը այն դպրոցն է, ուր անգիտակից հայ աշխատավորը գործնապես դառնում է օրինապահ եւ իրավազգաց քաղաքացի: Այստեղ է, ուր նա հանգետս, տեւական մարզանքով՝ սովորում է իրավունք ճանաչել, պարտականություն կատարել, օրինապես հնազանդել եւ իրավապես ենթարկել: Ավանդական քմահաճույքի գերեզմանն է Կանոնագիրը եւ շարքերի իրավուսույց ղեկավարը: Նրա պաշտպանությունը բոլոր դաշնակցական ընկերների իրավունքն է, ինչպես նրան հնազանդելը՝ բոլորի պարտականությունը:

Այստեղ ես ընդհատում եմ իմ զրույցը: Դեռ ասելիք կունենամ խոսելու: Առայժմ այսքան:

1937, Մայիս

ԿՐԿԻՆ ՄԵՐ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ (*)

Բ

ԿԱՆՈՆԱԳԻՐ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Մեր կուսակցության չպատկանող մադիկ, տեսնելով մեր կարգապահ շարքերը գործի ժամանակ եւ մտածումի նույնությունը ժողովների եւ մամուլի մեջ՝ կարծում են թե Դաշնակցությունը մի բռնապետական կազմակերպություն է, որ կաշկանդում է իր անդամների մտածումն ու կամքը եւ պատրաստում է հլու եւ հնազանդ հետեւորդներ: Մենք գիտենք սակայն թե այդ կարծիքը մի թյուրիմացություն է եւ թերամտության արդյունք: Թյուրիմացության պատճառն այն է, որ այդպես կարծողները լավապես ծանոթ չեն մեր կուսակցության ոգուն ու կյանքին, իսկ թերամտությունը պարզ երեւում է, երբ տեսնում ենք թե նրանք ծանոթ չեն ընկերային երեւույթների գիտական մեկնության եւ քաղաքական պայքարների հոգեբանական կողմին, նրանց պատմական անցյալին եւ ներկա վիճակին: Լինելով անկազմակերպ մի զանգված՝ նրանք չեն կարողանում հասկանալ կազմակերպության արժեքն ու բնույթը. լինելով սահմանափակ կամ մասնակի իմացության տեր՝ նրանք չգիտեն, որ քաղաքական պայքարի մեջ հաջողելու համար անհրաժեշտ է մտածումների, բայց մանավանդ կամքերի տեւական համադրություն:

Մի կետ ճշմարիտ է. դաշնակցականը պետք է ընդունի իր կուսակցության Ծրագիրն ու Կանոնագիրը եւ երդումով հաստատե իր

* «Մեր Կանոնագիրը» կոչված պրակիս մեջ ես խոսած եմ մեր կանոնագրի դերի և հորինվածքի մասին, ինչպես նաեւ այն տարբերության մասին, որ ունին մեր կուսակցության անդամներն ու համակիրները: Այս պրակի մեջ ես շարունակում եմ իմ զրույցը ընկերների հետ: Լավ կլիներ, որ այս պրակից առաջ՝ ընթերցողը կարդացած լիներ առաջին տետրակը, բայց այս հանգամանքն արգելք չէ, որ կարդան այս պրակը: Մտածումներս թեև նույն նյութին են վերաբերում, բայց անջատ են իրարից: Սա մի գիտական հետազոտություն չէ և ոչ մի ուսվածք, այլ ընկերական մի պարզ զրույց է, ուր կարելի է լսել այս կամ այն կետից և ընդհատել ուզած ժամանակ:

համամտության ու հնազանդելու հոժարությունը: Բայց այս պարագան ո՛չ թե բռնություն է, այլ պայման, ինչպես թատրոնի տոմսը հաճախորդի համար. առանց տոմսի թատրոն մտնողը չի կարող բռնություն համարել, երբ դռնապանը նրան ներս չառնե: Ոչ ոք չի ստիպում, որ մեկն անպատճառ դաշնակցական լինի. բայց եթե փափագ ունի դաշնակցական դառնալու՝ **պետք** է ընդունե կուսակցության Ծրագիրն ու Կանոնագիրը եւ իր հոժարությունը երդումով հաստատե: Երբ մեկն իբր հավասար եւ նույնիրավ ընկեր անցնի կազմակերպության շարքերը այնուհետեւ նա լիովին ազատ է իր կարծիքը հայտնելու մեր կուսակցության թե՛ ծրագրի, թե՛ կանոնագրի, թե՛ գործի մասին. նա ազատ է խնդիր հարուցանել ծրագիրն ավելի որոշ ու լրիվ ձեւակերպելու, կանոնագրի այս կամ այն կետը զեղչելու կամ փոխելու, կուսակցության հերթական գործին այս կամ այն նոր ընթացքը տալու մասին. մի խոսքով նա իրավունք ունի իր կուսակցականի հանգամանքը լիովին արժեցնելու:

Բայց այստեղ մի կարեւոր հանգամանք կա, որ պետք է խստորեն ուշադրության առնել: Այո՛, ընկերն ազատ է իր կարծիքները հայտնելու, բայց ազատ չէ իր կարծիքին համեմատ գործելու: Պետք է նախ՝ որ իր կարծիքին ընկերների **մեծամասնությունը** համամիտ լինի. պետք է, որ այդ համամտությունը ընկերների մեծամասնության հավանությամբ դառնա ժողովական **որոշում** եւ պարտադրվի մարմիններին գործադրել այդ որոշումը. ա՛յս դեպքում միայն ընկերը կարող է իր կարծիքի համեմատ գործել: Սակայն այս դեպքում նա այլեւս ո՛չ թե իր կարծիքի համեմատ գործած կլինի, այլ ժողովական որոշման հնազանդած կլինի. ո՛չ միայն ինքն է, որ հնազանդած կլինի, այլեւ բոլոր այն ընկերները, որոնց վրա կտարածվի այդ որոշման պարտադրանքը: Այսպիսով անհատ ընկերների կարծիքը՝ մեծամասնության հավանությամբ՝ դառնում է վճիռ ու որոշում, եւ նրան պարտավոր են հնազանդել թե՛ նրանք, որ այդ կարծիքին էին եւ թե՛ նրանք, որ այդ կարծիքը չունեին եւ մնացին փոքրամասնություն: Ընկերների մեծամասնության կարծիքը կուսակցության կարծիքն է այն շրջանի համար, ուր այդ մասնավոր կարծիքը դարձած է վճիռ ու որոշում: Եթե խումբն է այդ վճիռն արձակողը եւ որոշումը կայացնողը՝ որոշումը պարտադիր

է խմբի **բոլոր** անդամների համար. եթե պատգամավորական ժողովն է վճիռ արձակած՝ այդ վճիռը պարտադիր է կոմիտեության **բոլոր** ընկերների համար ինչպես նաեւ կոմիտեի համար. եթե Շրջանային Ժողովն է որոշում հանած՝ այդ որոշման ենթակա են կենտրոնական կոմիտեն եւ նրա շրջանի **բոլոր** ընկերները՝ թեկուզ եւ շատերը համամիտ չլինեն այդ որոշման. եթե Հ. Յ. Դ. Ընդհանուր ժողովն է, որ մեծամասնությամբ հավանության տված է անհատ պատգամավորի անձնական կարծիքին՝ այդ կարծիքը պարտադիր է **բովանդակ** Դաշնակցության համար, ո՛չ միայն բոլոր ընկերների այլեւ բոլոր մարմինների համար ուր եւ գտնվին: Այսպիսով դաշնակցական ընկերներն ազատ են իրենց գործաձեւերն առաջադրելու, բայց քանի դեռ մեծամասնության հավանությունը չահած չեն, ո՛չ իրավունք ունին իրենց կարծիքը պարտադրելու եւ ո՛չ իրենց կարծիքի համեմատ գործելու: Դաշնակցականը պարտավոր է **որոշումների** հնազանդել եւ ո՛չ թե կարծիքների հետեւել, նա պարտավոր է ժողովական **վճիռները** իրագործել եւ ո՛չ թե իր կամ ուրիշի կամքը կատարել: Ոմանց այս վիճակը ծանր է թվում. բայց այդ նշան է, թե դեռ գիտակից եւ մարդված կուսակցական չեն, որովհետեւ այնտեղ ուր անհատական կարծիքն ու կամեցողությունը փորձում են գործ դառնալ առանց մեծամասնության օրինական համամտության, այնտեղ այլեւս կազմակերպություն չկա, այլ կա միայն անկարգ ամբոխ, ուր ամեն ոք իր քմայքին է հետեւում եւ շունը տիրոջ չի ճանաչում:

Կա եւ մի ուրիշ կարեւոր հանգամանք, որ նույնպես պետք է նկատի ունենան մարմիններն ու ընկերները: Մեր կանոնագրով միայն Հ. Յ. Դ. Ընդհանուր Ժողովն իրավունք ունի ծրագիր եւ Կանոնագիր փոխելու, ստորադաս մարմինները իրավասու չեն այս կետի մեջ: Նրանք կարող են միայն առաջարկներ անել Հ. Յ. Դ. Ընդհանուր Ժողովին, որ եթե մեծամասնությամբ համամիտ գտնվի՝ վճիռ կտա գործադրելու: Այստեղից ինքնին հետեւում է, որ ստորադաս մարմիններն ու ժողովները, ինչպես եւ անհատ ընկերները իրենց շրջանների մեջ՝ այնպիսի կարծիքներ եւ առաջարկներ կարող են բերել, որ չեն հակասում կուսակցության ծրագրին եւ կանոնագրին: Ու նաեւ՝ ստորադաս ժողովներն ու մարմինները

կարող են այնպիսի կարծիքներ եւ առաջարկներ ընդունել եւ վճիռ ու որոշում դարձնել, որ հակառակ չեն կուսակցության Ծրագիրն ու Կանոնագրին: Մարմիններն ու ժողովները գործում են կանոնագրի սահմանների մեջ. իրենց պարտականությունն է, այդ Կանոնագիրը պաշտպանել: Նրանք չեն կարող այնպիսի վճիռներ արձակել, որ հակասե այն կանոնագրին, որի պաշտպանությունը առավելապես նրանց է հանձնած ընկերների մեծամասնությունը: Մարմինը կարող է տարբեր տեսակետ ունենալ կանոնագրի այս կամ այն հոդվածի մասին, ինչպես նաեւ գործերի այս կամ այն ընթացքի մասին, բայց այդ տեսակետն ավելի չէ իր արժեքով, քան անհատ ընկերների անձնական կարծիքը: Քանի դեռ այդ տեսակետը Հ. Ց. Դ. Ընդհանուր Ժողովի հավանության չէ արժանացած՝ նա գործնական եւ գործադրական արժեք չունի: Այս տեսակ դեպքերում մարմին եւ սոսկական ընկեր պարտավոր են իրագործել Հ. Ց. Դ. Ընդհանուր Ժողովի որոշումները, ինչպես նաեւ իրենց գերադաս ժողովների վճիռները: Պետք չէ մոռանալ, որ բոլոր ընկերները իրենց պատվի վրա երդում են արած ընդունել կուսակցության Ծրագիրն ու Կանոնագիրը եւ հավատարիմ մնալ նրանց, հետեւապես նախքան որեւէ կարծիք հայտնելը եւ վճիռ արձակելը՝ ընկեր թե մարմին՝ պարտավոր են հաշիվ տալ իրենց թե մինչեւ ո՞ր աստիճան այդ կարծիքն ու վճիռը համաձայն են մեր կուսակցության ծրագրին եւ կանոնագրին: Մտքի ազատության ջերմ պաշտպան է Դաշնակցությունը, հետեւապես նա չի կարող բռնանալ կարծիքների վրա, բայց կազմակերպության իրավունքն է եւ սրբազան պարտականությունը պահանջել ընկերներից, որ հարգեն իրենց հանդիսավոր երդումը եւ անսաստողներին, իբր անհավատարիմ եւ անպատիվ տարրեր՝ վտարել իր շարքերից:

Այս կետի մեջ եւս պետք է տարբերություն դնել ազատ համամտության ու գործակցության եւ կուսակցական համամտության ու գործակցության միջեւ: Քաղաքական կուսակցությունը չի կարող խիստ կարգապահություն չպահանջել իր անդամներից եւ չպարտադրել, որ Կանոնագիրը գործադրվի տեւապես: Անկանոնական ընթացքը քայքայում կբերի կազմակերպության, հետեւապես կխորտակե այն ուժը, որի միջոցով մենք հույս ունինք մեր ծրագիրն իրա-

գործելու: Մինչդեռ կուսակցությունը իր անդամներից պահանջում է հնազանդություն իր Ծրագրին ու Կանոնագրին՝ մնացած հայության նա հորդորում է եւ համոզում, որ աջակցին իր գործին: Նա պատիժներ է տնօրինում այն ընկերների համար, որ հավատարիմ չեն մնում իր Ծրագրին եւ Կանոնագրին, մինչդեռ մնացած հայությունն ազատ է պատժից ու պատուհասից: Դրսի մարդիկ ազատ են մեզ համակրելու կամ հակակրելու, բարեկամ կամ թշնամի լինելու՝ մինչդեռ մեր ընկերը մեզ թշնամի լինել չի կարող եւ ոչ մեր գործին հակակիր, որովհետեւ դրսի մարդն ազատ է, իսկ մեր ընկերը կապված է իր երդումով: Դրսի մարդիկ կարող են ազդել մեր կուսակցության վրա այն չափով, որքան ընկերների մեծամասնությունը համամիտ գտնվին նրանց քարոզած գաղափարներին. այսպես են մեծ գիտունները, ընկերվարության նշանավոր առաջնորդները: Նրանք վարդապետում են բովանդակ մարդկության եւ նրանց հետեւում են բազմահազար ունկնդիրներ եւ ընթերցողներ: Նրանց գաղափարները թափանցում են եւ մեր մտավորական ընկերների մեջ, դառնում են համոզում, քարոզվում են մեր շարքերին, շահում են մեծամասնության համամտությունը եւ ժողովական կարգով դառնում են վճիռ ու որոշում եւ պարտադրվում բոլոր ընկերներին: Բայց նույնիսկ այստեղ՝ դուք տեսնում եք թե Կանոնագիրն է, որ հնար է տալիս դրսի ազդեցության մուտք գործելու մեր կուսակցության մեջ եւ ժողովական որոշումն է, որ այս կամ այն նոր տեսակետը, գործաձեւը կամ կազմակերպական եղանակը պարտադիր է դարձնում մեր շարքերի համար: Այսպես է, որ մեր կուսակցությունը չի լճանում եւ մեր ծրագիրն ու Կանոնագիրը չեն քարանում, այլ կյանքի զարկին զուգահեռ՝ տրոփում է եւ մեր կուսակցության զարկերակը եւ նա մնում է կենդանի եւ դիմացկուն՝ չնայած ահավոր փորձությունների: Նա գնում է ժամանակի հետ, որովհետեւ ընկերների մտածումը հետեւում է ժամանակի ընթացքին եւ առնում ու յուրացնում է դրսից այն ամենը, որ հարմար եւ պիտանի է համարում իր կենսունակության համար: Ընկերների վերափոխված եւ թարմացած մտածումը հորինում է տեսական ու գործնական նոր գաղափարներ, որ վարի խավերից բարձրանում են վեր եւ իրավասու ժողովների մեջ դառնում են վճիռ ու որոշում:

Այստեղից հետեւում է ինքնին, որ ծրագրի եւ կանոնագրի քննությունը ինչպես նաեւ մարմինների եւ ընկերների ընթացքի լավ ու վատ գնահատանքը կարող է եւ պետք է լինի կուսակցության ներսը, որ կարենա շահել մեծամասնության հավանությունը եւ վճիռ դառնալով՝ ազդե կազմակերպության կյանքի վրա: Դրսի աշխարհի համար մենք կանք եւ պետք է մնանք իբր միաձույլ եւ կարգապահ կուսակցություն, ուր իշխում է մի կամք, մեկ մտայնություն եւ որ ունի մի որոշ ընթացք: Իսկ մեր ժողովների մեջ մենք ո՛չ միայն իրավունք այլ մանավանդ պարտականություն ունենք մեր ծրագրային եւ կանոնագրային թերիները մատնանշելու եւ մեր մարմինների եւ ընկերների ընթացքը քննադատելու՝ լավագույն վճիռների եւ որոշումների հասնելու համար: Քննական ոգին չինարար է ներսը եւ քայքայիչ երբ դրսից է գործում: Դրսից մեզ ու մեր գործը կարող է քննադատել հակառակորդն ու թշնամին, նաեւ բարյացակամ համակիրը. իսկ մեր ընկերները պարտավոր են կազմակերպության ներսը քննադատել, եթե նպատակ ունին կուսակցության կյանքը բարելավելու եւ լավագույնին հասնելու:

ԿԱՆՈՆԱԿԱՆ ՇԵՂՈՒՄՆԵՐ

Մեր Կանոնագիրը նախատեսած է այնպիսի վճիռներ, երբ մարմինները՝ հանգամանքների բերումով՝ ստիպված են շեղելու գերադաս ժողովների որոշումներից: Այսպիսի վիճակներ շատ անգամ պատահած են մեր կուսակցության պատմության մեջ, երբ պատասխանատու մարմինները կենտրոնական վարիչ մարմնից հեռու լինելով եւ արտաքին արգելքների հանդիպելով նրանց հետ կապ պահելու՝ ստիպված են եղել կանխորոշված մի շարժում հետաձգելու իր ժամկետից կամ փոփոխելու որեւէ կանխատեսված ձեռնարկի բնույթն ու ծավալը: Կանոնագիրն իրավունք տալով այսպիսի շեղում անելու՝ անմիջապես կցում է թե մարմինն այդ շեղումը կարող է կատարել՝ սակայն «ի՛ր պատասխանատվությամբ»: Այս վերապահումը ցույց է տալիս, որ Կանոնագիրը նախատեսելով ստիպողական հարկը շեղելու գերադաս մարմինների որոշումներից, միաժամանակ այդ շեղումը կատարող մարմնին պատասխանատու է նկատում իր շեղումի համար. այսինքն՝ մարմինը իր շեղումը կատարելուց հետո՝ պետք է հաշիվ տա գերադաս ժողովին թե ինչ ստիպողական պատճառներ ունեցած է այդ շեղումը կատարելու: Սա նշանակում է թե Կանոնագիրը պահանջում է, որ մարմինները անպայման ենթարկվին գերադաս ժողովների որոշումներին եւ դուրս չգան նրանց գծած սահմանից, այլապես պատասխանատու են իրենց շեղ ընթացքի համար: Միմիայն ստիպողական պարագաների մեջ թույլ տրված է շեղում կատարել եւ մարմինը պարտավոր է իր քայլն արդարացնելու համար ապացուցել թե ստիպված էր այդպե՛ս վարվելու,- այլապես հանցավոր կնկատվի:

Կանոնագրի այդ կետը ոմանք օգտագործում են չարաչար իրենց քմահաճույքին ընթացք տալու համար եւ օգտվելով այն հանգամանքից, որ գերադաս ժողովները ուշ-ուշ են գումարվում՝ խելքին փչած մի վայրկյանին կամ ինչ-ինչ նկատումներով՝ շեղում են կանոնագրից եւ չեն իրագործում գերադաս մարմինների որոշումները: Անտեսելով Կանոնագիր եւ ժողովական որոշում՝ նրանք անտեսում են համայն դաշնակցության կամքը, մոռանալով թե այդ կանոնագրի հիման վրա եւ նրա շնորհիվ է, որ իրենք, որ պարզ շարքային ընկերներ են՝ դարձած են ղեկավար եւ պատասխանատու մարմին. նրանք մոռանում են, որ իրենց առաջին պարտականությունն է խստիվ պահպանել կանոնագրի տրամադրությունները եւ հնազանդել ժողովական որոշումներին՝ օրինակ դառնալու համար իրենց ենթակա ընկերներին եւ մարմիններին:

Այս կարգի երեւույթները ջլատում են կազմակերպությունը եւ խանգարում են կուսակցության կյանքի բնականոն եւ կանոնական ընթացքը. վերից եկած օրինակը վարակում է ստորադաս մարմիններն ու շարքերը: Մեր շարքերը տեսնելով թե Կանոնագիրն ու որոշումները չեն գործադրվում եւ շեղումները հաճախ են պատահում՝ թեեւ ստիպողական պարագաներ չկան՝ իրե՛նք նույնպես թերանում են իրենց պարտականության մեջ եւ ըմբոստանում են ավելի շատ, քանի որ կանոնագրին նվազ տեղյակ են եւ անձամբ նվազ մարզված կուսակցական. եւ մարմինները փոխանակ կուռ ու

կարգապահ շարքեր ստեղծելու եւ պահելու՝ մի օր իրենց դեմ տեսնում են ծառացած անկարգապահ ընկերներ եւ օրինազանց ստորադաս մարմիններ ու ժողովներ: Մի որոշ չափով դեռ կարելի է ներողամիտ աչքով դիտել շարքային ընկերների եւ խմբերի անկարգությունը. նրանք կարող են բավականաչափ հրահանգված չլինել. բայց անկարելի է անտարբեր մնալ մարմինների հանդեպ, որ իրենց անկանոնական որոշումներով եւ անհիմն շեղումներով սպառնում են քայքայել կազմակերպությունը. անհնարին է անտարբեր դիտել թե ինչպես այնտեղ, ուր Կանոնագիրն ու որոշումները պետք է իշխեին եւ ղեկավարեին՝ քմահաճույքն է սանձարձակ ձիավարում:

Այս կարգի երեւույթների հանդեպ իսկական դաշնակցականի պարտքն է ծառանալ եւ պահանջել, որ մարմինները հնազանդին դաշնակցության գերագույն կամքին, որ արտահայտված է կանոնագրի մեջ: Մարմինները չե՛ն Դաշնակցությունը եւ ոչ ընկերների այս կամ այն խումբը: Դաշնակցությունը մարմինների եւ խմբակցությունների սեփականությունը չէ: Դաշնակցությունը բոլոր ընկերների համագումարն է, որ իր կամքն արտահայտում է Հ. Ց. Դ. Ընդհանուր Ժողովների մեջ եւ խտացնում նրա որոշումների եւ կանոնագրի մեջ: Դաշնակցությունն ապրում ու գործում է իր կենդանի ընկերների կանոնական կապով եւ նահատակ ընկերների հմայքով: Դաշնակցության կամքի իրագործումը բոլոր ընկերների եւ մարմինների պարտականությունն է: Մարմիններն ընտրվում են Կանոնագիր ու ծրագիր պաշտպանելու եւ իրագործելու համար: Եթե նրանք թերանան այս պարտականությունն ու հանձնառությունը կատարել՝ դրանով իսկ կկորցնեն իրենց գոյության իրավունքը եւ ընկերների սրբազան պարտականությունն է հեռացնել ասպարեզից այդ տեսակ մարմինները, ստեղծելու համար ավելի պարկեշտ եւ նվազ քմահաճ մարմիններ, որ գիտակցեն կուսակցության գերագույն շահերը եւ քմահաճույքը չչփոթեն կանոնագրի հետ:

Պատմական չարաղետ իրադարձությանց հետեւանքով մեր ժողովուրդը ժառանգած է ստրկական հոգեբանություն, ուստի անիշխանական է եւ քմահաճ: Կարգն ու կանոնը նրան թվում է բռնություն թե՛ այն ժամանակ երբ վարիչ է, թե՛ այն ժամանակ երբ ենթակա է վարչության: Երբ նա վարիչ է՝ ձգտում է ո՛չ թե կարգի հետեւել եւ կանոնով գործել՝ այլ իր քմահաճույքն արժեցնել եւ բրտորեն բռնանալ, իսկ երբ ենթակա է՝ նա ճգնում է իր քմահաճույքով վարած տեսնել կուսակցության գործերը եւ ո՛չ թե կանոնագրով: Այս ապականոն ընթացքը անցյալում ստեղծած է եւ ներկայիս շարունակում է ստեղծել աղետալի կացություն թե՛ ազգային եւ թե՛ կուսակցական կյանքի մեջ, որ մեր քաղաքական տհասության հետեւանք է: Կարգի եւ կանոնի չհնազանդող անհատներն ու խմբակները հնազանդում են սակայն այս կամ այն անձին եւ խմբակին եւ ստեղծում են կողմնակցություն (թայֆա), իսկ անհատներն իրենց շուրջը համախմբում են ուրիշ անձեր ու խմբակներ՝ քայքայելով ա՛յն շարքերի կանոնական ընթացքը, որ կոչված են հայ աշխատավոր զանգվածին ապահովել ազատ եւ անկախ հայրենիք, այսինքն՝ մի իրավական եւ կանոնական կացություն: Թրքական, քրդական եւ պարսկական ցեղային հոգեբանությունը, որ դարերով ազդած է մեր ժողովրդի վրա, համառաբար արմատախիլ չի լինում նույնիսկ մեր շարքերի միջից, որով ժողովական որոշումները եւ կանոնագրի տրամադրությունները հաճախ ձեւական արժեք են ստանում եւ ընկերների եւ մարմինների քմահաճույքն աշխատում է գործել ու վարել այդ որոշումների եւ կանոնների սահմաններից դուրս եւ իր ուզածին պես մեկնել Կանոնագիր ու որոշում: Դժբախտաբար այս հետամնաց հոգեբանությունը դեռ բավական զորավոր է մեր ընկերական խավերի մեջ, ուր պայծառորեն չեն գիտակցում թե ո՞րն է կանոնական հակամարտությունը եւ ո՛րը քմահաճ ըմբռնությունը, որով շատ անգամ կազմալուծվում է ամեն գործ ու ձեռնարկ եւ ստեղծում է չփոթ ու դժգոհանք: Այս իսկ պատճառով կանոնագրի հիմնական ծանոթությունը դաշնակցականի առաջին պարտականությունն է, նրա պաշտպանությունը՝ իր սրբազան իրավունքն է եւ պարտքը, նրան հոժարակամ հնազանդելը՝ իր կուսակցական պատիվը եւ նրա անշեղ գործադրությունը եւ ուղիղ մեկնությունը գիտակից ընկերների եւ մարմինների առաջին հոգը:

Կուսակցական մարմիններն ու ընկերները պետք է ամուր կառ-

չեն մեր կանոնագրին, որ միակ ու գերագույն վարիչն է մեր կազմակերպական կյանքի եւ պիտի զգուշանան քմահաճ կարգադրություններ անել եւ որոշումներ հանել, բայց մանավանդ «պատասխանատվության» ապավինելով՝ խանգարեն կարգ ու կանոնը կուսակցության մեջ: Միշտ պետք է հիշել, որ կուսակցությունը տեւական է, իսկ մարմինները անցավոր եւ կուսակցությունը տեւական է իր ծրագրով եւ կանոնագրով: Պետք չէ երբեք մոռանալ, որ երեկվան շարքային պարզ ընկերները կանոնագրո՛վ է, որ այսօր դարձած են ղեկավար մարմին եւ որ այնքա՛ն ժամանակ կարող են վարիչ մնալ, որքան չեն աղոցում այն ճյուղը, որի վրա նստած են: Կանոնագիրն ստեղծված է շինարար աշխատանք կատարելու եւ ո՛չ թե քմահաճույք արժեցնելու համար:

Ո՞Վ Է ՄԵՐ ԸՆԿԵՐԸ

Այն մարդուն, որ ապրում ու գործում է ընթացիկ բարոյականի համեմատ՝ ասում են «պարկեշտ մարդ»: «Պարկեշտ ընկեր» կարող ենք ասել կուսակցության ա՛յն անդամին, որ իբր կուսակցական՝ գործում է կանոնագրի համեմատ, այսինքն՝ կատարում է այն պարտականությունը, որ կանոնագրով դրված է նրա վրա եւ օգտվում է այն իրավունքից, որ ունի նույն կանոնագրով: Բայց կուսակցության անդամները բազմաթիվ են եւ բազմազան բնավորության տեր եւ մեր կապերն իրար հետ բազմատեսակ են, իսկ մեր Կանոնագիրը մի վտիտ գրքույկ է եւ ոչ թե մի ստվար օրենսգիրք: Նա չի կարող եւ պետք չունի ամեն դեպք ու պատահար նախատեսելու եւ կանոնադրելու: Ջյուն շատ եկող երկիրների մեջ, ճամփաների քովերը բարձր ձողեր կան տնկված, որ ձմեռը, երբ ձյունը ծածկում է դաշտ ու փոս՝ ուղեւորին ցույց են տալիս ճամփի ուղղությունը՝ վեր մնալով ձյունի երեսից: Մեր կանոնագրի հոդվածները այդ երկար ձողերի պաշտոնն են կատարում, վեր մնալով մեր բազմատեսակ վարմունքներից: Նրանք մեզ մատնանշում են մեր վարմունքի ընդհանուր ուղղությունը, մնացածը թողնելով մեր սրտին ու կամքին եւ մեր ողջամտության: Կուսակցությունը պետություն

չէ: Պետությունը գործ ունի բազմատեսակ եւ տարամերժ տարրերի հետ եւ պարտավոր է նրանց անհամար բախումները կարգավորել իր օրենքներով: Մեր Կանոնագիրը բարյացակամ խորհրդատու է եւ խստապահանջ, բայց զուսպ վերահսկող. նա մատնանշում է մեր ընթացքը առանց մանրամասնության եւ անսաստողին պատուհասում է առանց մանրակրկիտ ձեւականության: Ընդարձակ բացեր թողած է նա գործադրողի կամքին, որ եթե չարյացկամ մեկն է եւ ձեւապաշտ բծախնդիր՝ կարող է բարյացակամ Կանոնագիրը դարձնել պատուհաս եւ անարժեք բախումները դատ ու վեճ: Կանոնագիրը համառոտ է եւ էական, որովհետեւ նրա մշակողն է Դաշնակցության ընտրանին եւ մշակած է ո՛չ թե հպատակների, այլ ընկերների համար: Դաշնակցությունը համակամ եւ համամիտ անձերի տեւական միություն է, որ երբեմն կարող են իրար հետ բախումներ ու գժտություն ունենալ, բայց երբեք չեն կարող տարամերժ եւ հակադիր լինել, եթե իրոք դաշնակցական են: Դաշնակցականներն ընկեր են իրար եւ ընկերական ոգին շատ հոճախ տեղ չի թողնում կանոնագրի միջամտության:

Այո՛, Դաշնակցության անդամներն ընկեր են իրար եւ իրար կանչում են «ընկե՛ր»: Բայց ի՞նչ սահմանների մեջ եւ մինչեւ ո՞ւր ընկեր են իրար: Բազմահազար մարդիկ այսօր դաշնակցական են աշխարհի չորս կողմը, որոնց ո՛չ տեսած ենք, ո՛չ ճանաչում ենք: Բայց բավական է, որ մեկը նրանցից իր մարմնի հաստատագիրը ձեռքին երեւա մեր մեջ, որ մենք նրան տարիների ընկեր նկատենք: Ի՞նչն է այս սրտագին վարմունքի դրդիչն ու պատճառը: Հաստատագրին նայելով՝ մենք իսկույն հասկանում ենք, որ նորեկը ժամանակին երդված է մեզ նման հավատարիմ լինել մեր ծրագրին ու կանոնագրին, հետեւապես նա մեր համամիտն է եւ գործակիցը: Այսպիսով մենք «ընկեր» ենք իրար կանոնագրի սահմանների մեջ եւ նրա՛ն ենք համարում «ընկեր», որ մեզ նման ձգտում է մեր ծրագրի իրագործման եւ հնազանդում է մեր կանոնագրին: Ընկերական կապն ու շփումը ամրապնդում են մեր կանոնագրական եւ ծրագրային սերտությունը եւ փոխադարձաբար՝ կանոնագրական եւ ծրագրային կապը առատ սնունդ է տալիս մեր ընկերական զգացումին: Այստեղից պարզ է ինքնին, որ մենք կարող ենք եւ պետք

է ընկերական կապ ու վերաբերում ունենանք մեզ ծանոթ եւ անծանոթ անձերի հետ միմիայն ա՛յն պատճառով, որ նրանք՝ ինչպես ասում են՝ մեր հավատի մարդիկ են, մեզ պես են մտածում ու գործում, այլապես ո՛չ մեկ հիմք կա ծանոթ եւ անծանոթ՝ բայց մեզ ոչ համամիտ եւ ոչ գործակից մարդկանց ընկեր նկատելու եւ նրանց հանդեպ ընկերական վերաբերում ունենալու: Երբ մեկն իմ ծրագիրը չի ընդունում, իմ կանոնագրին չի ենթարկվում, իմ կուսակցական աշխատանքին չի գործակցում՝ այլեւս ի՞նչ ընկեր: Նա արժանի չէ այդ մեծարժեք անունին: Նա կարող է լինել ու մնալ շատ հարգելի բարեկամ, շնորհալի խոսակից, ուրախ ըմպակից, պարկեշտ խաղակից, եւ այլն եւ այլն. բայց ընկե՞ր – բնա՛վ եւ երբե՛ք: Մեր ընկերը նա՛ է, որ նու՛յն նպատակին է ձգտում ինչ որ մենք եւ նու՛յն կանոնագրին է ենթարկվում ինչ որ ամենքս եւ հետեւապես ուխտած եւ երդված է մի՛շտ մեզ հետ լինել մեր թե՛ լայն եւ թե՛ նեղ օրին: Անկարգապահը մի որոշ չափով կորցնում է իր ընկերական արժանիքը, անպարտաճանաչը կորցնում է դրանից շատ ավելին. իր թերությանց մեջ համառողը դառնում է անվստահելի եւ անվստահության մեջ հարատեւողը՝ վտարելի, որ եւ կատարում է մարմինը խղճի հանդորրությամբ: Ընկերների եւ մարմինների պարտականությունն է ընկերաբար հորդորել, մեծի պես խրատել, փոքրվածի պես զգուշացնել, իբրեւ մարմին՝ ազդարարել եւ վերջապես իբր օրինապահ՝ պատժել ու վտարել: Ոչ մեկ մարմին իրավունք ունի պահանջելու ավելին քան Կանոնագիրն ու կանոնական որոշումը, բայց եւ ոչ մեկ ընկեր իրավունք ունի անսաստելու կանոնագրին եւ կանոնական որոշումներին: Ընկերոջ իրավունքն է ծառանալ ապականոն պահանջի դեմ, բայց եւ իր պարտականությունն է կատարել կանոնական պահանջը: Կանոնագիրը սանձն է թե՛ ընկերների, թե՛ մարմինների:

Մեր ընկերական հարաբերությունները ավելի ավանդական սովորույթով են ղեկավարվում, քան կանոնագրի հոդվածներով. բայց այսպես է այնքան ժամանակ, որքան կուսակցության անդամն ավելի ընկեր է զգում իրեն, քան իրավատեր անդամ: Երբ ընկերը չեղում է կանոնագրից՝ ընկերական կապերին ապավինելով եւ անկարգապահ քայլեր է անում՝ բարյացակամ վերաբերում հուսալով՝

մարմինների պարտականությունն է զգաստության հրավիրել այդ ընկերը, որ չեղումով չմոլորվի եւ ծուռ քայլերով՝ չսայթաքի գահավեժ: Ավանդական սովորույթին պետք է փոխարինե օրինապահ վերաբերումը այդ կարգի ընկերների հանդեպ, որովհետեւ անկարգապահ ընթացքը սառեցնում է ընկերական ջերմությունը եւ սովորույթի մեղմությունը դառնում է կարծր պաշտոնականություն: Սովորույթը հանդուրժումի այն չափն է, որ կարող է թույլ տալ մարմինը ընկերների հանդեպ. այդ հանդուրժումը սակայն չի կարող հասնել մինչեւ կանոնագրի անտեսումը: Սովորույթն այնքան արժեք ունի եւ հանդուրժելի է, որքան դեմ չէ մեր կանոնագրին, որին պատկանում է վերջին ու կտրուկ խոսքը երբ բախվում են իրար ընկեր ու մարմին: Ինչ-ինչ բարի դիտումներով մարմինը կարող է հետաձգել կանոնագրի միջամտությունը բախումների ժամանակ. նույն տեսակ բարի դիտումներով ընկերները կարող են առժամապես համբերատար գտնվել մարմինների թերացման հանդեպ, բայց մարմինները չեն կարող հանդուրժել մինչ այն աստիճան, որ կուսակցական բարքն ապականվի, ինչպես եւ ընկերներն իրավունք չունին համբերատար լինել մինչ այն աստիճան, որ զեղծում եւ ապօրինություն տիրապետեն: Սովորույթը չի կարող կանոնագրի տեղը գրավել: Սովորույթը ավանդության հմայքն ունի եւ գրավիչ է հաճախ, բայց նա անորոշ է ընդհանրապես եւ միտած է մեղկության: Ընկերական սերը շինարար է կանոնագրի սահմանների մեջ եւ քայքայիչ ու լույծ՝ երբ դուրս է գալիս այդ սահմաններից: Սովորույթը սպեղանի է մանր վերքերի, բայց փթախտը կանոնագրի դանակը կարող է բուժել: Վարիչ մարմինը պետք է ջերմ սեր ունենա դեպի ընկերները, բայց կանոնագրի հատու հարվածը միշտ պետք է պատրաստ լինի իր ձեռքին, որովհետեւ հին ու ճշմարիտ խոսք է թե. «Որ ոչ լուիցէ ունկամբ՝ լուիցէ թիկամբ»:*

Այսպիսով ընկերական սերն ու Կանոնագիրն իրար չեն ժխտում, այլ լրացնում են իրար. երբ չի ազդում առաջինը՝ միջամտում է երկրորդը: Բայց երրորդը պետք է միջամտե ա՛յն ժամանակ, երբ առաջինն անզոր է եւ ապարդյուն: Մարմինները առաջին

* Ով չի լսի ականջով՝ կլսի թիկունքով (ացսինքն ծեծով):

հերթին պարտավոր են հորդոր ու խրատ կիրարկել՝ ընկերական սերը գործի կանչելով եւ վերջին վայրկյանին կանոնագրի հեղինակության դիմեն, երբ հորդորն ու սերը անզոր գտնվին: Կանոնագրի գործադրության հետաձգումը մարմինների իրավունքն է եւ պարտականությունը, որովհետեւ նրանք գործ ունին ո՛չ թե հպատակների, այլ ընկերների հետ, բայց կանոնագրի անտեսումը հանուն ընկերության՝ նշան է մարմինների մեղկության: Վերջին հաշվով՝ Կանոնագիրն է, որ ղեկավարն է կուսակցության եւ ոչ ընկերական վերաբերումը կամ ավանդական սովորությը: Որքան թեթեւամիտ է այն մարմինը, որ բախումի պարագային անմիջապես քաշում է կանոնագրի սուրը, նույնքան մեղկ է այն մարմինը, որ ուր պետք է սուր քաշել՝ հորդոր ու խրատ է կիրարկում:

1937, Մայիս

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԸ 5

ՄԵՐ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ 92

ԿԱՆՈՆԱԳՐԻ ԴԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԵՋ 92

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԻՐՆ ՈՒ ԱՆԴԱՄԸ 95

ՄԵՐ ԿԱՆՈՆԱԳՐԻ ՀՈՐԻՆՎԱԾՔԸ 99

ԿՐԿԻՆ ՄԵՐ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ 105

ԿԱՆՈՆԱԳԻՐ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ 105

ԿԱՆՈՆԱԿԱՆ ՇԵՂՈՒՄՆԵՐ 110

ՈՐՎ Է ՄԵՐ ԸՆԿԵՐԸ 114

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆ
(Ն. ՀԱՆԳՈՒՅՑ)

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Տպաքանակը՝ 5000: